«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №1

«25» օգոստոսի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի ընտրություն և կազմի հաստատում:
(զեկուցող՝ Ա.Առստամյան)
3. 2024-2025 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփում և նոր ուսումնական տարվա անելիքներն ու խնդիրները:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
4. 9-րդ դասարանում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Ա.Առստամյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանման քննարկում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների քննարկում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
7. Նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
8. Հումանիտար առարկաներից տրվող գրավոր աշխատանքների, լաբորատոր աշխատանքների, գործնական աշխատանքների և թեմաների ամփոփումների քանակի ու տեսակների քննարկում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
9. Ըստ նոր ՀՊՉ-ների 5-9-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա.Առստամյան)
10. Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածություն:
(զեկուցող՝ Ա.Առստամյան)
11. 2025-2026 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
12. Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման նախնական քննարկում:
(զեկուցող՝ Ա.Առստամյան)
13. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացում:
(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 1-ին նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի ընտրության և կազմի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը առաջարկեց փոփոխություններ չկատարել և Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի պաշտոնում շարունակել թողնել Մերի Դանիելյանին՝ հաշվի առնելով նրա մասնագիտական փորձառությունն ու արդյունավետ գործունեությունը: Նա նշեց, որ մեթոդմիավորման կազմում ընդգրկված են այնպիսի կարևոր առարկաներ, ինչպիսիք են՝ «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայաստանի պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հասարակագիտություն», «Իմ հայրենիքը», «Իմ հայրենիքը և աշխարհը»:

Զեկուցողի խոսքով՝ այս առարկաները համակողմանիորեն նպաստում են սովորողների ազգային ինքնագիտակցության, պատմական հիշողության, լեզվամտածողության և քաղաքացիական պատասխանատվության ձևավորմանը: Հաշվի առնելով մեթոդմիավորման դերը աշակերտների հումանիտար կրթության մակարդակի բարձրացման գործում՝ կարևոր է ապահովել աշխատանքի շարունակականություն և համակարգվածություն, ինչը, ըստ զեկուցողի, լավագույնս կարող է իրականացվել Մերի Դանիելյանի ղեկավարությամբ:

Արտահայտվեցին՝ Ս.Հարությունյանը, Շ.Հովսեփյանը:

Արտահայտվողները միասնական կարծիք հայտնեցին, որ նպատակահարմար է Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի պաշտոնում փոփոխություն չկատարել: Նրանք առաջարկեցին 2025-2026 ուսումնական տարում ևս հաստատել Մերի Դանիելյանի թեկնածությունը՝ ընդգծելով նրա նախորդ ուսումնական տարում իրականացրած հետևողական և արդյունավետ աշխատանքը: Մասնավորապես նշվեց, որ նրա նախաձեռնողականությունն ու համակարգող կարողությունները զգալիորեն նպաստել են մեթոդմիավորման գործունեության արդյունավետ կազմակերպմանը, առարկայական ծրագրերի որակյալ իրականացմանը և ուսուցիչների միջև համագործակցության ամրապնդմանը:

Այս հանգամանքները հիմք տվեցին ելույթ ունեցողներին վստահությամբ առաջարկել Մերի Դանիելյանի թեկնածությունը նաև առաջիկա ուսումնական տարվա համար:

Որոշեցին՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ ընտրել Մերի Դանիելյանին և հաստատել մեթոդմիավորման նոր կազմը՝ ընդգրկելով «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն», «Հայաստանի պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հասարակագիտություն», «Իմ հայրենիքը», «Իմ հայրենիքը և աշխարհը» առարկաները դասավանդող ուսուցիչներին:

Լսեցին 3. 2024-2025 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփման և նոր ուսումնական տարվա անելիքների ու խնդիրների մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը անդրադարձավ 2024-2025 ուսումնական տարում մեթոդմիավորման կողմից իրականացված աշխատանքների կարևորությանը՝

շեշտելով դրանց ազդեցությունը ուսումնական գործընթացի որակի բարձրացման վրա։ Նա նշեց, որ անցնող ուսումնական տարին առանձնացավ նորամուծություններով և ստեղծագործական մոտեցումներով։ Մասնավորապես կազմակերպվեցին էսսեների և շարադրությունների մրցույթներ, ընթերցանության մրցույթներ, փնջային գրավոր աշխատանքներ, ինչպես նաև QR կոդերով իրականացված նորարարական առաջադրանքներ, որոնք խթանեցին սովորողների հետաքրքրասիրությունը և ակտիվ մասնակցությունը։

Զեկուցողի խոսքով՝ մեթոդմիավորման անդամների կողմից կազմակերպվել է արդյունավետ քննարկում, որի ընթացքում վերլուծվել են տարվա ընթացքում կատարված աշխատանքները, առանձնացվել են ձեռքբերումները, սակայն անդրադարձ է կատարվել նաև առաջացած դժվարություններին ու բացթողումներին։ Այս քննարկումը հնարավորություն տվեց համատեղ մտածելու՝ ինչպես առավել արդյունավետ կազմակերպել առաջիկա ուսումնական տարվա գործունեությունը։

Միաժամանակ ուշադրության կենտրոնում դրվեցին նոր ուսումնական տարվա անելիքները, առաջիկայում սպասվող փոփոխությունները և դրանց իրականացման մեխանիզմները։ Զեկուցողը կարևորեց համագործակցային մոտեցումը և ընդգծեց, որ համատեղ աշխատանքի շնորհիվ հնարավոր կլինի ապահովել ծրագրերի հաջող իրականացում և ուսումնական գործընթացի շարունակական կատարելագործում։

Արտահայտվեցին՝ Ռ.Խաչատրյանը, Ա.Սարգիսջանյանը։

Արտահայտվողները, հիմք ընդունելով հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի ներկայացրած հաշվետվությունը, ինչպես նաև 2024-2025 ուսումնական տարում մեթոդմիավորման կողմից իրականացված բազմաբովանդակ աշխատանքները, առաջարկեցին մեթոդմիավորման գործունեությունը գնահատել «լավ»։ Նշվեց, որ տարվա ընթացքում իրականացվել են մի շարք նախաձեռնություններ և միջոցառումներ, որոնք նպաստել են ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը։ Միևնույն ժամանակ արձանագրվեցին որոշ բացթողումներ ու դժվարություններ, որոնք, սակայն, չեն նվազեցնում կատարված աշխատանքի արժեքը, այլ ծառայելու են որպես փորձ՝ հետագա գործունեության կատարելագործման համար։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 2024-2025 ուսումնական տարվա կատարողականը:

Լսեցին 4. 9-րդ դասարանում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի քննարկում:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ 2025-2026 ուսումնական տարվանից 9-րդ դասարանում ևս ուսուցումն իրականացվելու է նոր ՀՊՉ-ների համաձայն։ Այդ հանգամանքը, ըստ նրա, առանձնահատուկ կարևորություն է ստանում, քանի որ փոփոխությունները պահանջում են նախօրոք մանրակրկիտ պատրաստություն։ Այդ նպատակով անհրաժեշտ է դեռ ուսումնական գործընթացը սկսելուց առաջ կազմակերպել համապարփակ քննարկումներ՝ պարզաբանելու առաջացած հարցերը, ուսումնասիրելու և վերլուծելու երաշխավորված դասագրքերն ու ծրագրերը։ Զեկուցողի համոզմամբ՝ նման քայլերը կնպաստեն հնարավոր խնդիրներից խուսափելուն և թույլ կտան նոր ծրագրերի ներդրումը իրականացնել առավել կազմակերպված ու արդյունավետ։

Արտահայտվեցին՝ Ս. Հարությունյանը, Ռ.Խաչատրյանը։

Արտահայտվողները կարևորեցին նախորդ ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքներն ու դրանց արդյունքների ամփոփումը, որոնք կապված էին նոր ՀՊՉ-ների գործընթացի իրականացման հետ՝ 5-8-րդ

դասարաններում: Նշվեց, որ ձեռքբերումները կարևոր հիմք են առաջիկա ուսումնական տարվա արդյունավետ կազմակերպման համար:
Սոնա Հարությունյանը շեշտեց գնահատման ձևերի փոփոխության նշանակությունը՝ ընդգծելով, որ անհրաժեշտ է առավել ուշադրություն դարձնել ամփոփումների կազմակերպմանը և գնահատման բոլոր տեսակների ճիշտ ու տեղին կիրառմանը:
Ռուզաննա Խաչատրյանը առանձնացրեց էսսեներ գրելու ուղղությամբ աշխատանքների կարևորությունը՝ նշելով, որ դրանք նպաստում են սովորողների ինքնարտահայտման կարողությունների զարգացմանը և քննադատական մտածողության ձևավորմանը:
Քննարկման ընթացքում անդրադարձ եղավ նաև նոր և երաշխավորված դասագրքերի ուսումնասիրությանն ու դրանց արդյունավետ կիրառման հարցերին:
Միաժամանակ կարևորվեց նախապես իրականացվելիք աշխատանքների կազմակերպումը՝ կապված քննությունների կարգի փոփոխությունների հետ, որպեսզի ուսուցիչները և սովորողները պատշաճ կերպով պատրաստված լինեն առաջիկա փոփոխություններին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 9-րդ դասարանում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի մասին քննարկման արդյունքները:

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանման քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա վերջին նիստի ընթացքում ներկայացվել և քննարկվել է Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների նախնական ժամաբաժանումը: Նա կարևորեց այս գործընթացը՝ ընդգծելով, որ ժամաբաժանման ճիշտ և հավասարակշռված բաշխումը հանդիսանում է արդյունավետ ուսումնական գործընթացի կազմակերպման կարևոր նախապայման: Քննարկման ընթացքում դիտարկվել են առկա առաջարկները, լսվել մեթոդմիավորման անդամների առաջարկությունները և ամփոփվել հիմնական նկատառումները՝ հետագա աշխատանքներում հնարավոր փոփոխություններ կատարելու նպատակով:

Արտահայտվեցին՝ Ա.Առստամյանը, Է.Սարգսյանը, Շ.Հովսեփյանը:

Արաքսյա Առստամյանը մանրամասն ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնական պլանը, մանրամասն ներկայացրեց առարկայացանկը, շաբաթական ժամերի առավելագույն քանակը: Արաքսյա Առստամյանը նաև խոսեց դպրոցական և անհատական (ընտրովի) բաղադրիչների տրամադրման մասին, առաջարկեց դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 1-ին դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Կերպարվեստ» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ:
- 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 2 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ:
- 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ:
- 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու»

առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։

- 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
- 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 6 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
- 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ։
- 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ։
- 9-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ։

Արաքսյա Առստամյանն առաջարկեց նաև 1-9-րդ դասարաններում անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 1-ին դասարանում անհատական (դպրոցական) բաղադրիչից ժամաքանակ չի հատկացվում
- 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 4-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 5-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 1-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
- 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
- 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
    - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1

դասաժամ)։
- նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

- 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 9-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

Որոշեցին՝ 1. Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների ժամաբաժանումը (կցվում է)։

2. Դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
- 1-ին դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Կերպարվեստ» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
- 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 2 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
- 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
- 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
- 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
- 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 6 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1

դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։

- 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ։
- 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ։
- 9-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ։

3. Անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
   - 1-ին դասարանում անհատական (դպրոցական) բաղադրիչից ժամաքանակ չի հատկացվում
   - 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 4-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 5-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 1-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
   - 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
   - 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
     - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
     - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
   - 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
     - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1

դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
    - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 9-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
    - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
    - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

Լսեցին 6. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահի կողմից մշակված 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանը՝ ընդգծելով դրանով նախատեսված հիմնական ուղղությունները և իրականացվելիք աշխատանքները։ Նա նշեց, որ առարկայական օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են հաստատված չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան՝ ապահովելով ուսումնական գործընթացի համակարգված ու նպատակային կազմակերպումը։

Զեկուցողի խոսքով՝ արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները ևս պատրաստվել են յուրաքանչյուր ուսուցչի կողմից՝ հիմք ընդունելով երաշխավորված ծրագրերը։ Սա հնարավորություն է տալիս արտադասարանական աշխատանքը դարձնել առավել արդյունավետ, նպաստել սովորողների հետաքրքրությունների զարգացմանը և հումանիտար կրթական բաղադրիչի խորացմանը։

Արտահայտվեցին՝ Ա.Առստամյանը, Լ.Սարգսյանը, Ս.Հարությունյանը։

Արտահայտվողները կարևորեցին, որ առարկայական օրացուցային-թեմատիկ պլանները մշակվել են՝ լիովին հիմնվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված ծրագրերի վրա։ Միաժամանակ պլանները ձևավորվել են դպրոցում կիրառվող և հաստատված դասագրքերի հիման վրա՝ ապահովելով դրանց համապատասխանությունը նոր չափորոշչային պահանջներին։

Նշվեց նաև, որ պլանների մշակման ընթացքում ղեկավարվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի օգոստոսի 14-ի N 64-Ն հրամանով, որով սահմանվում է հանրակրթական ուսումնական հաստատություններում կիրառվող փաստաթղթերի ցանկը։

Արտահայտվողների գնահատմամբ՝ նման մոտեցումը նպաստում է ուսումնական գործընթացի օրինականության, համակարգվածության և միատեսակության ապահովմանը, ինչպես նաև ձևավորում է հստակ մեթոդական դաշտ ուսուցիչների գործունեության համար՝ բարձրացնելով ծրագրային աշխատանքի արդյունավետությունն ու որակը։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել Հումանիտար առարկաների մեթոդմիավորման

նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, առարկայական ծրագրերը, օրացուցային-թեմատիկ պլանները, առարկայական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները և ուսումնական պլանը։

Լսեցին 7. Նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը կարևորեց նախորդ տարիների ընթացքում ձեռք բերված նախագծային աշխատանքի կազմակերպման փորձը և ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարում նախագծային աշխատանքների իրականացման կարգն ու կատարված փոփոխությունները։ Նա նշեց, որ մասնախմբի անդամների կողմից 7-9-րդ դասարանների համար արդեն ներկայացվել են համապատասխան թեմաներ՝ համաձայն հաստատված կարգի։

Զեկուցողի խոսքով՝ նախագծային աշխատանքներին այս ուսումնական տարում կարող են մասնակցել նվազագույնը 3 և առավելագույնը 7 աշակերտ, ինչը հնարավորություն է տալիս ապահովել խմբային համագործակցություն և արդյունավետ մասնակցություն։ Աշակերտական խմբերը ձևավորվել են՝ առաջնորդվելով նախապես հրապարակված թեմաներով. ուսուցիչները դրանք ուղարկել են աշակերտական չաթերի միջոցով, և արդեն իսկ կատարվել է խմբերի ձևավորում, թեմաների և ղեկավարների ընտրություն։

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց նաև Հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման և նախագծային աշխատանքների իրականացման կարգը։ Նա առաջարկեց նախագծային աշխատանքների պաշտպանությունները կազմակերպել առարկայական հանձնաժողովների ձևաչափով, որոնց կազմում ընդգրկվեն տվյալ առարկայի կամ հարակից առարկաների ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը, ինչպես նաև տնօրենի տեղակալը։

Վերջում զեկուցողը ներկայացրեց նաև նախագծային աշխատանքների գնահատման կարգը, որը սահմանված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված նախագծային ուսուցման հայեցակարգում և ուսուցիչների վերապատրաստման մոդուլի հաստատման մասին հրամանով՝ ընդգծելով գնահատման չափորոշիչների հստակությունը և հավասարության ապահովման կարևորությունը։

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Ա. Սարգիսջանյանը, Ռ. Խաչատրյանը։

Արտահայտվողները կարևորեցին այն պահանջները, որոնք սահմանված են հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման, գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգի վերաբերյալ։ Նրանք ընդգծեցին, որ այս պահանջների պատշաճ կատարումը հնարավորություն է տալիս ապահովել կրթական գործընթացի բազմազանությունը և սովորողների ակտիվ մասնակցությունը։

Միաժամանակ ընդգծվեց նախագծային աշխատանքների կարգում կատարված փոփոխությունների կարևորությունը։ Նշվեց, որ փոփոխությունները նպատակ ունեն առավել արդյունավետ կազմակերպելու սովորողների հետազոտական և ստեղծագործական գործունեությունը, խթանելու նրանց ինքնուրույնությունը և թիմային աշխատանքի հմտությունների զարգացումը, ինչն ապահովում է ուսումնական գործընթացի որակի և արդյունավետության բարձրացում։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել նախագծային աշխատանքների թեմաները, պլանները, թեմատիկ պլանները, ղեկավարներին, մատյանները և հանձնաժողովների կազմը (կցվում է)։

Լսեցին 8. Հումանիտար առարկաներից տրվող գրավոր աշխատանքների, լաբորատոր աշխատանքների, գործնական աշխատանքների և թեմաների ամփոփումների քանակի ու տեսակների քննարկում։

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ընդգծեց գործնական և գրավոր աշխատանքների նշանակությունը ուսումնական գործընթացում և դրանց անաչառ, արդարացված անցկացման անհրաժեշտությունը։ Նա հիշեցրեց, որ նախընտրելի է, որպեսզի գրավոր աշխատանքների քանակը համընկնի առարկայի շաբաթական ժամաքանակին՝ կիսամյակի կտրվածքով։ Միաժամանակ զեկուցողը շեշտեց, որ հնարավոր է կատարել որոշակի փոփոխություններ գրավորների քանակում՝ հիմնվելով ուսուցիչների հիմնավորված առաջարկությունների վրա։

Ավելացրեց, որ յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում մեկական գործնական կամ լաբորատոր աշխատանք անցկացնելը պարտադիր է, ինչը նպաստում է ուսուցողական գործընթացի ամբողջականությանը և սովորողների հմտությունների ու գիտելիքների ամրապնդմանը։

Արտահայտվեցին՝ Ս.Հարությունյանը, Է.Սարգսյանը, Ա.Առստամյանը։

Արտահայտվողներն առաջարկեցին «Պատմություն» և «Գրականություն» առարկաներից տրվող գրավոր աշխատանքների քանակի և թվի փոփոխություն կատարել՝ ըստ անհրաժեշտության։

Արաքսյա Առստամյանը նշեց, որ ինչպես նախորդ ուսումնական տարվա ընթացքում, 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում նույնպես 1-9-րդ դասարանների բոլոր գրավոր աշխատանքները, գործնական աշխատանքները, հայտորոշիչ և ձևավորող թեստերը պետք է հաստատվեն մեթոդական միավորումների կողմից, որից հետո միայն կկիրառվեն։ Ինչը նաև հիմնավորեց այն հանգամանքով, որ զուգահեռ դասարաններում նույն առարկաներից աշակերտները գրեն նույնաբովանդակ աշխատանքներ, որպեսզի նաև ըստ դասարանների միջին որակական արժեքները նույնպես հնարավոր լինի պատշաճ կերպով հաշվարկել։

Որոշեցին՝ Ապահովել ուսումնական տարվա ընթացքում սահմանված գրավոր աշխատանքների, լաբորատոր աշխատանքների, գործնական աշխատանքների և թեմաների ամփոփումների քանակն ու բազմազանությունը՝ համապատասխան հավելվածի, ինչպես նաև 2025-2026 ուսումնական տարվա բոլոր առարկաներից տրվող գրավոր աշխատանքները, գործնական աշխատանքները, հայտորոշիչ և ձևավորող թեստերը հաստատել մեթոդմիավորման կողմից, որից հետո կիրառել (կցվում է)։

Լսեցին 9. Ըստ նոր ՀՊՉ-ների 5-9-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ անհրաժեշտ է հիմք ընդունել Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները և 2025-2026 ուսումնական տարում նոր ՀՊՉ-ներով դասավանդվող դասարաններում աշակերտների գնահատումն իրականացնել այդ չափանիշներին համապատասխան։ Ըստ այդ չափանիշների 2025-2026 ուսումնական տարում 5-9-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող)։

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը։ Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.

2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից: Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.
1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:
Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈւՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) T-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն

34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 40-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը

Արտահայտվողը նշեց, որ նախորդ ուսումնական տարում նոր ՀՊՉ-ներով ուսուցանվող դասարաններում կիրառված գնահատման վերոնշյալ չափանիշները արդյունավետ են եղել և արդարացրել են իրենց: Նա առաջարկեց, որ այս ուսումնական տարվա ընթացքում նույնպես ամեն դասարանում ձեռքի տակ պահվեն Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները, որպեսզի ուսուցիչները կարողանան անհրաժեշտության դեպքում նրանցից որոշ փոփոխություններ կատարել՝ պահպանելով համապատասխան սկզբունքները:
Արտահայտվողը նաև առաջարկեց հավանության արժանացնել առաջարկվող ձևերն ու մեթոդները և ընդգծեց, որ այս հարցը անհրաժեշտ է քննարկել նաև մանկավարժական խորհրդի նիստում, ինչի միջոցով ապահովվելու է գնահատման միասնական մոտեցում և նոր մեթոդների արդյունավետ կիրառում ուսումնական գործընթացում:

Որոշեցին՝ Հաստատել նոր ՀՊՉ-ների համաձայն 5-9-րդ դասարաններում գնահատման չափանիշները՝ հիմք ընդունելով Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները, ինչպես նաև Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների համար կիրառել հետևյալ գնահատման ձևերը, մեթոդները, հնարները.

2025-2026 ուսումնական տարում 5-9-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.
1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.

3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից: Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.
1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:
Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈւՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) T-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»

35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 40-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

Լսեցին 10.

Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածության մասին հարցը:
(զեկուցող՝ Ա.Առստամյան)
Զեկուցողը նշեց, որ երկարօրյա ուսուցումն իրականացվում է 2020 հոկտեմբերի 13-ի №38-Ն որոշման համաձայն, որով հաստատվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը: Համապատասխան այդ կարգի երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝

- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝
  1) սովորողի ծնողի դիմումի հիման վրա՝
  ա. ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու.
  բ. դասապատրաստումներին աջակցելու.
  գ. ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակներով:
- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է նաև հանրակրթության պետական չափորոշչի (այսուհետ՝ ՀՊՉ) ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների ներգրավվածության վրա, շեշտեց, որ համապատասխան կարգի ՀՊՉ-ի ներդրման ժամանակացույցով սահմանված դասարաններում ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան սովորողի ուսումնառության ցածր արդյունքների դեպքում առարկայական ծրագրի յուրացումը ապահովելու նպատակով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ սովորողի դասղեկը երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար հիմնավորված գրավոր առաջարկով դիմում է տնօրենին՝
1) այն դասարաններում, որտեղ սովորողների որևէ առարկայի առաջադիմության գնահատումն իրականացվում է բնութագրող գնահատման

արդյունքում՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին ձևավորող գնահատման հիման վրա արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու դեպքում.

2) այն դասարաններում, որտեղ իրականացվում է միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից ուսումնառության փուլի (թեմա, ենթաթեմա, թեմաներ) ավարտին ձևավորող գնահատման արդյունքում արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու, ինչպես նաև ամփոփիչ գնահատման արդյունքում 1-3 միավոր գնահատվելու դեպքում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ պետք է դիտարկել հետ մնացող աշակերտներին, ուսումնառության ընթացքում ձևավորող գնահատումներից, ինչպես նաև բանավոր հարցումներից ցածր արդյունքներ գրանցած աշակերտներին ընդգրկել երկարօրյա խմբերում:

Որոշեցին՝ Դպրոցում երկարօրյա ուսուցումն իրականացնել Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի համաձայն:

Լսեցին 11. 2025-2026 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգը և 2025-2026 ուսումնական տարում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվելիք հիմնական աշխատանքները: Նա ներկայացրեց նաև այդ աշակերտների համար կիրառվող պարզեցված մեթոդները և կոնկրետ օրինակներով ցուցադրեց ԱՈՒՊ-ների լրացման ընթացակարգերը՝ ընդգծելով դրանց նշանակությունը ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար:

Զեկուցողը տեղեկացրեց, որ 2025-2026 ուսումնական տարվա սկզբին դպրոցում առկա են 18 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ, որոնց հետ աշխատանքը անհրաժեշտ է իրականացնել հատուկ սահմանված կարգով՝ հաշվի առնելով անհատական հնարավորությունները և կրթական պահանջները: Նա առանձին-առանձին անդրադարձ կատարեց յուրաքանչյուր աշակերտի հետ իրականացվող աշխատանքներին և ներկայացրեց նրանց հետ աշխատանքների մանրամասն գրաֆիկը, ինչը հնարավորություն է տալիս համակարգված և արդյունավետ կազմակերպել ուսուցումը՝ պահպանելով անհատական մոտեցման սկզբունքը:

Արտահայտվեցին՝ Արաքսյա Առստամյանը

Արաքսյա Առստամյանը նշեց, որ դպրոցում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվող աշխատանքները միշտ պատշաճ կերպով են կազմակերպվել, և նախորդ ուսումնական տարին ևս բացառություն չէ: Նա առանձնացրեց ծանր խնդրով աշակերտների հետ իրականացվող աշխատանքների առանձնահատուկ նշանակությունը, քանի որ դրանք պահանջում են հատուկ մոտեցում և հմտություններ:

Արտահայտվողը կարևորեց, որ ԱՈՒՊ-ները լրացվեն նոր կարգի համապատասխանությամբ, իսկ պարզեցումները կատարվեն՝ հիմք ընդունելով ԿԱՊԿՈՒ աշակերտների անհատական կարողություններն ու ընդունակությունները:

Արաքսյա Առստամյանը նաև շեշտեց դիտարկման թերթիկների լրացման կարևորությունը, ինչպես նաև ուսուցչի օգնականների և հատուկ մանկավարժի հետ համատեղ ու համագործակցային աշխատանքը, որը նպաստում է արդյունավետ և նպատակային ուսուցման ապահովմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգը, աշխատանքներն ու պարզեցումներն իրականացնել սահմանված պահանջներին համապատասխան, սահմանված կարգով կիրառել դիտարկման թերթիկները:

Լսեցին 12. Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ ցուցադրական դասերի և դաս-միջոցառումների կազմակերպումը անհրաժեշտ է, քանի որ այս դասերի տեսակները ծառայում են որպես օրինակելի ուսուցում, որտեղ հաշվի են առնվում դասապրոցեսի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր մանրուքները և մեթոդական կանոնները: Նա ընդգծեց, որ բաց դասերի կազմակերպումը նույնպես կարևորվում է, քանի որ դա հնարավորություն է տալիս ուսուցիչների ձեռք բերած դրական փորձը տարածել և մասայականացնել:

Զեկուցողը ներկայացրեց նաև բաց դասերի, բաց դաս-միջոցառումների և այլ միջոցառումների ժամանակացույցի նախագիծը, որը նախատեսված է ուսումնական տարվա ընթացքում դրանց արդյունավետ և համակարգված իրականացման համար:

Արտահայտվեցին՝ Մ.Դանիելյանը, Շ.Հովսեփյանը:

Արտահայտվողները առաջարկեցին, որ ինչպես նախորդ ուսումնական տարիների ընթացքում, այնպես էլ 2025-2026 ուսումնական տարում հետևել նույն սկզբունքներին և իրականացնել բաց դասերը և բաց դաս-միջոցառումները ըստ նախապես սահմանված ժամանակացույցի: Նրանք շեշտեցին, որ այդ մոտեցումը հնարավորություն է տալիս ապահովելու դասերի կազմակերպվածությունը, բաց դասերի և միջոցառումների արդյունավետությունը, ինչպես նաև ուսուցիչների փորձի փոխանակումն ու մասնագիտական առաջընթացը:

Որոշեցին՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից անցկացնել բաց դասեր, բաց դաս-դաս միջոցառումներ՝ ժամանակացույցի համաձայն, որը կցվում է:

Լսեցին 13. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 2021-2022 ուսումնական տարուց սկսած դպրոցում դասալսումները, այդ թվում նաև փոխադարձ դասալսումները, արձանագրվում են հատուկ արձանագրությունների թղթերում, որտեղ սահմանված են համապատասխան չափանիշներ, որոնց հիման վրա գնահատվում են դասալսվողները:

Արաքսյա Առստամյանը հավելեց, որ արձանագրության ձևանմուշը լիովին համապատասխանում է կարգի պահանջներին: Նա նաև առաջարկեց, որ 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացվեն նվազագույնը 3 դասալսում, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներ՝ դպրոցի ձևանմուշի պահանջներին համապատասխան: Զեկուցողը ընդգծեց, որ իրականացված դասալսումները պետք է ապահովված արձանագրվեն համապատասխան ձևանմուշներում, իսկ կիսամյակի ավարտին դրանք անհրաժեշտ է սահմանված կարգով արխիվացնել:

Արտահայտվեցին՝ Շ. Հովսեփյանը, Մ. Դանիելյանը:

Արտահայտվողները նշեցին, որ նախորդ երկու ուսումնական տարիների ընթացքում ձեռք բերված փորձը ցուցաբերել է դրական արդյունքներ և արդյունավետ է եղել: Հաշվի առնելով դա, նրանք նպատակահարմար համարեցին, որ 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում նույնպես պահպանվի նույն սկզբունքը, ինչը կնպաստի ուսուցման որակի ու գործընթացի շարունակական բարելավմանը:

Որոշեցին՝ 2025-2026 ուսումնական տարվա ընթաքցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրել հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները, 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը 3 դասալսում դպրոցի կողմից մշակված ձևաթղթով, այդ թվում՝ փոխադարձ դասալսում: Կիսամյակների և ուսումնական տարվա ավարտին ամփոփել դասալսումները և ներկայացնել մանկավարժական խորհրդի ամփոփիչ նիստում:

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №2

«30» սեպտեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ՄԿԱ համակարգող Արմիդա Գևորգյանը:

Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. Դասալսումների և փոխադարձ դասալսումների իրականացում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
4. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացում:
(զեկուցող՝ Ա.Առստամյան)
5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. Մեթոդմիավորման կողմից թեմատիկ, գործնական աշխատանքներ կազմելու, ամփոփումները բանավոր հարցման միջոցով իրականացնելու աշխատանքների հետ կապված հարցերի քննարկում և հանձնարարականներ:
(զեկուցող՝ Ա.Առստամյան)
7. Զեկուցում՝ «Միջառարկայական կապերի դերը մայրենիի դասաժամերին» թեմայով:
(զեկուցող՝ Ա.Սարգիսջանյան)
8. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 2-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգային հարցերի կատարողականը, ամփոփեց նիստի արդյունքները՝ ընդգծելով կատարված աշխատանքների հիմնական ուղղությունները և ձեռքբերումները: Նա նշեց, որ նախորդ նիստում ընդունված որոշումները և նախատեսված աշխատանքները իրականացվել են

պատշաճ կերպով, սահմանված ժամկետներում ու համաձայն հաստատված պլանի: Բացի այդ, զեկուցողը անդրադարձավ ընթացիկ գործընթացներին՝ ընդգծելով իրականացված միջոցառումների արդյունավետությունը և համագործակցության կարևորությունը մեթոդմիավորման անդամների միջև:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Դասալսումների և փոխադարձ դասալսումների իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը անդրադարձավ դասալսումների և փոխադարձ դասալսումների իրականացման կարևորությանը՝ ընդգծելով դրանց նշանակությունը ուսուցման որակի բարձրացման, փորձի փոխանակման և մեթոդական համագործակցության խորացման գործում: Նա հատուկ ուշադրություն հրավիրեց 9-րդ դասարանում նախատեսվող դասալսումներին՝ նշելով, որ անհրաժեշտ է արդյունավետորեն կիրառել նախորդ ուսումնական տարվա փորձը: Զեկուցողի խոսքով՝ նախորդ շրջանում իրականացված աշխատանքները ցույց են տվել, որ նոր չափորոշչային դասարաններում առաջացած մի շարք դժվարություններ հաղթահարվել են հենց դասալսումների ընթացքում վեր հանված և հետագայում քննարկված հարցերի լուծման շնորհիվ:

Նա առաջարկեց առավել ուշադրությամբ մոտենալ 9-րդ դասարանում իրականացվելիք դասալսումներին, ապահովել դիտարկումների և քննարկումների խորքային վերլուծությունը՝ ներգրավելով նաև մյուս ուսուցիչներին: Քննարկումների ընթացքում նպատակահարմար է վեր հանել առաջացած խնդիրները, համատեղ վերլուծել դրանք և մշակել գործնական առաջարկներ՝ ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Շ.Հովսեփյանը,Ա.Առստամյանը:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց 9-րդ դասարանում իրականացվող դասալսումների նկատմամբ առավել ուշադրություն ցուցաբերելու անհրաժեշտությունը: Նա առաջարկեց աջակցել ուսուցիչներին՝ հատկապես տվյալ դասարանների դասագրքերի և ծրագրային պահանջների արդյունավետ իրականացման հարցում: Ավանեսյանը ընդգծեց, որ փոխադարձ դասալսումները պետք է ծառայեն համագործակցային աշխատանքի ամրապնդմանը. դրանց արդյունքում ուսուցիչները պետք է համատեղ քննարկեն առաջացած խնդիրները և կազմակերպեն աշխատանքները՝ ընդհանուր, հիմնավորված որոշումների հիման վրա:

Շահանե Հովսեփյանը նշեց, որ դասալսման հիմնական նպատակը պետք է լինի փորձի փոխանակումն ու մասնագիտական աջակցությունը, ինչը կնպաստի ուսուցչի ինքնազարգացմանը և ստեղծագործական մոտեցման ձևավորմանը դասի ընթացքում: Նա կարևորեց դասալսումների արդյունավետությունը, հատկապես 5-9-րդ դասարաններում, ընդգծելով նոր չափորոշչային պահանջներին հետևելու կարևորությունը: Հովսեփյանը հավելեց, որ անհրաժեշտ է շարունակել աշխատել նախորդ ուսումնական տարում ձևավորված համագործակցային սկզբունքներով:

Արաքսյա Առստամյանը ևս կարևորեց դասալսումների իրականացումը՝ նշելով, որ դրանք նպաստում են ինչպես դասալսողի, այնպես էլ դասալսվողի մասնագիտական աճին: Նրա խոսքով՝ դասալսումների ընթացքում բացահայտվում են նոր մեթոդներ և հնարներ, որոնք կարող են արդյունավետորեն կիրառվել ուսուցման գործընթացում: Առստամյանը նաև շեշտեց դասալսումներից հետո կազմակերպվող քննարկումների կարևորությունը՝ ընդգծելով, որ դրանց ընթացքում անհրաժեշտ է բացահայտ

և կառուցողական կերպով անդրադառնալ առաջացած խնդիրներին։

Որոշեցին՝ 2025-2026 ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը երեք դասալսում՝ մշակված դասալսման թերթիկի պահանջներին համապատասխան, հաճախակի կազմակերպել փոխադարձ դասալսումներ, կատարել քննարկումներ հատկապես ուշադրություն դարձնելով 9-րդ դասարանում ուսումնասիրվող առարկաներին։

Լսեցին 4. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչ–ուսուցչի օգնական–հատուկ մանկավարժ–հոգեբան համագործակցության նշանակությունը՝ ընդգծելով, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվող աշխատանքը պետք է լինի բոլոր մասնագետների ուշադրության կենտրոնում։ Նա նշեց, որ անհրաժեշտ է ապահովել ԿԱՊԿՈՒ աշակերտների լիարժեք ընդգրկվածությունը դասապրոցեսում՝ հաշվի առնելով նրանց անհատական կարողությունները և զարգացման առանձնահատկությունները։

Զեկուցողը անդրադարձավ նաև 2025-2026 ուսումնական տարում կատարված փոփոխություններին՝ նշելով, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող աշխատանքը շարունակում է մնալ առաջնահերթ ուղղություն։ Նա ներկայացրեց ուսումնական տարվա մեկնարկից սկսած ԱՈՒՊ-ների լրացման ընթացքը՝ ընդգծելով, որ նոր ձևաչափով ԱՈՒՊ-ների լրացումը դարձրել է գործընթացը ավելի արդյունավետ և հասկանալի։ Նրա խոսքով՝ ուսուցիչները բավականին արագ կողմնորոշվում են և կարողանում են հստակ ձևակերպել իրենց կրթական նպատակներն ու սպասվող արդյունքները։

Զեկուցողը հատուկ ուշադրություն դարձրեց նաև ուսուցիչ–ծնող համագործակցության կարևորությանը՝ առաջարկելով առավել հաճախակի կազմակերպել քննարկումներ ուսուցչի, ուսուցչի օգնականների, հոգեբանի, հատուկ մանկավարժի և ծնողների միջև։ Նման փոխգործակցությունը, ըստ նրա, հնարավորություն կտա ժամանակին բացահայտել և լուծել առաջացած հնարավոր խնդիրները՝ նպաստելով ԿԱՊԿՈՒ աշակերտների հաջող ինտեգրմանը և առաջընթացին ուսումնական գործընթացում։

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Լ.Սարգսյանը։

Արտահայտվողները նշեցին, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքում հաճախ հանդիպում են տարբեր խնդիրների։ Նրանց կարծիքով՝ նման իրավիճակներում կարևոր է ցուցաբերել անհատական մոտեցում յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ և ապահովել թիմային արդյունավետ համագործակցություն։

Լիլիթ Սարգսյանը նշեց, որ կան ԿԱՊԿՈՒ աշակերտներ, որոնց հետ աշխատանքը որոշ դեպքերում դժվար է ոչ միայն ուսուցչի, այլև ուսուցչի օգնականի համար։ Նա առաջարկեց ավելի սերտորեն համագործակցել ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների հետ՝ ապահովելու համար տվյալ աշակերտների առավել ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին և ԱՈՒՊ-ով ու օրվա դասի պլանով նախատեսված նպատակների լիարժեք իրականացումը։

Դանիելյանը կարևորեց ծնողների ներգրավվածությունը և նրանց հետ շարունակական համագործակցությունը՝ ընդգծելով, որ այն կարևոր նախապայման է ԿԱՊԿՈՒ աշակերտների դասապրոցեսին լիարժեք մասնակցության և կրթական առաջընթացի ապահովման համար։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն զեկուցումը, ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել հանդիպումներ ուսուցիչ-ուսուցչի օգնական-հոգեբան-հատուկ մանկավարժ-ծնող ձևաչափով և փորձել աշխատաել թիմային։

Լսեցին 5. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը հիշեցրեց մատենավարության իրականացման կարգը՝ նշելով, որ 2025-2026 ուսումնական տարում այն անհրաժեշտ է կազմակերպել նոր պահանջներին և ընթացիկ կարգավորումներին համապատասխան: Նա կարևորեց մատենավարության գործընթացում պատասխանատվության բարձր մակարդակի պահպանումը՝ ընդգծելով, որ այն պետք է իրականացվի համակարգված և հստակ ժամկետներով:

Զեկուցողը նաև շեշտեց նոր չափորոշչային դասարաններում գնահատման համակարգում կատարված փոփոխություններին հետևելու կարևորությունը՝ նպատակ ունենալով ապահովել գնահատման օբյեկտիվություն, թափանցիկություն և համապատասխանություն սահմանված չափորոշիչներին:

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը, Շ. Հովսեփյանը:

Առստանյանը նշեց, որ անհրաժեշտ է գրանցումները կատարել հաստատված և ներբեռնված ՕԹՊ-ներին համապատասխան՝ ապահովելով փաստաթղթերի միասնականությունը և ճշգրտությունը: Նա հանձնարարեց մեթոդմիավորման նախագահին իրականացնել շաբաթական ստուգումներ և դրանց ամփոփ տվյալները ներկայացնել ուսումնական մասին՝ վերահսկելու համար աշխատանքների կատարման ընթացքը և որակը:

Հովսեփյանը ընդգծեց աշխատանքի կարգապահության և պատասխանատվության կարևորությունը՝ կոչ անելով լինել առավել ուշադիր և սահմանված աշխատանքները կատարել սահմանված ժամկետներում: Նա նաև առաջարկեց առաջացած խնդիրների կամ անորոշությունների դեպքում անմիջապես դիմել ուսումնական մասին՝ նպատակ ունենալով ստանալ ժամանակին և ճիշտ խորհրդատվություն:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն մատյանների ընթացիկ ստուգման արդյունքները: Մեթոդմիավորման նախագահին պարտավորեցնել իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել տնօրենի պաշտոնակատարին: Կազմակերպել խորհրդատվություն և անհրաժեշտ աջակցություն ուսուցիչներին՝ առաջացած խնդիրների արդյունավետ լուծման նպատակով:

Լսեցին 6. Մեթոդմիավորման կողմից թեմատիկ, գործնական աշխատանքներ կազմելու, ամփոփումները բանավոր հարցման միջոցով իրականացնելու աշխատանքների հետ կապված հարցերի քննարկման և հանձնարարականների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը կարևորեց 5-9-րդ դասարաններում թեմատիկ գրավոր աշխատանքների իրականացման հետ կապված հարցերի քննարկումը՝ հաշվի առնելով նոր չափորոշչային պահանջները: Նա ընդգծեց, որ թեմատիկ աշխատանքները պետք է նպաստեն ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը և սովորողների գիտելիքների գնահատման բազմակողմանիությանը:

Առստամյանը նշեց, որ նպատակահարմար է կիրառել նախորդ ուսումնական տարվա արդյունավետ փորձը՝ շարունակելով զարգացնել սովորողների թեստերով աշխատելու կարողություններն ու հմտությունները բոլոր դասարաններում: Նա շեշտեց, որ թեստային ձևաչափը խթանում է սովորողների ինքնուրույն մտածողությունը և վերլուծական կարողությունները:

«Պատմություն» և «Հասարակագիտություն» առարկաների դեպքում առաջարկվեց յուրաքանչյուր կիսամյակում իրականացնել մեկ թեմատիկ

գրավոր աշխատանք, իսկ ամփոփիչ գնահատումը կազմակերպել բանավոր հարցման միջոցով՝ օգտագործելով հարցման այս ձևի համար նախատեսված տարբեր մեթոդներ և հնարքներ։ Նման ձևաչափը, ըստ զեկուցողի, հնարավորություն կտա համատեղել գնահատման բազմազան մոտեցումները և առավել ամբողջական պատկեր ստանալ սովորողների առաջադիմության մասին։

Ս. Հարությունյանը, Ա. Սարգիսջանյանը, Ռ. Խաչատրյանը։

Սոնա Հարությունյանը կարևորեց թեստերի եռամակարդակ լինելը՝ նշելով, որ այն հնարավորություն է տալիս տարբերել սովորողների գիտելիքների և կարողությունների մակարդակները՝ ապահովելով գնահատման ավելի օբյեկտիվ մոտեցում։

Անուշ Սարգիսջանյանը ընդգծեց, որ իրականացվող բոլոր աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է ցուցաբերել առավելագույն ուշադրություն նոր չափորոշչային պահանջների պահպանման հարցում՝ դրանք դիտարկելով որպես ուսումնական գործընթացի որակի բարձրացման կարևոր պայման։

Ռուզաննա Խաչատրյանը նշեց, որ բանավոր հարցման կազմակերպման դեպքում անհրաժեշտ է ապահովել առաջադրանքների բազմազանությունը՝ կիրառելով տարբեր ձևեր՝ հարցաշարեր, ռեֆերատներ, գործնական աշխատանքներ, քարտային և բանավոր թեստային առաջադրանքներ կամ ուսուցչի ընտրությամբ այլ համապատասխան ձևաչափեր։ Նրա խոսքով՝ նման մոտեցումը հնարավորություն է տալիս առավել ամբողջական գնահատել սովորողների գիտելիքները, հաղորդակցական հմտությունները և մտածողության խորությունը։

Որոշեցին՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորումը որոշեց՝ ընդունել ի գիտություն քննարկման արդյունքները։

Լսեցին 7. «Միջառարկայական կապերի դերը մայրենիի դասաժամերին» թեմայով զեկուցման մասին։

(զեկուցող՝ Ա. Սարգիսջանյան)

Զեկուցողը նշեց, որ մեր օրերում կրթական բարեփոխումները՝ որպես ժամանակի հրամայական, անդրադառնում են կրթության համակարգի կառուցվածքային բոլոր օղակներին և ուղղություններին։ Վերջին տարիներին կատարվել է զգալի աշխատանք՝ դպրոցական դասին ներկայացվող ժամանակակից պահանջների վերանայման, ինչպես նաև ուսուցման գործընթացում նորարարական և արդյունավետ մեթոդների ներդրման ուղղությամբ։

Զեկուցողի խոսքերով՝ ավելի հաճախ են կազմակերպվում դասապրոցեսներ, որոնց ընթացքում համակցվում են ուսուցման տարբեր արդյունավետ մեթոդներ և կիրառվում են նորարարական հնարներ։ Դրանք նպաստում են ուսումնական խնդիրների արդյունավետ լուծմանը և առաջնահերթ տեղ են տալիս դասապրոցեսի հիմնական նպատակներին ու պահանջներին։ Այս համատեքստում ուսուցչի ուշադրության կենտրոնում պետք է լինեն միջառարկայական կապերի ապահովումը, մեթոդական հանձնարարականների պատշաճ կատարումը, ուսումնական տեղեկության մատչելի հաղորդումը, ինչպես նաև դասի գրավիչ և մոտիվացնող մուտքի ապահովումը։

Զեկուցողը ընդգծեց, որ ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու ձևերի և միջոցների ընդհանուր համակարգում միջառարկայական կապերը զբաղեցնում են առանձնահատուկ տեղ։ Վերջին տարիներին դրանց դերը դարձել է առավել ակնհայտ, քանի որ միջառարկայական կապերի բացահայտումն ու ապահովումը նպաստում են աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացմանը, մտավոր գործունեության ակտիվացմանը, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքի կատարելագործմանը։ Այդ

պատճառով էլ միջառարկայական կապերի ուսումնասիրությունը և կիրառման մեթոդաբանության վերլուծությունը համարվում են արդիական և տեսական ու գործնական նշանակություն ունեցող խնդիրներ։
Զեկուցողը ներկայացրեց, որ իր աշխատանքի նպատակն է տեսականորեն հիմնավորել միջառարկայական կապերի դերը՝ որպես ուսուցման մատչելիության և դասի արդյունավետության բարձրացման անհրաժեշտ պայման։
Նպատակից ելնելով՝ ձևակերպվել են հետևյալ խնդիրները.

- ցուցադրել միջառարկայական կապերի տեղն ու դերը ուսուցման գործընթացում,
- անդրադառնալ մանկավարժության մեջ միջառարկայական կապերի հիմնահարցի ձևավորման և զարգացման պատմությանը,
- բացահայտել միջառարկայական կապերի բազմաստիճան բնույթը,
- ցույց տալ «Արվեստ և արհեստ» առարկայախմբի, ինչպես նաև այլ առարկաների տարրերի արդյունավետ օգտագործման հնարավորությունները մայրենի լեզվի դասաժամերին՝ դաստիարակչական նպատակների իրականացման համատեքստում։

Հետազոտության օբյեկտը ուսուցման գործընթացում դրսևորվող միջառարկայական առանձնահատկություններն են, իսկ առարկան՝ հայոց լեզվի և գրականության, «Արվեստ և արհեստ» ուսումնական բնագավառի և այլ առարկաների միջև միջառարկայական կապերի բացահայտումն ու դրանց ապահովումը մայրենիի դասերին։
Հետազոտության ընթացքում կիրառվել են դիտարկման և վերլուծության մեթոդները։

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Ս.Հարությունյանը,Լ.Սարգսյանը։

Արտահայտվողները նշեցին, որ նպատակահարմար է նմանատիպ զեկուցումներով հանդես գալ ավելի հաճախ՝ ընդգրկելով գիտական, մասնագիտական և մանկավարժա-մեթոդական թեմաներ։ Նրանց կարծիքով՝ զեկուցման մեջ արծարծված խնդիրները հատկապես արդիական են և պահանջում են շարունակական ուշադրություն ու գործնական քննարկում։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Միջառարկայական կապերի դերը մայրենիի դասաժամերին» թեմայի շուրջ մանկավարժական զեկույցը (կցվում է)։

Լսեցին 8. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (այսուհետ՝ ՈՒԴԱՏՊ) շրջանակում սեպտեմբեր ամսվա ընթացքում նախատեսված և իրականացված միջոցառումները։ Նա ընդգծեց, որ ինչպես սեպտեմբեր, այնպես էլ նախորդ՝ օգոստոս ամսվա ընթացքում բոլոր պլանային աշխատանքները իրականացվել են սահմանված կարգով՝ ըստ հաստատված ժամանակացույցի։
Բոլոր ծրագրավորված գործողությունները կատարվել են համակարգված, նպատակային և համագործակցային ձևով՝ ապահովելով ուսումնական տարվա արդյունավետ մեկնարկը և կրթական գործընթացի բնականոն կազմակերպումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով (ՈՒԴԱՏՊ) նախատեսված բոլոր գործառույթներն ու միջոցառումները, որոնք վերաբերում են մեթոդմիավորման կազմում ընդգրկված ուսուցիչներին, իրականացվել են պատշաճ կերպով։ Նրանք ընդգծեցին, որ աշխատանքների կատարման

գործընթացում չեն արձանագրվել բացթողումներ կամ թերակատարումներ, իսկ ուսուցիչները ցուցաբերել են պատասխանատվություն, նախաձեռնողականություն և համագործակցային մոտեցում՝ ապահովելով պլանի արդյունավետ իրականացումը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3

«24» հոկտեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը և տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. Տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստում։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. Առարկայական օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպում։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. 9-րդ դասարանում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
7. Զեկուցում՝ «Նախագծային ուսուցման մեթոդի արդյունավետությունը պատմության դասաժամերին» թեմայով։
(զեկուցող՝ Ռ. Խաչատրյան)
8. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբեր ամսվա աշխատանքներ։
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 3-րդ նիստի օրակարգը։

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը՝ մանրամասնելով իրականացված աշխատանքներն ու դրանց արդյունքները։ Նա ամփոփեց նախորդ նիստում ընդունված որոշումների ընթացքը, ընդգծեց կատարված աշխատանքի արդյունավետությունը և պատասխանատու մոտեցումը։ Զեկուցողի խոսքերով՝ նախատեսված բոլոր գործողությունները և

որոշումները կատարվել են պատշաճ կերպով, սահմանված ժամկետներում՝ ապահովելով աշխատանքի կազմակերպվածությունն ու ծրագրային նպատակների իրագործումը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

Լսեցին 3. Տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը առաջարկեց, որ տնօրենությունը 5-6-րդ դասարաններում կազմակերպի գրավոր աշխատանքներ «Մայրենի» առարկայից, իսկ 7-9-րդ դասարաններում՝ «Հայոց լեզու» առարկայից։ Նա ընդգծեց, որ աշխատանքների կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է խստորեն պահպանել առարկայական չափորոշչային պահանջները։

Զեկուցողը կարևորեց նախորդ ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ձեռք բերված փորձը՝ առաջարկելով այս տարի տնօրենության գրավոր աշխատանքները անցկացնել նոր ձևաչափով՝ էլեկտրոնային եղանակով։ Նա հիշեցրեց էլեկտրոնային տարբերակով աշխատելու հիմնական սկզբունքները՝ պարզաբանելով, որ թեև աշակերտները պատասխանները գրելու են թղթերի վրա, սակայն արդյունքները պետք է փոխանցվեն էլեկտրոնային թեստերի համակարգում։

Զեկուցողի խոսքով՝ թեստերը բաղկացած են լինելու 10 հարցից, որոնցից յուրաքանչյուրն կունենա 1 միավորի կշիռ։ Յուրաքանչյուր հարցում աշակերտին կներկայացվեն ճիշտ և սխալ տարբերակներ, որոնցից նա պետք է ընտրի ճիշտ պատասխանը։ Աշխատանքն ավարտելուց հետո՝ սեղմելով «Ուղարկել» կոճակը, աշակերտը անմիջապես կտեսնի իր գրավոր աշխատանքի արդյունքը՝ ապահովելով աշխատանքի թափանցիկությունն ու արագ հետադարձ կապը։

Արտահայտվեցին՝ Ա. Սարգիսջանյանը, Շ. Հովսեփյանը, Մ. Դանիելյանը

Արտահայտվողներո ընդգծեցին, որ տնօրենության կողմից կազմակերպված գրավոր աշխատանքների էլեկտրոնային ձևաչափը իրեն արդարացրել է և ցույց է տվել բարձր արդյունավետություն։ Նրանց կարծիքով՝ այս մոտեցումը ոչ միայն խթանել է աշակերտների ուսումնական մոտիվացիան, այլև ստեղծել է ավելի հետաքրքիր և ժամանակակից ուսումնական միջավայր։

Նրանք նշեցեցին, որ աշակերտներն ավելի ոգևորված և ներգրավված էին գործընթացում, քանի որ էլեկտրոնային եղանակը հնարավորություն է տալիս անմիջապես տեսնել աշխատանքի արդյունքը, ինչը խրախուսում է նրանց ինքնավերլուծության և սեփական առաջընթացի գնահատման գործում։

Որոշեցին՝

1. 5-9-րդ դասարաններում «Մայրենի», «Հայոց լեզու» առարկաներից տնօրենության կողմից գրավոր աշխատանքները տալ նոր սկզբունքով՝ էլեկտրոնային տարբերակով։
2. Թեստերը կազմել քննարկված պահանջներին համապատասխան։

Լսեցին 4. Առարկայական օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը առաջարկեց օլիմպիադայի դպրոցական փուլին մասնակցող աշակերտների հետ տարվող աշխատանքները կազմակերպել ճիշտ, համակարգված և շարունակական ձևով։ Նա ընդգծեց, որ նպատակահարմար է շաբաթվա ընթացքում առնվազն երկու անգամ վերահսկել տրված հանձնարարությունների կատարման ընթացքը՝ ապահովելով աշակերտների պատրաստության որակը և առաջադիմությունը։

Զեկուցողի խոսքով՝ աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել ըստ

նախապես մշակված պլանի, որը կներառի ինչպես թեմատիկ պատրաստություն, այնպես էլ փորձնական աշխատանքների անցկացում: Նա հավելեց, որ առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպումը կիրականացվի 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում հաստատված նոր կարգի համաձայն՝ ապահովելով մրցույթի թափանցիկությունն ու արդյունավետությունը:

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը, Ս. Հարությունյանը, Ռ. Խաչատրյանը:

Արտահայտվողները կարևորեցին աշակերտների հետ տարվող աշխատանքների պատշաճ կազմակերպումն ու արդյունավետ իրականացումը, ինչպես նաև դրանց արդյունքում նշանակալի ձեռքբերումների արձանագրումը: Նրանք ընդգծեցին, որ դպրոցական փուլում ձևավորված հաջողությունները հիմք են աշակերտների հետագա մասնակցության համար օլիմպիադայի տարածքային փուլում, ինչը կարևոր հնարավորություն է իրենց գիտելիքներն ու կարողությունները ներկայացնելու և ամրապնդելու համար:

Արաքսյա Առստամյանը հավելեց, որ անհրաժեշտ է ժամանակին և նպատակային կերպով նախապատրաստվել առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլին՝ հատուկ ուշադրություն դարձնելով աշակերտների անհատական կարողություններին, հետաքրքրություններին և պատրաստության մակարդակին, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ կարողանա իր կարողությունները առավելագույնս ցուցադրել:

Որոշեցին՝ Տալ հանձնարարականներ հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահին և անդամ ուսուցիչներին՝ աշակերտների հետ աշխատանքները կազմակերպել ըստ մշակված անհատական պլանի:

Լսեցին 5. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցի մասին:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց ստուգումների արդյունքները՝ անդրադառնալով հայտնաբերված դիտարկումներին և տրված առաջարկություններին: Նա ընդգծեց էլեկտրոնային մատենավարության իրականացման կարգի պահպանման կարևորությունը, նշելով, որ անհրաժեշտ է մշտապես հետևել մատենավարական համակարգում կատարվող փոփոխություններին և դրանք ճիշտ կերպով կիրառել աշխատանքում:

Զեկուցողը շեշտեց, որ մատենավարության գործընթացում անհրաժեշտ է ստանալ հստակ և մասնագիտական խորհրդատվություն, որպեսզի բացառվեն սխալ մեկնաբանություններն ու գրառումները: Նա նաև հիշեցրեց՝ գրանցումները պետք է կատարվեն ըստ ՕԹՊ-ների (օրական թեմատիկ պլանների), պահպանելով սահմանված ժամկետները և թույլ չտալով որևէ խախտում: Այս մոտեցումը, ըստ զեկուցողի, կապահովի աշխատանքների թափանցիկությունն ու գնահատման միասնական մոտեցումները:

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը, Լ. Սարգսյանը:

Արաքսյա Առստամյանը նշեց, որ անհրաժեշտ է պահպանել շարունակական վերահսկողություն ուսուցիչների կողմից մատենավարության ոլորտում կատարվող ամենօրյա աշխատանքների նկատմամբ՝ նպատակ ունենալով կանխել հնարավոր թերացումները և խուսափել հետագա խնդիրներից:

Նա ընդգծեց, որ ըստ անհրաժեշտության պետք է ժամանակին ցուցաբերել աջակցություն ուսուցիչներին՝ տրամադրելով խորհրդատվություն և մասնագիտական աջակցություն մատենավարության ճիշտ վարման հարցում:

Բացի այդ, կարևոր է անհրաժեշտության դեպքում կատարել կոնկրետ դիտողություններ և առաջարկություններ, որպեսզի ապահովվի էլեկտրոնային մատենավարության կարգի ամբողջական պահպանումն ու աշխատանքների որակի բարձրացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող շրջանում էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները, կատարել էլեկտրոնային

մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում:

Լսեցին 6. 9-րդ դասարանում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ Հումանիտար առարկաների և մյուս մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացվել են դասալսումներ և դասերի դիտարկումներ, որոնց արդյունքում արձանագրվել է, որ 9-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսումների ընթացքում պարզվել է, որ ուսուցիչներն ունեն օրացուցային-թեմատիկ պլաններ (ՕԹՊ-ները), համակարգում առկա են օրվա դասի պլանները, որոնք ձևավորվել են ինքնաշխատ եղանակով, իսկ մատենավարությունը կազմակերպված է դրանց համապատասխան:

Զեկուցողը նշեց, որ թեմատիկ պլաններում ըստ պահանջի հստակ սահմանված են տվյալ թեմայի նպատակն ու վերջնարդյունքը, ինչը նպաստում է ուսուցիչների գիտակցված և նպատակային աշխատանքին: Քանի որ յուրաքանչյուր օրվա պլանում նշված է դասի ակնկալվող վերջնարդյունքը, ուսուցիչները կարողանում են հստակ պատկերացնել, թե ինչ գիտելիքներ և հմտություններ պետք է ապահովեն դասի ավարտին, և այդ նպատակին մեծ մասամբ հաջողությամբ հասնում են:

Զեկուցողը նաև շեշտեց, որ առանձնակի ուշադրություն է դարձվել աշակերտների ներգրավվածությանն ու գնահատման գործընթացին: Նշվեց, որ ներգրավվածության որոշ խնդիրներ դիտվում են այն աշակերտների մոտ, ովքեր ունեն առաջադիմության բացեր. այդ աշակերտները հիմնականում ընդգրկվում են երկարօրյա խմբերի աշխատանքներում, որտեղ նրանց աջակցում են ուսուցիչներն ու օգնականները՝ համաձայն ԱՈՒՊ-ների:

Անդրադառնալով գնահատման հարցերին՝ զեկուցողը նշեց, որ անհրաժեշտ է կիրառել նախորդ տարվա հաջողված փորձը, որը հնարավորություն կտա արդյունավետորեն իրագործել գնահատման նոր համակարգի պահանջները: Նա կարևորեց ձևավորող, ամփոփիչ և հայտորոշիչ գնահատման գործիքների կիրառումը, որոնք հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում ստանալ աշակերտի առաջընթացի մասին:

Ամփոփելով՝ զեկուցողն առաջարկեց, որ ուսուցիչները հատուկ ուշադրություն դարձնեն

- առարկայական ծրագրով նախատեսված կարողությունների զարգացմանը,
- դասի ընթացքում սահմանված վերջնարդյունքների իրագործմանը,
- աշակերտների ներգրավվածության բարձրացմանը,
- և գնահատման նոր համակարգի արդյունավետ կիրառմանը:

Նա կոչ արեց այս ուղղություններով կազմակերպել մեթոդական քննարկումներ՝ փորձի փոխանակման և աշխատանքի որակի բարելավման նպատակով:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Շ. Հովսեփյանը, Ա. Սարգիսջանյանը:

Արտահայտվողները համաձայնություն հայտնեցին զեկուցողի դիտարկումների հետ՝ նշելով, որ դրանք լիովին արտացոլում են ուսումնական գործընթացի իրական պատկերը: Նրանք ընդգծեցին, որ նպատակահարմար է պարբերաբար կազմակերպել մեթոդական քննարկումներ և փորձի փոխանակումներ, որոնք կնպաստեն ուսուցիչների գիտելիքների բարելավմանը, մասնագիտական հմտությունների զարգացմանը և նոր մոտեցումների յուրացմանը:

Նրանք հավելեցին, որ նման քննարկումները հնարավորություն կտան ուսուցիչներին թարմացնել իրենց մասնագիտական գիտելիքները, ծանոթանալ նոր կրթական մեթոդներին և պահանջներին, ինչպես նաև ապահովել դասապրոցեսի ավելի արդյունավետ և ժամանակակից

կազմակերպում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում կատարված փորձը և աշխատանքները կազմակերպել ՀՊՉ պահանջների համապատասխան:

Լսեցին 7. «Նախագծային ուսուցման մեթոդի արդյունավետությունը պատմության դասաժամերին» թեմայով զեկուցման մասին:

(զեկուցող՝ Ռ.Խաչատրյան)

Զեկուցողը նշեց, որ կրթության համակարգում տեղի ունեցող փոփոխությունների պայմաններում մեծանում են աշակերտի ակտիվ մասնակցությունը և ինքնուրույնությունը սովորելու գործընթացում: Այս մոտեցումը նոր պահանջներ է դնում ուսուցչի առջև՝ դասընթացի անցկացման, նպատակների և կրթության արդյունքների ձևավորման համար: Դասավանդող նյութի հեշտ յուրացումը աշակերտի կողմից կախված է ոչ միայն ընդունակություններից, այլև դասավանդման մեթոդներից: Կրթության վերջնարդյունքի յուրաքանչյուր տեսակ առավել արդյունավետ է ձեռք բերվում դասավանդման որոշակի ձևերի ու մեթոդների կիրառմամբ:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու և կրթության նպատակներն իրականացնելու համար նպատակահարմար մեթոդ է հանդիսանում նախագծահեն ուսուցումը: Այս մեթոդը ապահովում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը, ինչպես նաև հանդիսանում է աշակերտակենտրոն ուսուցման տարր:

Նախագծային ուսուցումը հնարավորություն է տալիս ստեղծել պայմաններ, որոնց շնորհիվ աշակերտներն ինքնուրույն ձեռք են բերում գիտելիքներ տարբեր աղբյուրներից, սովորում օգտվել ձեռք բերված տեղեկատվությունից, զարգացնում խնդիրների բացահայտման, տվյալների հավաքագրման, դիտարկման, վերլուծության, համադրման միջոցներով, որի արդյունքում էլ ունենում են համակարգված մտածողություն:

Նախագծային մեթոդը չի սահմանափակվում դասարանային պարապունքներով, այս մեթոդը թույլ է տալիս աշակերտներին դուրս գալ դասարանի սահմաններից և կազմել սեփական գործողությունների նախագիծ՝ քննարկվող թեմայի շուրջ: Նախագծային ուսուցման ընթացքում օգտագործվում են տեղեկատվության տարբեր տեսակի աղբյուրներ, այդ թվում՝ գիտական գրականություն, տարբեր տեսակի փաստաթղթեր, վիճակագրական հրապարակումներ և այլն:

Նախագծային ուսուցման մեթոդը պատմության դասաժամերին հնարավորություն է տալիս գիտելիքը դարձնել կիրառելի: Աշակերտը լսողից դառնում է ակտիվ, հետազոտող, գործունեություն ծավալող մասնակից: Աշակերտն ազատ է գործունեության ձևի ու տեսակի մեջ, որն էլ զարգացնում է նրանց մոտ ինչպես ինքնուրույն, այնպես էլ թիմային աշխատանք կազմակերպելու հմտություն: Այն թույլ է տալիս կատարել խնդրի առաջադրում, տեղեկատվության որոնում, գիտելիքների օգտագործում, ըստ նշանակության, վերլուծություն, ինքնաներկայացում, ինքնակրթություն, հետազոտական և ստեղծագործական գործունեություն: Հենց դրանով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել նախագծային աշխատանքի առանձնահատկությունները և դրա արդյունավետ օգտագործումը պատմության դասաժամերին:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Ս.Հարությունյանը:

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է հաճախ հանդես գալ նմանատիպ զեկուցումներով, որոնք կնպաստեն մասնագիտական փորձի հարստացմանը և ուսուցիչների շարունակական զարգացմանը: Նրանք կարևորեցին, որ զեկուցումները պետք է ներառեն ոչ միայն գիտական և մասնագիտական, այլև մանկավարժամեթոդական թեմաներ, որոնք ուղղված

կլինեն ուսուցման գործընթացի որակի բարելավմանը։
Բացի այդ, արտահայտվողները շեշտեցին, որ անհրաժեշտ է կիրառել բոլոր առկա հնարավորություններն ու գործիքները դասի արդյունավետությունը բարձրացնելու համար՝ ներառյալ նորարարական մեթոդները, ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը և աշակերտակենտրոն մոտեցումները, որոնք կխթանեն ուսումնական գործընթացի հետաքրքրությունը և արդյունավետությունը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Նախագծային ուսուցման մեթոդի արդյունավետությունը պատմության դասաժամերին» թեմայի շուրջ մանկավարժական զեկուցումը (կցվում է)։

Լսեցին 8. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբեր ամսվա աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացված և ընթացիկ միջոցառումների ամփոփ պատկերը։ Նա նշեց, որ ամսվա ընթացքում պլանով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են սահմանված կարգով՝ ըստ հաստատված ժամանակացույցի և նախանշված նպատակների։
Հավելեց, որ «Մեղու 2025» մրցույթի նախապատրաստական աշխատանքները դեռ չեն իրականացվել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մրցույթի կազմկոմիտեի կողմից դեռ ժամանակացույցը չի հրապարակվել։
Զեկուցողը շեշտեց, որ իրականացված գործողությունները կազմակերպվել են համակարգված, նպատակային և համագործակցային ձևով՝ ընդգրկելով ուսուցիչների, սովորողների և ծնողների ակտիվ մասնակցությունը։ Նման մոտեցումը նպաստել է կրթական գործընթացի շարունակական զարգացմանը, արդյունավետ հաղորդակցությանը և դպրոցի համայնքային կյանքի ակտիվացմանը։
Արդյունքում, հոկտեմբեր ամիսը բնութագրվել է նպատակային և բովանդակալից աշխատանքներով, որոնք ապահովել են ուսումնական տարվա կայուն ընթացքն ու կրթական ծրագրերի հաջող իրականացումը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցեն, որ ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված բոլոր միջոցառումները և գործառույթները, որոնք վերաբերում են մեթոդմիավորման կազմում ընդգրկված ուսուցիչներին, իրականացվել են պատշաճ, ժամանակին և արդյունավետ ձևով։ Նրանց խոսքով՝ աշխատանքների իրականացման ընթացքում չեն արձանագրվել բացթողումներ կամ թերակատարումներ, ինչը վկայում է ուսուցիչների բարձր պատասխանատվության, նախաձեռնողականության և մասնագիտական նվիրվածության մասին։
Ավելին՝ ընդգծվեց, որ մեթոդմիավորման գործունեությունը կազմակերպվել է համագործակցային և ստեղծարար միջավայրում՝ նպաստելով փորձի փոխանակման, նոր մեթոդների ներդրման և կրթական գործընթացի շարունակական կատարելագործմանն։ Այս ամենը ապահովել է տարեկան պլանի արդյունավետ իրականացումն ու դպրոցի մանկավարժական համայնքի միասնական աշխատանքը ընդհանուր նպատակների շուրջ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Մ/Մ նախագահ՝ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №4

«28» նոյեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Շահանե Հովսեփյան
6. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ռեսուրս կաբինետի աշխատակիցները, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիրակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) նոյեմբեր ամսվա աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
4. Հատուկ մանկավարժի, ուսուցչի օգնականների հետ համագործակցություն, ընթացիկ աշխատանքների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. Փոխադարձ դասալսումների անհրաժեշտության և քննարկման մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստում ընդունված օրակարգային հարցերի կատարողականը՝ ուղեկցելով դրանք հակիրճ և կառուցվածքային ամփոփմամբ: Նա ներկայացրեց իրականացված աշխատանքների ընթացքը, ընդգծեց ձեռք բերված արդյունքները և նշելով, որ բոլոր նախատեսված քայլերն ու ընդունված որոշումները կատարվել են պատշաճ կերպով և սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիրակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) նոյեմբեր ամսվա աշխատանքների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքի տարեկան պլանի շրջանակում նոյեմբեր ամսվա ընթացքում նախատեսված և իրականացված միջոցառումները: Նա կարևորեց, որ ինչպես նոյեմբերին, այնպես էլ նախորդ ամիսների ընթացքում բոլոր ծրագրավորված նախաձեռնություններն իրականացվել են հաստատվված ժամանակացույցի համաձայն՝ պահպանելով սահմանված կարգն ու պահանջները:

Նշվեց, որ կատարած աշխատանքները եղել են համակարգված, նպատակային և համագործակցային՝ ապահովելով ուսումնական տարվա արդյունավետ մեկնարկն ու կրթական գործընթացի բնականոն կազմակերպումը: Վեր հանվեցին նաև առանձին գործողությունների արդյունավետության բարձրացման հնարավոր ուղիները:

Զեկուցողն առաջարկեց տնօրենության կողմից իրականացվող գրավոր աշխատանքները նախատեսել ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում: Առաջարկը պայմանավորված էր նրանով, որ երկհերթ դասապրոցեսի պայմաններում ներկայումս առկա չեն բավարար հնարավորություններ նման աշխատանքների լիարժեք և արդյունավետ կազմակերպման համար:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված բոլոր գործառույթներն ու միջոցառումներն, որոնք վերաբերել են մեթոդմիավորման կազմում ընդգրկված ուսուցիչներին, իրականացվել են պատշաճ կերպով: Նրանք ընդգծեցին, որ աշխատանքների կատարման ընթացքում չեն արձանագրվել բացթողումներ կամ թերակատարումներ, իսկ ուսուցիչները ցուցաբերել են բարձր պատասխանատվություն, նախաձեռնողականություն և համագործակցային մոտեցում՝ ապահովելով ծրագրի նպատակների լիարժեք իրագործումը:

Միաժամանակ նշվեց, որ աշխատանքն իրականացվել է կանխատեսելի, կազմակերպված և արդյունավետ մեթոդաբանությամբ, ինչն իր հերթին նպաստել է միջոցառումների որակյալ անցկացմանը և սահմանված արդյունքների ստացմանը: Արտահայտվողների կարծիքով՝ նման համակարգված մոտեցումը պետք է շարունակվի նաև հետագա ամիսներին՝ պահպանելով ձեռք բերված դրական դինամիկան և աշխատանքային մշակույթը:

Որոշեցին՝ 1. Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի նոյեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները:

2. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի տնօրենության գրավոր աշխատանքները տեղափոխել 2-րդ կիսամյակի առաջին հատված:

Լսեցին 4. Հատուկ մանկավարժի, ուսուցչի օգնականների հետ համագործակցության, ընթացիկ աշխատանքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը կարևորեց հատուկ մանկավարժի և ուսուցչի օգնականների հետ ամենօրյա քննարկումների կազմակերպումը՝ նշելով, որ ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է շարունակական վերլուծություններից և առաջացած խնդիրների ժամանակին բացահայտումից: Նա ընդգծեց, որ նման քննարկումները պետք է իրականացվեն բոլոր ներգրավված մասնագետների մասնակցությամբ՝ ապահովելու անհատական մոտեցում յուրաքանչյուր սովորողի նկատմամբ:

Նրա խոսքով՝ նախորդ ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների

ԱՈՒՊ-ների և դիտարկման թերթիկների լրացումը կատարվել է սահմանված պահանջներին համապատասխան: Զեկուցողը նշեց նաև, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատում են ԳՏՄԱԿ-ի մասնագետները, և սահմանված կարգի համաձայն՝ յուրաքանչյուր երկու ամիսը մեկ կազմակերպվում են համատեղ քննարկումներ՝ ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների, ուսուցիչների, ուսուցչի օգնականների, հատուկ մանկավարժի, աշակերտների ծնողների և դպրոցի տնօրենության մասնակցությամբ:

Այս հանդիպումները, ըստ զեկուցողի, հնարավորություն են տալիս ապահովելու աշակերտների կրթական կարիքների լիարժեք գնահատում և շարունակական աջակցություն:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա .Երիցյանը:

Սերգեյ Ավանեսյանը շեշտեց, որ աշխատանքում պետք է անպայման հաշվի առնել երեխաների տարիքային առանձնահատկությունները, քանի որ վարքային փոփոխությունների մեծ մասը պայմանավորված է հենց տարիքային անցումներով: Նա ընդգծեց աշխատանքի ճիշտ կազմակերպման, ինչպես նաև ծնողի, ուսուցչի և աջակցության թիմի արդյունավետ համագործակցության կարևորությունը:

Միաժամանակ, արտահայտվողները կարևորեցին ԱՈՒՊ-ով սահմանված նպատակների հետևողական և լիարժեք իրականացումը՝ նշելով, որ այն ապահովում է յուրաքանչյուր սովորողի անհատական առաջընթացը և աջակցման ճիշտ ուղղորդումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման, հատուկ մանկավարժի, ուսուցչի օգնականների հետ համագործակցության մասին տեղեկատվությունը:

Լսեցին 5. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում իրականացված էլեկտրոնային մատյանների ստուգման արդյունքները՝ անդրադառնալով ինչպես կատարված աշխատանքներին, այնպես էլ արձանագրված բացթողումներին: Նա հատուկ ուշադրություն հրավիրեց ամփոփիչ աշխատանքների, գործնական հանձնարարությունների և ընթացիկ գնահատականների ժամանակին ներբեռնելու կարևորությանը՝ ընդգծելով, որ ուշացումները խաթարում են գնահատման գործընթացի ամբողջականությունը: Նշվեցին նաև մի շարք տեխնիկական խնդիրներ, որոնք արձանագրվել են համակարգի օգտագործման ընթացքում: Զեկուցողը կարևորվեց արդեն պահպանված գնահատականների վերստուգման անհրաժեշտությունը՝ ապահովելու տվյալների ճշգրտությունն ու համապատասխանությունը սահմանված չափանիշներին:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը ընդգծեց, որ մատենավարության գործընթացում յուրաքանչյուր ուսուցչի անհատական և պատասխանատու վերաբերմունքը կարևոր է: Նա նշեց, որ ընթացիկ ստուգումների արդյունքում շարունակաբար արձանագրվում են մի շարք թերություններ, ինչն արագ արձագանքի և կարգապահության բարձրացման անհրաժեշտություն է առաջացնում:

Ավանեսյանը կոչ ուղղեց առավել հետևողական լինել տվյալների լրացման, գնահատականների փոխանցման և էլեկտրոնային մատյանի վարումը սահմանված կարգով ապահովելու գործում՝ ընդգծելով, որ այս գործընթացի որակը անմիջականորեն ազդում է ուսումնական աշխատանքի թափանցիկության և արդյունավետության վրա:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող շրջանում էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները

Լսեցին 6. Փոխադարձ դասալսումների անհրաժեշտության և քննարկման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց փոխադարձ դասալսումների կազմակերպման անհրաժեշտության մասին, ընդգծելով, որ դրանք նպաստում են ուսուցման գործընթացի շարունակական կատարելագործմանը, փորձի փոխանակմանը և ուսուցիչների մասնագիտական զարգացմանը: Ընդգծվեց, որ դասալսումները հնարավորություն են տալիս դիտարկել գործընկերների դասավանդման մեթոդները, դասի կառուցվածքը, մոտեցումները և արդյունավետության բարձրացման տարբերակները: Կարևորվեց այն հանգամանքը, որ ուսուցիչները պետք է հնարավոր բոլոր միջոցները կիրառեն, որպեսզի կարողանան նպաստել աշակերտների հետաքրքրությունների ձևավորմանը, ինքնուրույն մտածողության, վերլուծական կարողությունների զարգացմանը: Զեկուցողը ներկայացրեց և անհրաժեշտ համարեց յուրաքանչյուր դասալսումից հետո կազմակերպել քննարկում՝ մ/մ ուսուցիչների մասնակցությամբ, օգնել ուսուցիչներին միջոցներ ձեռնարկել դասի արդյունավետությունը բարձրացնելու, աշակերտների ինքնուրույն կարողությունների և հմտությունների զարգացումը ապահովելու համար: Հիշեցրեց, որ անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել նոր ՀՊՉ-ների ներդրման գործնական գործընթացին և շարունակել 5-9-րդ դասարաններում դասալսումների կազմակերպման և քննարկման ընթացքում նկատված հարցերի ու խնդիրների շուրջ կազմակերպվող քննարկումներին:

Արտահայտվեցին՝ Ս. Հարությունյանը, Ա. Սարգիսջանյանը:

Արտահայտվողները կարևորեցին այն միտքը, որ յուրաքանչյուր դասից ստացված նոր գիտելիքը և փորձը պետք է վերածել անձնական մասնագիտական ձեռքբերման: Նրանց խոսքով՝ անհրաժեշտ է մշտապես համալրել դասավանդման մոտեցումները արդիական մեթոդներով, որոնել ավելի արդյունավետ լուծումներ և այդ կերպ ապահովել առարկայական նպատակների և վերջնարդյունքների լիարժեք իրականացումը:

Սոնա Հարությունյանն ընդգծեց նոր չափորոշչային պահանջների կարևորությունը՝ նշելով, որ դասի կառուցվածքը, գնահատման ձևերը և սովորողի ակտիվ ներգրավվածությունը պետք է մշտապես գտնվեն ուսուցչի կենտրոնում: Նրա կարծիքով՝ այս ուղղություններով հետևողական աշխատանքը նպաստում է ուսումնական գործընթացի որակական բարելավմանը:

Անուշ Սարգսջանյանը հավելեց, որ դասերն ընդհանուր առմամբ անցկացվել են համագործակցային և արդի մեթոդների կիրառմամբ: Իրացվել են բազմաբովանդակ խմբային և անհատական աշխատանքներ, որոնց ընթացքում առանձնապես նկատելի էին սովորողների համագործակցելու, քննադատելու և հանդուրժողականորեն միմյանց լսելու կարողություններն ու հմտությունները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին զեկուցումը, շարունակել փոխադարձ դասալսումներ իրականացնել, համագործակցել նաև այլ մ/մ ուսուցիչների հետ:

Մ/Մ նախագահ՝ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №5

«25» դեկտեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) դոկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
4. Դպրոցական առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացում և արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկում, վերլուծություն և ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
8. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
9. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
10. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
11. Ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորում, տարակարգ, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներ:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
12. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվություններ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
13. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա խմբեր:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

14. Դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորում։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

15. 5-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

16. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգը։

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարման ընթացքն ու արդյունքները։ Նա ամփոփեց նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումները, անդրադարձավ իրականացված աշխատանքներին և դրանց արդյունավետությանը՝ ընդգծելով, որ բոլոր նախատեսված գործողությունները կատարվել են պատշաճ մակարդակով և սահմանված ժամկետներում։ Զեկույցում նաև արձանագրվեց, որ իրականացված աշխատանքները նպաստել են մեթոդմիավորման գործունեության կազմակերպված և համակարգված իրականացմանը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

Լսեցին 3. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) դեկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների կատարման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա.Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում դեկտեմբեր ամսվա ընթացքում և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը։ Նշվեց, որ հումանիտար առարկաների մեթոդմիավորման կողմից տարեկան պլանով նախատեսված ուսումնադաստիարակչական միջոցառումները նշված ժամանակահատվածում իրականացվել են հիմնականում ամբողջական, նպատակային և սահմանված ժամկետներում։

Մասնավորապես իրականացվել են հայրենասիրական, իրավական, մշակութային, ճանաչողական, լեզվամտածողական և քաղաքացիական դիրքորոշում ձևավորող, ինչպես նաև արժեքային դաստիարակությանը միտված բաց դասեր, դաս-միջոցառումներ, քննարկումներ, այցելություններ, գործնական աշխատանքներ, դասալսումներ, աշխատանքային տետրերի և դասագրքերի ստուգումներ՝ համապատասխան գործող կրթական չափորոշիչների պահանջներին։

Ներկայացվեց, որ 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի

ընթացքում ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված աշխատանքներն իրականացվել են պատշաճ և ամբողջական ձևով: Նշվեց, որ կատարված աշխատանքների վերաբերյալ նյութերը հրապարակվել են դպրոցի պաշտոնական կայքում՝ ապահովելով իրականացված գործունեության թափանցիկությունն ու հանրայնացումը (կցվում է էլեկտրոնային տարբերակը):

Զեկուցողը նաև անդրադարձ կատարեց ուսումնական գործընթացում ժամանակակից մեթոդների և նոր մոտեցումների կիրառմանը, ինչպես նաև աշակերտների ուսումնառության որակի բարձրացմանն ուղղված իրականացված աշխատանքներին: Միաժամանակ վեր հանվեցին առանձին գործողությունների արդյունավետության բարձրացման հնարավոր ուղիները և հետագա բարելավման ուղղությունները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ իրականացված միջոցառումներն էականորեն նպաստել են սովորողների ակտիվության, խոսքային և վերլուծական հմտությունների զարգացմանը: Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց կատարված աշխատանքների արդյունավետությանը, առկա դժվարություններին և դրանց հաղթահարման հնարավոր ուղիներին երկրորդ կիսամյակում:

Ընդգծվեց, որ աշխատանքների իրականացման ընթացքում չեն արձանագրվել բացթողումներ կամ թերակատարումներ, իսկ ուսուցիչները ցուցաբերել են բարձր պատասխանատվություն, նախաձեռնողականություն և համագործակցային մոտեցում՝ ապահովելով ծրագրի նպատակների լիարժեք իրագործումը: Միաժամանակ նշվեց, որ ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացվել են կանխատեսելի, կազմակերպված և արդյունավետ մեթոդաբանությամբ, ինչը նպաստել է միջոցառումների որակյալ կազմակերպմանը և սահմանված արդյունքների ապահովմանը:

Արտահայտվողների կարծիքով՝ նման համակարգված և հետևողական մոտեցումը նպատակահարմար է շարունակել նաև հետագա ամիսներին՝ պահպանելով ձեռք բերված դրական դինամիկան և ձևավորված աշխատանքային մշակույթը: Կարևորվեց նաև առաջին կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքների համապատասխանությունը տարեկան պլանին և դրանց ընդհանուր արդյունավետությունը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի դեկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների կատարման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 4. Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացման և արդյունքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլը, ըստ սահմանված ժամանակացույցի, մեկնարկել է 2025 թվականի նոյեմբերի 17-ին: Նա ներկայացրեց դպրոցական փուլի կազմակերպման նպատակով իրականացված նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքները՝ կարևորելով օլիմպիադաների անցկացման թափանցիկ, օբյեկտիվ և արդար գործընթացի ապահովումը:

Զեկուցողը հիշեցրեց նաև առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացման կարգը՝ ընդգծելով, որ այս ուսումնական տարում ևս առաջադրանքները կազմվել են կենտրոնացված կարգով և դպրոցներին ուղարկվել են պատրաստի տարբերակներով, ինչը նպաստել է գնահատման միասնականությանն ու անաչառությանը:

Առանձնահատուկ շեշտադրվեց «Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Մայրենի» և «Պատմություն» առարկաներից անցկացված օլիմպիադաների

կազմակերպման բարձր մակարդակը և իրականացված հետևողական ու համակարգված աշխատանքները։ Նշվեց նաև «Մայրենի» առարկայի ընթերցանության օլիմպիադայի դպրոցական փուլի անցկացման ընթացքը, կատարված աշխատանքները և արձանագրված արդյունքները։

Բոլորի ուշադրությունը հրավիրվեց նաև առարկայական օլիմպիադաների մասնակից սովորողների պատրաստվածության մակարդակի, նրանց հետ տարվող նպատակային աշխատանքի և ձեռքբերված առաջընթացի վրա։

Նշվեց, որ olymp.am կայքում առարկայական օլիմպիադաների արդյունքները դեռևս հրապարակվում են փուլ առ փուլ, և վերջնական պատկերն ամբողջացնելուց հետո անհրաժեշտ է կազմակերպել նպատակային և համակարգված աշխատանքներ մարզային փուլ անցած աշակերտների հետ՝ նրանց պատրաստվածության մակարդակը բարձրացնելու և առավելագույն արդյունք ապահովելու նպատակով։

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Ա. Սարգիսջանյանը։

Մերի Դանիելյանը կարևորեց առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի արդար, թափանցիկ և անկողմնակալ կազմակերպումը՝ ընդգծելով, որ արդեն մի քանի տարի է դպրոցական փուլի կազմակերպման ձևաչափը գրեթե չի տարբերվում մարզային փուլից։ Նա առանձնակի կարևոր համարեց օլիմպիադաների կարգում կատարված փոփոխությունները և դրանց պահպանմանն ու հետևողականորեն կիրառմանը ուղղված աշխատանքների անհրաժեշտությունը։ Նշվեց նաև, որ օլիմպիադայի ընթացքը վերահսկվել է ոչ մասնագետների կողմից, ովքեր խիստ հետևել են սահմանված կարգի պահպանմանը՝ ապահովելով գործընթացի օբյեկտիվությունը։

Անուշ Սարգիսջանյանը, իր հերթին, կարծիք հայտնեց, որ օլիմպիադաների անցկացման կարգում կատարված փոփոխությունները դրական ազդեցություն են ունեցել աշակերտների մասնակցության ակտիվության վրա՝ նպաստելով ավելի լայն ներգրավվածությանն ու հավասար հնարավորությունների ստեղծմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացումը և առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլն ամփոփել արդյունքները olymp.am կայքում հրապարակելուց հետո։

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի գրավոր աշխատանքների քանակի ու ծրագրերի կատարողականի քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում գրավոր աշխատանքները տրվել են հաստատված քանակին և տեսակներին համապատասխան՝ ըստ ՕԹՊ-ների պահանջների։ Նա ընդգծեց, որ տրված ամփոփիչ գրավոր աշխատանքները պետք է լիովին համապատասխանեն ուսուցիչների կողմից կատարված գրանցումներին և սահմանված ամփոփիչ աշխատանքների քանակին, որոնց հիման վրա էլ իրականացվում է աշակերտների գնահատումը։ Միաժամանակ կարևորվեց ՕԹՊ-ների կատարողականի ապահովումը և դրանց հետևողական իրականացումը։

Զեկուցողը հիշեցրեց նաև, որ ամփոփիչ աշխատանքները պետք է նախապես քննարկված լինեն մեթոդմիավորումների նիստերում և տրվեն համաձայնեցված ու հաստատված կարգին համապատասխան։

Ներկայացվեց այս ուսումնական տարվա ընթացքում կատարված փոփոխությունը, որը վերաբերում է «Հայաստանի պատմություն», «Համաշխարհային պատմություն» առարկաների ամփոփիչ աշխատանքներին։ Քննարկման արդյունքում նպատակահարմար էր համարվել ընթացիկ ամփոփումներն իրականացնել բանավոր հարցման տարբեր տեսակների կիրառմամբ, իսկ կիսամյակի ավարտին կազմակերպել

ամփոփիչ գրավոր աշխատանք՝ թեստային ձևաչափով։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Լ. Սարգսյանը։

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ ամփոփիչ գրավոր աշխատանքներ հանձնարարելիս անհրաժեշտ է խստորեն առաջնորդվել չափորոշչային պահանջներով՝ կարևորելով, որ դրանք լիովին համապատասխանեն ՕԹՊ-ներին։ Նա ընդգծեց, որ մեթոդական միավորումներում են հաստատվում ամփոփիչ գրավոր և գործնական աշխատանքների տեսակներն ու քանակները, որոնց համապատասխան էլ ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչները պարտավոր են իրականացնել այդ աշխատանքները։

Սերգեյ Ավանեսյանը անհրաժեշտ համարեց մեկ անգամ ևս ուշադրություն դարձնել ամփոփիչ աշխատանքների համապատասխանությանը ՕԹՊ-ներին՝ շեշտելով, որ դա կարևոր նախապայման է էլեկտրոնային մատյաններում գնահատումների և գրանցումների ճիշտ ու ճշգրիտ իրականացման համար։

Լիլիթ Սարգսյանը, իր հերթին, նշեց, որ ուսուցիչը կարող է ցուցաբերել ստեղծագործական մոտեցում նաև գործնական աշխատանքների ձևերի և բնույթի ընտրության հարցում՝ պահպանելով սահմանված պահանջներն ու չափորոշիչները։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն առաջին կիսամյակի ամփոփիչ գրավոր և գործնական աշխատանքների կատարողականը, ինչպես նաև մեթոդմիավորման նախագահի կողմից կատարել ստուգումներ ամփոփումների, ամփոփիչ գրավոր աշխատանքների բովանդակության և քանակի հետ կապված։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկման, վերլուծության և ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում հումանիտար առարկաների գծով իրականացված դասալսումների ընթացքի, նպատակների, դիտարկումների և արձանագրված արդյունքների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն։ Ներկայացվեցին դասալսումների ընթացքում արձանագրված դրական փորձը, ուսուցման արդյունավետ և ժամանակակից մեթոդների կիրառումը, ինչպես նաև ուսումնառության կազմակերպման ընթացքում ի հայտ եկած դժվարությունները և բարելավման ենթակա ոլորտները։

Զեկուցողը նշեց, որ անհրաժեշտ է առավել հաճախ կազմակերպել փոխադարձ դասալսումներ, իրականացնել մասնագիտական քննարկումներ և դիտարկումներ, վեր հանել առկա թերությունները և դրանց շտկման նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ նպաստելով ուսուցիչների մասնագիտական աճին և ուսուցման որակի բարձրացմանը։ Նա նաև ներկայացրեց առաջին կիսամյակի ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփումը։

Զեկուցողն անդրադարձ կատարեց նաև բաց դասերին և դաս-միջոցառումներին ուսուցիչների մասնակցության մակարդակին, ինչպես նաև դրանց արդյունքների քննարկման և վերլուծության կարևորությանը՝ հետագա աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով։

Արտահայտվեցին՝ Ս. Հարությունյանը, Ա. Սարգիսջանյանը, Ռ. Խաչատրյանը։

Արտահայտվողներն իրենց դիտարկումներում ընդգծեցին դասերի կազմակերպման բարձր մակարդակը, դասավանդման մեթոդների բազմազանությունը և սովորողների ակտիվ ներգրավվածության աստիճանը։ Նրանք ներկայացրին նաև առաջարկություններ ուսումնական գործընթացի որակի բարձրացման և մեթոդական աշխատանքների արդյունավետության բարելավման ուղղությամբ։ Կարևոր նշվեց դասապրոցեսի ընթացքում ճիշտ

մեթոդների ու հնարների նպատակային և տեղին կիրառումը, որոնք պետք է ներգրավեն բոլոր աշակերտներին և նպաստեն ուսումնառության արդյունավետությանը:
Բացի այդ, արտահայտվողները շեշտեցին դասալսումների ընթացքում համագործակցային մոտեցումների կիրառման անհրաժեշտությունը: Արդյունքների ամփոփման ժամանակ առանձնակի կարևորվեցին ուսուցիչների ցուցաբերած մոտեցումները, առաջարկությունները և վեր հանված խնդիրների քննարկման եղանակները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման արդյունքները՝ ըստ առարկաների և դասարանների: Նա նշեց, որ նախագծերը նպատակաուղղված են եղել սովորողների ստեղծագործական, հետազոտական և հաղորդակցական կարողությունների զարգացմանը, միջառարկայական կապերի ամրապնդմանը, ինչպես նաև կրթական չափորոշիչների պահանջների իրագործմանը: Անդրադարձ կատարվեց, որ առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է 26 նախագծային աշխատանք, որոնցից 7-րդ դասարաններում՝ 9, 8-րդ դասարաններում՝ 9, իսկ 9-րդ դասարաններում՝ 8 աշխատանք, որոնք իրականացվել են հետևյալ առարկաներից՝ «Ֆրանսերեն», «ԹԳՀԳ», «Հայաստանի պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Աշխարհագրություն», «Գրականություն», «Կերպարվեստ», «Հայոց լեզու», «Արվեստ», «Տեխնոլոգիա», «Երաժշտություն», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Անգլերեն», «Կենսաբանություն», «Ռուսաց լեզու», «Քիմիա» և «Ֆիզիկա»:
Նախագծային աշխատանքները ղեկավարել են համապատասխան առարկաների ուսուցիչները, իսկ իրականացրել են 7–9-րդ դասարանների այն աշակերտները, որոնք ընդգրկված են եղել համապատասխան խմբերում: Հիմք ընդունելով «Հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգը», մեթոդմիավորման որոշումն ու մանկավարժական խորհրդի որոշումը, նախագծերի պաշտպանությունները կազմակերպվել են առարկայական հանձնաժողովների միջոցով, որոնց կազմում ընդգրկվել են տվյալ առարկայի կամ առարկաների ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը, նույն կամ հարակից առարկայի ուսուցիչները և տնօրենի տեղակալը:
Զեկուցողը հավելեց, որ կարգի համաձայն՝ բոլոր նախագծերն ու դրանց արդյունքները հրապարակվել են դպրոցի կայքում՝ ստեղծելով առանձին էջ, հասանելիության և հանրայնացման նպատակով:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ և նախագծային աշխատանքների ղեկավարներ

Նախագծային աշխատանքների ղեկավարները հանգամանալից ներկայացրին իրենց հաշվետվությունները, պրոդուկտները, իրականացման ընթացքում առաջացած խնդիրները և ձեռքբերումները:
Մեթոդական միավորման անդամները քննարկեցին ներկայացված հաշվետվությունները՝ անդրադառնալով նախագծային աշխատանքների թեմատիկ համապատասխանությանը, ուսումնական նպատակների

իրագործմանը, սովորողների ակտիվ ներգրավվածության աստիճանին, կիրառված մեթոդներին և ստացված արդյունքներին: Շեշտադրվեց նախագծերի նպատակային ուղղվածությունը, խմբային աշխատանքի արդյունավետ կազմակերպումը և ներկայացման ձևաչափերի բազմազանությունը, որոնք նպաստեցին աշակերտների ստեղծագործական և գործնական հմտությունների զարգացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման:

Լսեցին 8. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում էլեկտրոնային մատենավարության վարման վիճակի ստուգման արդյունքները՝ ընդգծելով մատյանում արձանագրված թերությունները: Նա նշեց, որ անհրաժեշտ է խստիվ հետևել գնահատման համակարգում կատարված փոփոխություններին, իրականացնել գնահատումը սահմանված ժամկետների շրջանակում և բացառապես ամփոփիչ աշխատանքների ժամանակ:

Առստամյանն առաջարկեց պարբերաբար բանավոր կերպով նախազգուշացնել մեթոդմիավորման անդամներին մատենավարության ընթացքում թույլ տված բացթողումների վերաբերյալ, որպեսզի ապահովվի գրանցումների ճշգրտությունը և գնահատման ընթացքի թափանցիկությունը:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Ս. Ավանեսյանը:

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է վերահսկել ուսուցիչների ամենօրյա աշխատանքը, որը կապված է էլեկտրոնային մատենավարության հետ: Նրանց հորդորն էր լինել առավել ուշադիր, չշեղվել ՕԹՊ-ներից, աշխատանքն ավարտելուց հետո կրկին ստուգել մատյանը և խնդիրների դեպքում համագործակցել մեթոդական միավորման նախագահի, տնօրենի տեղակալի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ԷԿԴԱՄ-ների հետ:

Սերգեյ Ավանեսյանն ընդգծեց, որ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել գնահատականների ժամանակին մուտքագրմանը, թեմաների համապատասխանեցմանը օրացուցային-թեմատիկ պլաններին, ինչպես նաև գրանցումների ճիշտ և ժամանակին կատարմանը՝ ապահովելու գնահատման ճշգրտությունն ու տվյալների ամբողջականությունը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման ամփոփման մասին ինֆորմացիան, առաջարկել ուսուցիչներին ապահովել էլեկտրոնային մատենավարության վարման կարգի խիստ պահպանումը:

Լսեցին 9 Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխության և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի համար Հումանիտար առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանումը՝ ընդգծելով, որ փոփոխություններ չեն նախատեսվում և այն պահպանվելու է նախապես հաստատված ձևաչափով: Շեշտվեց, որ ժամաբաժանման հիմքում ընկած է 2025–2026 ուսումնական տարվա ուսումնական պլանը, որտեղ առաջին և երկրորդ կիսամյակների համար փոփոխություններ չեն նախատեսված:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ նախնական դասաբաշխումը կատարելիս,

ինչպես նաև 2025–2026 ուսումնական տարվա մեկնարկին, քննարկվել է ժամաբաժանման հարցը՝ հաշվի առնելով 5–9-րդ դասարաններում առարկայացանկի հնարավոր փոփոխությունները և նոր ՀՊՉ պահանջները, որոնց համապատասխան կազմվել է 2025–2026 ուսումնական տարվա ուսումնական պլանը և հաստատվել ժամաբաժանման համար:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանումը (կցվում է):

Լսեցին 10 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների և դիտարկման թերթիկների լրացման վերաբերյալ տեղեկատվությունը, շեշտելով, որ աշխատանքները կատարվել են սահմանված պահանջներին համապատասխան: Նա հավելեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքների իրականացման ընթացքում ակտիվ համագործակցություն է իրականացվում ԳՏՄԱԿ-ի հետ:

Զեկուցողն ընդգծեց, որ ըստ սահմանված կարգի՝ երկու ամիսը մեկ անգամ կազմակերպվում են քննարկումներ, որոնց մասնակցում են ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչները, ուսուցիչները, ուսուցչի օգնականները, հատուկ մանկավարժը և ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողները: Այս հանդիպումներին մասնակցում է նաև տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը: Քննարկումների ընթացքում մանրամասն դիտարկվում են փաստաթղթերը, գնահատվում իրականացված աշխատանքները և առանձնակի ուշադրություն է դարձվում աշակերտների ձեռքբերումներին և առաջընթացին:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքների ճիշտ կազմակերպումը և ծնող-ուսուցիչ-աշակցության թիմի արդյունավետ համագործակցությունը՝ շեշտելով, որ ԱՈՒՊ-ի շրջանակներում նախատեսված նպատակների իրագործումն ու դիտարկման թերթիկների պատշաճ լրացումը չափազանց կարևոր են ուսուցման որակի և աշակերտների զարգացման ապահովման համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան:

Լսեցին 11. Ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորման, տարակարգի, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումների մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների հերթական վերապատրաստման գործընթացին ակտիվ մասնակցությունը, ընդգծելով, որ ինչպես 2024–2025, այնպես էլ 2025–2026 ուսումնական տարում կատարվել է ուսուցիչների կարիքի գնահատում, որի արդյունքում 2024–2025 ուսումնական տարում հերթական ատեստավորման է մասնակցել 15 ուսուցիչ, ովքեր հաջողությամբ ավարտել են 1-ին շրջափուլը և 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում մասնակցել 2-րդ շրջափուլին: 2025–2026 ուսումնական տարում հերթական ատեստավորմանը մասնակցել է 11 ուսուցիչ, որոնք նույնպես հաջողությամբ ավարտել են 1-ին շրջափուլը:

Զեկուցողը նաև նշեց, որ 2025 թվականին դպրոցի մանկավարժական անձնակազմը ակտիվ մասնակցություն է ունեցել ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող դասընթացներին՝ ընդհանուր առմամբ իրականացվել է 12 դասընթաց, որոնց մասնակցել է 33 մանկավարժ: Նա

անդրադարձավ նաև «Էսսեագրություն» թեմայով վերապատրաստման դասընթացին, որի նպատակն էր մեթոդմիավորման ուսուցիչներին նախապատրաստել 9-րդ դասարաններում «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաներից միասնական ավարտական քննությանը:

Կամավոր ատեստավորման արդյունքների վերաբերյալ զեկուցողը նշեց, որ 2025 թվականին դպրոցի ուսուցիչները արձանագրել են բարձր արդյունքներ: Առաջին անգամ մասնակցած Կարինե Մալխասյանը, Տաթևիկ Փարսադանյանը, Ռիտա Շալունցը, Կարինե Արզումանյանը, Ռուզաննա Խաչատրյանը և Հայկ Օհանյանը ցուցաբերել են բարձր արդյունքներ, ինչը հաստատեց դպրոցի ուսուցչական կազմի բարձր մասնագիտական ներուժը:

Զեկուցողը ներկայացրեց նաև 2023–2025 թվականներին կամավոր ատեստավորմանը մասնակցած դպրոցի 18 ուսուցիչներին՝ մանրամասն ընդգծելով նրանց մասնագիտական ուղղվածությունը. Մալխասյան Կարինե – դասվար, Փարսադանյան Տաթևիկ – դասվար, Շալունց Ռիտա – դասվար, Արզումանյան Կարինե – «Տեխնոլոգիա», Խաչատրյան Ռուզաննա – «Հասարակագիտություն», Օհանյան Հայկ – «Ֆիզիկա», Ղուլյան Օլյա – «ԹԳՀԳ», Գրիգորյան Թագուհի – «Անգլերեն», Հայրապետյան Մարիամ – «Ռուսաց լեզու», Գյուրջյան Շահանե – «Ռուսաց լեզու», Առստամյան Ալլա – «Մաթեմատիկա», Սարգսյան Լիլիթ – «Հայոց լեզու», Սարգիսջանյան Անուշ – «Հայոց լեզու», Պողոսյան Կարինե – դասվար, Ջավահիրյան Իրինա – դասվար, Պետրոսյան Մարգարիտա – «Ռուսաց լեզու», Հարությունյան Սոնա – «Հայոց լեզու», Աբգարյան Աննա – «Ֆիզկուլտուրա»:

Նշվեց, որ Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ուսուցիչները 2023-2025 թվականներին ցուցաբերել են բարձր ակտիվություն և բարձր արդյունքներ կամավոր ատեստավորման գործընթացում: Ընդհանուր առմամբ, դպրոցի ուսուցչական անձնակազմի 41 տոկոսը մասնակցել է կամավոր ատեստավորմանը, ստանալով բարձր գնահատականներ: Արդյունքների հիման վրա ուսուցիչների համար սահմանվել է 200 000 դրամ դրույքաչափ, ինչպես նաև 30–50 տոկոս հավելավճար:

Զեկուցողն անդրադարձ կատարեց նաև ուսուցիչների տարակարգի շնորհմանը՝ նշելով, որ 2025 թվականի ընթացքում դպրոցի մանկավարժներից 3-րդ աստիճանի տարակարգ են ստացել «ԹԳՀԳ» առարկայի ուսուցչուհի Օլյա Ղուլյանը և «Մաթեմատիկա» առարկայի ուսուցչուհի Ալլա Զեյնալյանը, իսկ ավելի վաղ 1-ին աստիճանի տարակարգ էր ստացել «Հայոց լեզու» առարկայի ուսուցչուհի Սոնա Հարությունյանը:

Զեկուցողն ընդգծեց, որ ուսուցիչների կամավոր ատեստավորումը ծառայում է նրանց մասնագիտական գիտելիքների բացահայտմանը, մինչդեռ տարակարգը չափանիշ է, որը ցույց է տալիս այդ գիտելիքների կիրառումը դասարանում՝ նկատի ունենալով մանկավարժական մոտեցումների և համապատասխան հմտությունների առկայությունը:

Զեկուցողն ընդգծեց, որ 2025 թվականի կամավոր ատեստավորմանը մասնակցել են նաև «Պատմություն» առարկայի ուսուցչուհի Մերի Դանիելյանն ու դասվար Արուս Դոլունցը, որոնք չեն հաղթահարել 60 տոկոսի շեմը, ուստի 2026 թվականին նրանց համար նախատեսվում է իրականացնել կարիքի գնահատում, որից հետո նրանք պետք է մասնակցեն հերթական ատեստավորմանը՝ 1-ին մակարդակով:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողներն ընդգծեցին, որ արդի մեթոդների և դասավանդման հնարների տիրապետումը հատկապես կարևոր է դասի արդյունավետությունն բարձրացնելու համար: Նրանք կարևորեցին պարտադիր վերապատրաստման գործընթացը, քանի որ այն հնարավորություն է տալիս ծանոթանալ նորամուծություններին, կատարվող փոփոխություններին և փորձի արդյունավետ փոխանակում ապահովել:

Կարևորվեց նաև ուսուցիչների ակտիվ մասնակցությունը կամավոր ատեստավորման գործընթացին, քանի որ այն, առաջին հերթին, օգնում է ուսուցչին զարգացնել սեփական մասնագիտական կարողությունները, զբաղվել ինքնակրթությամբ և բարելավել դասավանդման որակը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորման, տարակարգի, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումների մասին զեկուցումը (կցվում է):

Լսեցին 12. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվությունների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի №216-Ն որոշման համաձայն՝ դպրոցի բոլոր խմբավարները ներկայացրել են ամսական և կիսամյակային հաշվետվություններ, որոնցում մանրամասն անդրադարձ է կատարվել 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքներին:

Ընդհանուր առմամբ՝ յուրաքանչյուր խմբավար ներկայացրել է 4 ամսական հաշվետվություն սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսների համար, ինչպես նաև 1 կիսամյակային հաշվետվություն, որտեղ ամփոփված են եղել նշված չորս ամիսների ընթացքում իրականացված աշխատանքները՝ ընդգծելով ձեռքբերումներն ու առկա առաջընթացը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները շեշտեցին, որ խմբավարների հաշվետվությունները կարևոր են ուսումնական գործընթացի արդյունավետությունը գնահատելու և հետագա պլանավորումները առավել նպատակային կազմակերպելու համար: Նրանք կարևորեցին աշխատողի աշխատանքի ընթացքի մոնիտորինգը և ընդգծեցին հաշվետվությունների միջոցով արձանագրված ձեռքբերումների և բարելավման հնարավոր ուղղությունների կարևորությունը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվությունների մասին զեկուցումը և հաստատել հաշվետվությունները:

Լսեցին 13. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա խմբերի մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում՝ հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին, կազմակերպվել է երկարօրյա ուսուցման խմբակ 3-4-րդ և 5-7-րդ դասարանների աշակերտների համար: Աշակերտների ընդգրկումը երկարօրյա խմբերում իրականացվել է 2020 հոկտեմբերի 13-ի №38-Ն որոշման համաձայն, որով հաստատվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը: Համապատասխան այդ կարգի երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝

- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝
  1) սովորողի ծնողի դիմումի հիման վրա՝
  ա. ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու.
  բ. դասապատրաստումներին աջակցելու.
  գ. ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու

նպատակներով:

- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է նաև հանրակրթության պետական չափորոշչի (այսուհետ՝ ՀՊՉ) ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների ներգրավվածության վրա, շեշտեց, որ համապատասխան կարգի ՀՊՉ-ի ներդրման ժամանակացույցով սահմանված դասարաններում ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան սովորողի ուսումնառության ցածր արդյունքների դեպքում առարկայական ծրագրի յուրացումը ապահովելու նպատակով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ սովորողի դասղեկը երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար հիմնավորված գրավոր առաջարկով դիմում է տնօրենին՝

1) այն դասարաններում, որտեղ սովորողների որևէ առարկայի առաջադիմության գնահատումն իրականացվում է բնութագրող գնահատման արդյունքում՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին ձևավորող գնահատման հիման վրա արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու դեպքում.

2) այն դասարաններում, որտեղ իրականացվում է միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից ուսումնառության փուլի (թեմա, ենթաթեմա, թեմաներ) ավարտին ձևավորող գնահատման արդյունքում արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու, ինչպես նաև ամփոփիչ գնահատման արդյունքում 1-3 միավոր գնահատվելու դեպքում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները ընդգծեցին, որ սահմանված կարգով երկարօրյա խմբերում ընդգրված աշակերտների մոտ նկատվել է տեսանելի առաջընթաց, իսկ ուսուցիչները հաջողությամբ իրականացրել են նրանց համար նախատեսված նպատակներն ու առաջադրանքները:

Երկարօրյաների ղեկավարները ներկայացրին իրենց հաշվետվությունները՝ մանրամասն անդրադառնալով կատարված աշխատանքներին, ձեռքբերումներին և գործընթացում արձանագրված արդյունքներին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված երկարօրյա խմբերի մասին զեկուցումը և հաստատել հաշվետվությունները:

Լսեցին 14. Դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից դպրոցում նախատեսվում է ձևավորել երեխաների պաշտպանության խումբ, որի կազմում ընդգրկվելու են դպրոցի տնօրինության և մանկավարժական անձնակազմի ներկայացուցիչներ, ներառական կրթության բաժնի աշխատակիցներ, ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչներ, ծնողներ և շահագրգիռ այլ կառույցների ներկայացուցիչներ: Խմբի հիմնական նպատակն է ապահովել երեխաների իրավունքների պաշտպանությունը, ստեղծել անվտանգ և աջակցող ուսումնական միջավայր, արձագանքել ցանկացած ռիսկային կամ խնդիր ստեղծող իրավիճակի և կանխարգելիչ աշխատանքներ իրականացնել՝ միաժամանակ բարձրացնելով ուսուցիչների և ծնողների գիտակցությունը երեխաների իրավունքների մասին:

Զեկուցողը շեշտեց, որ խմբի գործունեությունը հիմնված է երեխաների պաշտպանությունը առաջնահերթություն դարձնելու վրա՝ ապահովելով նրանց ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական անվտանգությունը: Նույն

մոտեցումը ներկայում պիլոտային սկզբունքով իրականացվում է հանրապետության մի շարք այլ դպրոցներում, որտեղ փորձարկվում են երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված նոր մեթոդներ և ստուգվում է դրանց արդյունավետությունը: Պիլոտային փորձարկումները հաջողությամբ ավարտելուց հետո նախատեսվում է այս սկզբունքը ընդլայնել և ներդնել հանրապետության բոլոր դպրոցներում, ինչի նպատակն է ստեղծել անվտանգ, ներառական և պաշտպանված կրթական միջավայր՝ բոլոր աշակերտների համար:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ երեխաների պաշտպանության խմբի ստեղծումը կարևոր քայլ է երեխաների իրավունքների պաշտպանությունն ապահովելու և անվտանգ ուսումնական միջավայրի ձևավորման համար: Նրանք նշել են, որ նման նախաձեռնությունը կնպաստի երեխաների ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական անվտանգությանը, կուժեղացնի ուսուցիչների, ծնողների և այլ շահագրգիռ կողմերի համագործակցությունը, ինչպես նաև կխթանի կրթական գործընթացում ներառական և աջակցող մոտեցումների ընդլայնումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորման մասին զեկուցումը:

Լսեցին 15. 5-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ տնօրենի, մեթոդմիավորման նախագահի և մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացված դասալսումների ընթացքում պարզվել է, որ 5–9-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները: Դասալսվող ուսուցիչների մոտ առկա էին օրացուցային-թեմատիկ պլանները և օրվա դասի պլանները՝ էլեկտրոնային տարբերակով, իսկ մատենավարությունը կազմակերպված էր այդ պլաններին համապատասխան: Զեկուցողը շեշտեց, որ օրացուցային-թեմատիկ պլաններում հստակ սահմանված էին տվյալ թեմայի նպատակները և վերջնարդյունքները, ինչը թույլ է տալիս ուսուցիչներին պատկերացնել, թե դասի ավարտին ինչն է պետք ապահովել:

Միաժամանակ նշվեց, որ որոշակի խնդիրներ շարունակում են նկատվել առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման հարցում, հատկապես այն դասարաններում, որտեղ աշակերտների խտությունը մեծ է, և հնարավոր չէ բոլոր աշակերտների մոտ հավասարաչափ իրականացնել կարողությունների զարգացում: Աշակերտների մեծ թվաքանակի հետ կապված ուսուցիչները դժվարանում են բոլորին հավասարապես ներգրավել դասապրոցեսին և բավարար ուշադրություն դարձնել նրանց ինքնուրույն աշխատանքի իրականացմանը: Այնուհանդերձ, փոքր խմբերի դեպքում ուսուցիչները հաջողությամբ ապահովում են դասի վերջնարդյունքները՝ ՕԹՊ-ների պահանջներին համապատասխան:

Զեկուցողը նաև կրկին ուշադրություն հրավիրեց գնահատման հետ կապված հարցերի վրա: Նախորդ քննարկումներից հետո նկատելի է, որ ուսուցիչները հիմնականում տիրապետում են գնահատման նոր համակարգին, հետևում են սահմանված պահանջներին, իսկ աշակերտները գնահատվում են բացառապես ամփոփումների ժամանակ:

Զեկուցողն առաջարկեց շարունակել ուշադրության կենտրոնում պահել առարկայի ծրագրով նախատեսված կարողությունների զարգացումը, տվյալ թեմայի վերջնարդյունքների ապահովումը, աշակերտների ներգրավվածությունը ուսումնական գործընթացում, ինչպես նաև գնահատման նոր համակարգի կիրառությունը, որպեսզի դասի

արդյունավետությունը և սովորողների ձեռքբերումները շարունակեն բարելավվել:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ դասալսումների արդյունքում պարզ է դարձել՝ ուսուցիչները հիմնականում բավարարում են նոր ՀՊՉ-ների պահանջները, իսկ օրացուցային-թեմատիկ պլանների ու մատենավարության ճիշտ կազմակերպումը նպաստում է դասի արդյունավետությանը: Նրանք նկատեցին, որ մեծ խմբերում դժվարություններ կան աշակերտների հավասար ներգրավվածությունը և կարողությունների զարգացումը ապահովելու հարցում, ուստի անհրաժեշտ է կիրառել լրացուցիչ մեթոդներ՝ բոլոր աշակերտների ներգրավվածությունը բարձրացնելու համար: Արտահայտվողները կարևորեցին նաև գնահատման նոր համակարգին տիրապետելու անհրաժեշտությունը և ընդգծեցին, որ շարունակական ուշադրությունը ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման, վերջնարդյունքների ապահովման և ուսուցման արդյունավետության բարձրացման վրա կմնա առաջնահերթություն:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 5-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին ինֆորմացիան:

Լսեցին 16. 2025-2026 ուսումնական տարվա նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը կարևորեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում նախագծային աշխատանքի կազմակերպման ընթացքում ձեռք բերված փորձը՝ ընդգծելով դրա նշանակությունը ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Նա ներկայացրեց նաև 2025–2026 ուսումնական տարում նախագծային աշխատանքների իրականացման կարգը, իրականացված փոփոխությունները և դրանց նպատակահարմարությունը:

Զեկուցողի տեղեկացմամբ՝ մասնախմբի անդամների կողմից արդեն իսկ մշակվել և ներկայացվել են համապատասխան նախագծային թեմաներ 7–9-րդ դասարանների համար՝ համաձայն հաստատված կարգի պահանջների: Այդ թեմաները նախապես հրապարակվել են, ինչի արդյունքում ապահովվել է թեմաների ընտրության թափանցիկությունն ու աշակերտների ակտիվ ներգրավվածությունը:

Նշվեց, որ ընթացիկ ուսումնական տարում նախագծային աշխատանքներին կարող են մասնակցել նվազագույնը երեք և առավելագույնը յոթ աշակերտ, ինչը հնարավորություն է տալիս խթանել խմբային աշխատանքը, փոխգործակցությունը և յուրաքանչյուր աշակերտի արդյունավետ մասնակցությունը: Աշակերտական խմբերը ձևավորվել են նախապես ներկայացված թեմաների հիման վրա. ուսուցիչների կողմից թեմաները փոխանցվել են աշակերտական հաղորդակցման հարթակներով (չաթերի միջոցով), ինչի արդյունքում արդեն իրականացվել է խմբերի ձևավորումը, նախագծային թեմաների և ղեկավարների ընտրությունը:

Զեկուցողը մանրամասն անդրադարձավ նաև հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման և նախագծային աշխատանքների իրականացման կարգին: Նա առաջարկեց նախագծային աշխատանքների պաշտպանությունը կազմակերպել առարկայական հանձնաժողովների ձևաչափով՝ ապահովելով մասնագիտական և օբյեկտիվ գնահատում: Առաջարկվող հանձնաժողովների կազմում պետք է ընդգրկվեն տվյալ կամ հարակից առարկաների

ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը, ինչպես նաև տնօրենի տեղակալը։

Զեկույցի ավարտին ներկայացվեց նախագծային աշխատանքների գնահատման կարգը՝ սահմանված ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված նախագծային ուսուցման հայեցակարգում և ուսուցիչների վերապատրաստման մոդուլի հաստատման վերաբերյալ հրամանով։ Զեկուցողը շեշտեց գնահատման չափորոշիչների հստակության, միասնական կիրառման և գնահատման գործընթացում հավասարության ու արդարության ապահովման կարևորությունը։

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը, Ս. Հարությունյանը։

Արտահայտվողները կարևորեցին հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման, գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգով սահմանված պահանջների պահպանումը՝ ընդգծելով դրանց առանցքային դերը ուսումնական գործընթացի կազմակերպման գործում։ Նրանց կարծիքով՝ նշված պահանջների պատշաճ իրականացումը նպաստում է կրթական գործընթացի բազմազանության ապահովմանը, ինչպես նաև սովորողների ակտիվ, գիտակցված և ներգրավված մասնակցությանը։

Միաժամանակ անդրադարձ կատարվեց նախագծային աշխատանքների իրականացման կարգում կատարված փոփոխություններին՝ ընդգծելով դրանց կարևորությունն ու արդիականությունը։ Նշվեց, որ իրականացված փոփոխությունները միտված են սովորողների հետազոտական և ստեղծագործական գործունեության առավել արդյունավետ կազմակերպմանը, ինքնուրույն մտածողության զարգացմանը, ինչպես նաև թիմային աշխատանքի և համագործակցության հմտությունների ձևավորմանը։ Արդյունքում, այս փոփոխությունները նպաստում են ուսումնական գործընթացի որակի և ընդհանուր արդյունավետության շարունակական բարձրացմանը։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախագծային աշխատանքների թեմաները, պլանները, թեմատիկ պլանները, ղեկավարներին, մատյանները և հանձնաժողովների կազմը (կցվում է)։

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №6

«03» փետրվար 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Ռուզաննա Խաչատրյան
6. Արաքսյա Առստամյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 5-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողություն:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. Էլեկտրոնոյին մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. 7-9-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկաների դրվածքի ուսումնասիրություն:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
7. ԱՈՒՊ-ներ, դիտարկման թերթիկներ:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
8. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
9. 5-9-րդ դասարաններում «Մայրենի», «Հայոց լեզու» առարկաներից տնօրենության կողմից գրավոր աշխատանքների նախապատրաստում և գրավորների հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման դեկտեմբեր ամսվա օրակարգի կատարողականը: Ամփոփեց մեթոդմիավորման

նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները կատարվել են:

Արտահայտվեցին՝ Ս. Հարությունյանը, Լ. Սարգսյանը:

Արտահայտվողները նշեցին քննարկված հարցերի կարևորության ու անհրաժեշտության մասին: Կատարված դասալսումների արդյունքների քննարկումները, դպրոցական առարկայական օլիմպիադաների կազմակերպումը, ծրագրերի կատարողականի ստուգումները, էլեկտրոնային մատենավարության ստուգումների վերլուծությունը, տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների քննարկումներն ու վերլուծությունները հնարավորություն են տալիս առաջացած խնդիրները ժամանակին նկատել և աշխատանքներ տանել շտկելու, վերացնելու համար:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 5-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 5-9-րդ դասարաններում նոր չափորոշիչների ներդրման գործընթացն իրականացվում է գործող իրավական ու մեթոդական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Ներկայացվեց դասավանդման ընթացքում կիրառվող ուսուցման ժամանակակից մեթոդների, չափորոշչային պահանջներին համապատասխան ուսումնառության արդյունքների ապահովումը, ինչպես նաև ուսուցիչների կողմից կիրառվող ձևավորող գնահատման մեխանիզմները:

Ընդգծվեց, որ ուսումնական գործընթացում կիրառվում են սովորողակենտրոն ուսուցման մոտեցումները, ինտեգրված դասերի կազմակերպումը, ինչպես նաև նախագծային և հետազոտական աշխատանքները՝ որպես չափորոշչի առանցքային բաղադրիչներ: Զեկոցողը կարևորեց առարկայական ծրագրերի, ՕԹՊ-ների համապատասխանությունը ՀՊՉ պահանջներին, ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևակերպմանը և դրանց իրականացման մակարդակին:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը

Մերի Դանիելյանը կարևորեց, ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացման հարցը՝ շեշտելով շարունակական վերապատրաստումների, մեթոդական խորհրդատվությունների և փորձի փոխանակման արդյունավետությունը: Նշեց, որ ընթացիկ վերահսկողության շրջանակում իրականացվում են դասալսումներ: Նոր ՀՊՉ ներդրման գործընթացում առկա են ինչպես դրական առաջընթացներ, այնպես էլ որոշակի խնդիրներ, որոնք հիմնականում կապված են նոր մոտեցումների լիարժեք յուրացման, ժամանակի արդյունավետ բաշխման և ուսումնական բովանդակության ճիշտ պլանավորման հետ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 5-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին ինֆորմացիան:

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների կողմից մատենավարության ոլորտում իրականացված հետևողական և պատասխանատու աշխատանքները՝ ընդգծելով դրանց նշանակությունը ուսումնական գործընթացի կազմակերպման և փաստաթղթավորման որակի բարձրացման գործում: Մշտական վերահսկողության և համակարգված մոտեցման շնորհիվ հումանիտար առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների շրջանում զգալիորեն նվազել են բացթողումները, բարձրացել է աշխատանքների արդյունավետությունը և

ապահովվել է սահմանված պահանջների առավել լիարժեք կատարումը:

Արտահայտվեցին՝ Լ. Սարգսյանը, Ս. Հարությունյանը:

Արտահայտվողները նշեցին, որ հետևողական և նպատակաուղղված աշխատանքներն էականորեն նպաստում են ուսուցիչների կարողությունների զարգացմանը էլեկտրոնային մատենավարության ոլորտում: Նրանք ընդգծեցին, որ կանոնավոր գործելակերպի և շարունակական վերահսկողության արդյունքում բարձրանում է գրանցումների ճշգրտությունը և համակարգվածությունը:

Միաժամանակ կարևորվեց ամենօրյա գրանցումների կատարումը, քանի որ այդ դեպքում նվազում է անճշտություններ թույլ տալու հավանականությունը, ապահովվում է տեղեկատվության ժամանակին մուտքագրումը և բարձրանում է կրթական գործընթացի թափանցիկությունն ու արդյունավետությունը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին տեղեկատվությունը:

Լսեցին 5. 7-9-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկայի դրվածքի ուսումնասիրության մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողն առաջարկեց փետրվար ամսվա ընթացքում 7–9-րդ դասարաններում իրականացնել «Հասարակագիտություն» առարկայի ուսումնառության դիտարկում և վերլուծություն՝ նպատակ ունենալով գնահատել աշակերտների գիտելիքների մակարդակը, բացահայտել առկա դժվարությունները և աջակցել ուսուցիչներին դրանց հաղթահարման գործում: Նախաձեռնության շրջանակում նախատեսվում է քննարկել նաև դասավանդման մեթոդների կատարելագործման և դասի արդյունավետության բարձրացման հնարավոր ուղիները՝ ապահովելով ուսումնական գործընթացի շարունակական բարելավում:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Սարգիսջանյանը

Արտահայտվողները նշեցին, որ «Հասարակագիտություն» առարկայի դրվածքի ուսումնասիրման ընթացքում նպատակահարմար է կազմակերպել փոխադարձ դասալսումներ ոչ միայն հումանիտար առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների մասնակցությամբ, այլև ներգրավել այլ մեթոդմիավորումների ներկայացուցիչներին՝ փորձի փոխանակման և լավագույն փորձի տարածման նպատակով:

Միաժամանակ ընդգծվեց, որ անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասապրոցեսում աշակերտների ակտիվ մասնակցությանը, նրանց ինքնուրույն աշխատելու կարողությունների և հմտությունների զարգացմանը, բանավոր խոսքի կատարելագործմանը, ինչպես նաև Հանրակրթական պետական չափորոշիչների պահանջների լիարժեք իրականացմանը:

Որոշեցին՝ Հաջորդիվ ժամանակահատվածում «Հասարակագիտություն» առարկայից իրականացնել դրվածքի ուսումնասիրություն և արդյունքները քննարկել ՄՄ և մանկավարժական խորհուրդների նիստերում:

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈւԴԱՏՊ) հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:

(զեկուցող՝ Ա.Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց ՈւԴԱՏՊ-ին համապատասխան հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունը՝ ընդգծելով դրանց համակարգված և նպատակաուղղված բնույթը: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ուսումնական գործընթացի կազմակերպման շարունակական վերահսկողություն, ինչպես նաև կազմակերպվել են նախապատրաստական աշխատանքներ՝ մարզային օլիմպիադաներին պատշաճ մասնակցություն ապահովելու նպատակով:

Անվտանգ և ապահով կրթական միջավայրի տարվա ամսական միջոցառումների ժամանակացույցին համապատասխան իրականացվել է «Ճանաչենք մեր դպրոցը. անվտանգ մուտք և ելք» թեմայով բաց դաս, որը կազմակերպվել էր դպրոցի Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նախագահ Աննա Աբգարյանի և «ՆԶՊ» առարկայի ուսուցիչ Արտուր Հովսեփյանի նախաձեռնությամբ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության Գորիսի հրշեջ-փրկարարական ջոկատի հետ համագործակցությամբ:

Բացի այդ, անցկացվել է Հայոց բանակի օրվան նվիրված դաս-միջոցառում, ինչպես նաև իրականացվել են կրթական ծրագրերի արդյունավետ իրականացմանն ուղղված բազմաբնույթ աշխատանքներ, որոնք նպաստել են կրթության որակի բարձրացմանը և ուսումնական միջավայրի շարունակական զարգացմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Արտահայտվողները նշեցին, որ ՈՒԴԱՏՊ-ի շրջանակում իրականացված աշխատանքները նպաստել են դասավանդման որակի բարձրացմանը և ուսումնական գործընթացի առավել համակարգված կազմակերպմանը: Ընդգծվեց ուսուցիչներին ցուցաբերվող մեթոդական աջակցության կարևորությունը, մասնավորապես՝ օրացուցային թեմատիկ պլանների կազմման, ուսումնական նպատակների հստակ ձևակերպման և ժամանակի ճիշտ բաշխման հարցերում:

Միաժամանակ արտահայտվեց կարծիք, որ իրականացված խորհրդատվությունները ևս դրական ազդեցություն են ունեցել դասավանդման որակի բարելավման և ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացման վրա:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով նախատեսված հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները:

Լսեցին 7. ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների մշակման, իրականացման և վերահսկման, ինչպես նաև դիտարկման թերթիկների պատշաճ լրացման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը: Նա ընդգծեց, որ նշված աշխատանքներն իրականացվել են սահմանված չափորոշիչներին, կարգերին և մասնագիտական պահանջներին համապատասխան՝ ապահովելով յուրաքանչյուր աշակերտի անհատական կարիքների հաշվառումը և կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Միաժամանակ նշվեց, որ իրականացված աշխատանքները նպաստել են ուսումնական առաջադիմության մշտադիտարկմանը, խնդիրների ժամանակին բացահայտմանը և համապատասխան աջակցող միջամտությունների պլանավորմանը՝ ուղղված ներառական կրթության որակի շարունակական բարձրացմանը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքի արդյունավետ և ճիշտ կազմակերպումը, ինչպես նաև ծնող-ուսուցիչ-աջակցության թիմի սերտ համագործակցության նշանակությունը: Նա ընդգծեց օրացուցային-թեմատիկ պլաններով սահմանված նպատակների ամբողջական և արդյունավետ իրագործումը ԱՈՒՊ-ի շրջանակներում, ինչպես նաև դիտարկման թերթիկների ճիշտ և համակարգված լրացման կարևորությունը՝ ընդգծելով, որ այս մոտեցումները նպաստում են աշակերտների ուսումնական առաջընթացի հետևողական գնահատմանը և կրթական գործընթացի որակի բարձրացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին զեկուցումը:

Լսեցին 8. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսների ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունները: Ներկայացվեց աշխատանքների ընթացքը, անցկացված դասալսումները, տրամադրված մեթոդական աջակցությունները, ինչպես նաև տարբեր նախաձեռնություններ՝ ընդգծելով դրանց նպատակաուղղվածությունը և արդյունավետությունը:

Անդրադարձ կատարվեց նոր ՀՊՉ ներդրման արդյունքներին՝ ըստ կրթական աստիճանների, իրականացված աշխատանքներին էսսեագրության ոլորտում և ուսումնական նախագծերի իրականացման ընթացքին: Բացի այդ, առանձնակի ուշադրություն դարձվեց դպրոցի կառավարման արդյունավետությանը՝ նկատի ունենալով նրա դերը ուսումնադաստիարակչական գործընթացների կազմակերպման և կրթական ծրագրերի որակի ապահովման գործում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ ուսումնադաստիարակչական աշխատանքները մեծ մասամբ իրականացվել են նախապես հաստատված պլանի համաձայն, ինչը ապահովել է ուսումնական գործընթացի նպատակային և համակարգված կազմակերպում: Նրանց կարծիքով, միջոցառումների արդյունավետությունը առավելապես պայմանավորված էր ուսուցիչների պատասխանատու, հետևողական և ակտիվ մոտեցմամբ՝ ինչպես նախապատրաստական աշխատանքների, այնպես էլ իրականացման փուլերում:

Միաժամանակ ընդգծվեց, որ այս մոտեցումը նպաստել է աշակերտների համար արդյունավետ և ապահով ուսումնադաստիարակչական միջավայր ստեղծելուն, բարձրացրել է դասերի որակը, աջակցել անձի բազմակողմանի զարգացմանը և նպաստել կրթական ծրագրերի համընդհանուր արդյունավետության ամրապնդմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԿԳՄՍ նախարարությանն ուղարկված ուսումնադաստիարակչական աշխատանքների սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունը (կցված է էլեկտրոնային տարբերակով):

Լսեցին 9. 5-9-րդ դասարաններում «Մայրենի», «Հայոց լեզու» առարկաներից տնօրենության կողմից գրավոր աշխատանքների նախապատրաստման և գրավորների հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ այս ուսումնական տարվա ընթացքում՝ կապված դպրոցի վերանորոգման աշխատանքների և դասապրոցեսի կազմակերպման առնչվող դժվարությունների հետ, տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքները՝ և՛ առաջին, և՛ երկրորդ կիսամյակներին, կիրականացվեն երկրորդ կիսամյակի ընթացքում: Ելնելով ուսումնական գործընթացի կազմակերպման դժվարություններից, գրավոր աշխատանքները անցկացվելու են թղթային տարբերակով, ի տարբերություն նախորդ տարվա, երբ աշակերտներն աշխատում էին QR կոդերի միջոցով:

Նշվեց, որ 2025–2026 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում՝ 5–6-րդ դասարաններում «Մայրենի», իսկ 7–9-րդ դասարաններում «Հայոց լեզու» առարկաներից տնօրենության կողմից նախատեսված գրավոր աշխատանքները կտրվեն թեստային տարբերակով՝

նախապես հաստատված օրինակներից: Բացի այդ, կարևոր է հաշվի առնել առարկայական չափորոշչային պահանջները՝ ապահովելով գնահատման ճշգրտությունն ու հստակությունը:

Զեկուցողն ընդգծեց, որ ուսուցիչները պետք է ստուգեն ոչ միայն իրենց դասարանների գրավոր աշխատանքները, այլ նաև կիրառեն խառը սկզբունքը՝ ապահովելով աշխատանքի օբյեկտիվ և անկախ գնահատում:

Հաշվի առնելով առկա պայմանները և ուսուցիչների կողմից ներկայացված առաջարկությունները, գրավոր աշխատանքները պետք է կազմակերպվեն հնարավորինս առանց խախտումների: Թեստերի մի քանի տարբերակներից յուրաքանչյուր դասարանի համար պատահականության սկզբունքով կընտրվի մեկը՝ ուսումնական մասի ղեկավարի և մեթոդմիավորման նախագահի համատեղ վերահսկողությամբ:

Արտահայտվեցին՝ Ս. Հարությունյանը, Լ.Սարգսյանը, Ա.Սարգիսջանյանը:

Արտահայտվողներն ընդգծեցին, որ ստեղծված պայմաններում անհրաժեշտ է պահպանել անաչառությունը և ապահովել աշխատանքների իրականացման համար բոլոր անհրաժեշտ պայմանները, որպեսզի հնարավոր լինի ճշգրիտ գնահատել աշակերտների գիտելիքների իրական մակարդակը: Նրանք նշեցին, որ միայն այս մոտեցման շնորհիվ հնարավոր կլինի ստանալ օբյեկտիվ պատկեր և արդյունավետորեն գնահատել ուսումնական գործընթացի արդյունքները:

Որոշեցին՝

1. 5-9-րդ դասարաններում «Մայրենի», «Հայոց լեզու» առարկաներից տալ տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ՝ 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի համար:
2. Հաստատել գրավոր աշխատանքների տարբերակները

Մ/Մ նախագահ՝ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №7

«27» փետրվարի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 5-9-րդ դասարաններում «Մայրենի», «Հայոց լեզու» առարկաներից տնօրենության կողմից 1-ին կիսամյակի գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝Ա. Առստամյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. 7-9-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի փետրվար ամսվա աշխատանքներ:
(զեկուցող՝Ա.Գևորգյան)
7. 9-րդ դասարանում «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաներից փորձնական քննության անցկացում:
(զեկուցող՝Մ. Դանիելյան)
8. Մարզային և հանրապետական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
9. 5-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ

նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 5-9-րդ դասարաններում «Մայրենի», «Հայոց լեզու» առարկաներից տնօրենության կողմից 1-ին կիսամյակի գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց գրավոր աշխատանքների արդյունքների վերլուծությունը: Անդրադարձ կատարվեց սովորողների առաջադիմությանը, գիտելիքների մակարդակին, առավել հաճախ հանդիպող սխալներին և դրանց պատճառներին: Նշվեց, որ արդյունքներն ընդհանուր առմամբ բավարար են, սակայն առկա են թեմաներ, որոնք պահանջում են լրացուցիչ աշխատանք և կրկնություն: Զեկուցողը կարևորեց լրացուցիչ աշխատանքների կազմակերպումը՝ արձանագրված բացթողումները վերացնելու նպատակով:

Արտահայտվեցին՝ Անուշ Սարգիսջանյանը, Սոնա Հարությունյանը

Արտահայտվողները կարևորեցին գրավոր աշխատանքների արդյունքների պարբերական վերլուծությունը՝ որպես ուսուցման որակի բարձրացման կարևոր միջոց:

Սոնա Հարությունյանն առաջարկեց կազմակերպել լրացուցիչ աշխատանքներ՝ արձանագրված բացթողումները վերացնելու նպատակով և հետևողականորեն իրականացնել սովորողների գիտելիքների մշտադիտարկում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցի մասին:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ նախորդ ուսումնական տարիների համեմատ՝ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատյանների վարման գործընթացում արձանագրված թերությունները զգալիորեն նվազել են և չեն նկատվում բոլոր ուսուցիչների մոտ: Այնուամենայնիվ, նա ընդգծեց, որ անհրաժեշտ է աշխատանքները կազմակերպել առավել հետևողականորեն և իրականացնել սահմանված ժամկետներում: Ըստ զեկուցողի՝ նման մոտեցումը կօգնի ապահովել էլեկտրոնային մատյանների պատշաճ վարումը և խուսափել հետագայում առաջացող ավելորդ դժվարություններից:

Արտահայտվեցին՝ Սերգեյ Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ուսուցիչների կողմից աշխատանքների բարեխիղճ և պատասխանատու իրականացումը: Նա նշեց, որ մշտապես պատրաստ է աջակցել մանկավարժներին՝ արձանագրված թերություններն ու հնարավոր բացթողումները ժամանակին շտկելու և աշխատանքային գործընթացը ավելի արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ:

Նա նաև ընդգծեց, որ կարևոր է մատենավարությունը կազմակերպել թեմատիկ հաջորդականությանը համապատասխան՝ պահպանելով սահմանված պահանջներն ու ժամկետները: Սերգեյ Ավանեսյանը համաձայնեց զեկուցողի դիտարկումների հետ՝ նշելով, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում արձանագրված բացթողումները նախորդ տարիների համեմատ անհամեմատ քիչ են, իսկ վարչական միջամտությունների անհրաժեշտություն առհասարակ չի առաջացել:

Որոշեցին՝ Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: Տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանին հանձնարարել պարբերաբար իրականացնել

էլեկտրոնային մատյանի դիտարկումներ, բացթողումներ ունեցող ուսուցիչներին տեղեկացնել դրանց մասին և առաջարկել ողջամիտ ժամանակահատված՝ դրանք վերացնելու համար։

Լսեցին 5. 7-9-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփում։

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման գործընթացի ուսումնասիրության արդյունքները։ Նշվեց, որ դասերը կազմակերպվում են ուսումնական ծրագրին համապատասխան, պահպանվում է ուսումնական թեմատիկ պլանների համապատասխանությունը, կիրառվում են նոր չափորոշչային պահանջներին համահունչ մեթոդներ և հնարներ։ Դասապրոցեսի ընթացքում կիրառվում են խմբային աշխատանքներ, քննարկումներ, բանավեճեր, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) գործիքներ։ Անդրադարձ կատարվեց նաև սովորողների մասնակցության մակարդակին, նրանց հետաքրքրվածությանը և արժեքային դիրքորոշումների ձևավորման գործընթացին։

Միաժամանակ ընդգծվեց, որ անհրաժեշտ է շարունակական ուշադրություն դարձնել սովորողների վերլուծական և քննադատական մտածողության զարգացմանը։ Զեկուցողը կարևորեց նաև դասերի ընթացքում քննարկումների հաճախականությունը՝ անհրաժեշտ համարելով անդրադառնալ առաջացող դժվարություններին և բացթողումներին։

Նշվեց, որ ուսումնասիրության շրջանակում կազմակերպված քննարկումներին և դասալսումներին մասնակցել են տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, մեթոդմիավորման նախագահը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը և հումանիտար առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչները։ Դասալսումների նպատակն էր ծանոթանալ սովորողների գիտելիքների մակարդակին, ինչպես նաև աջակցել ուսուցիչներին՝ առկա խնդիրների լուծման և դասերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ։

Դասալսումների ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել նաև ուսուցիչների կողմից նոր չափորոշչային պահանջների կիրառմանը և սահմանված վերջնարդյունքների ապահովմանը։

Արտահայտվեցին՝ Լ. Սարգսյանը, Ս. Ավանեսյանը, Ս. Հարությունյանը։

Արտահայտվողները կարևորեցին «Հասարակագիտություն» առարկայի նշանակությունը սովորողների քաղաքացիական կրթության ձևավորման գործընթացում՝ ընդգծելով դրա դերը արժեքային համակարգի, իրավագիտակցության և ակտիվ քաղաքացիական դիրքորոշման ձևավորման գործում։

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է առավել հաճախ կիրառել լրացուցիչ մեթոդական նյութեր և բազմազան ուսուցման մեթոդներ։ Նա նաև ընդգծեց, որ դպրոցում ընթացող հիմնանորոգման աշխատանքների և երկհերթ ուսուցման պայմաններում երբեմն առաջանում են ընթացիկ դժվարություններ՝ կապված պաստառների և ՏՀՏ գործիքների կիրառման հետ։ Այնուամենայնիվ, նրա խոսքով՝ ուսուցիչները նույնիսկ նման պայմաններում կարողանում են պատշաճ կերպով կազմակերպել դասապրոցեսը և ապահովել ուսուցման արդյունավետությունը։

Սոնա Հարությունյանը կարևորեց, որ «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման գործընթացի ուսումնասիրության շրջանակում նպատակահարմար է կազմակերպել փոխադարձ դասալսումներ ոչ միայն հումանիտար առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների մասնակցությամբ, այլ նաև ցանկալի է այդ գործընթացում ներգրավել այլ

մեթոդմիավորումների ուսուցիչների՝ փորձի փոխանակման և համագործակցության ընդլայնման նպատակով։

Լիլիթ Սարգսյանն իր հերթին ընդգծեց, որ անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել սովորողների ինքնուրույն աշխատելու կարողությունների և հմտությունների զարգացմանը, ինչը կնպաստի նրանց ուսումնառության արդյունավետության բարձրացմանը և քննադատական մտածողության ձևավորմանը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 7-9-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին տեղեկատվությունը։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի փետրվար ամսվա աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա.Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում փետրվար ամսվա ընթացքում իրականացված և ընթացիկ աշխատանքների ամփոփ պատկերը։

Նշվեց, որ փետրվար ամսվա ընթացքում տարեկան պլանի շրջանակում հումանիտար առարկաների ուսուցիչների կողմից իրականացվել են մի շարք կազմակերպչական, ուսումնական և դաստիարակչական միջոցառումներ։ Հատուկ ուշադրություն է դարձվել սովորողների ընթերցանության մշակույթի ձևավորմանը, խոսքի զարգացմանը, վերլուծական մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը։ Միաժամանակ անդրադարձ է կատարվել առարկայական օլիմպիադաների տարածքային փուլին սովորողների մասնակցությանը, ինչպես նաև դպրոցի ղեկավար կազմի՝ տնօրենի, տնօրենի տեղակալի, մեթոդմիավորման նախագահի և զեկուցողի կողմից իրականացված վերահսկողական աշխատանքներին։

Ընդհանուր առմամբ նշվեց, որ փետրվար ամսվա ընթացքում նախատեսված աշխատանքներն իրականացվել են պլանավորված ծավալով և նպաստել են սովորողների գիտելիքների ամրապնդմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, ինչպես նաև ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրվածության և մոտիվացիայի բարձրացմանը։

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Մ.Դանիելյանը

Արտահայտվողները կարևորեցին առարկայական օլիմպիադաների մարզային փուլին սովորողների ակտիվ և արդյունավետ մասնակցությունը՝ նշելով, որ արձանագրվել է առաջադիմության դրական տեղաշարժ։ Նրանք նաև բարձր գնահատեցին փետրվար ամսվա ընթացքում կազմակերպված միջոցառումների արդյունավետությունը և դրանց դաստիարակչական նշանակությունը։

Մերի Դանիելյանն իր խոսքում անդրադարձավ նաև աշխատանքի ընթացքում առաջացած որոշ դժվարություններին՝ ներկայացնելով դրանց հաղթահարման հնարավոր ուղիները։ Նա նաև առաջարկություններ ներկայացրեց ուսումնադաստիարակչական աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման և հետագա գործունեության կատարելագործման ուղղությամբ։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի փետրվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Լսեցին 7. 9-րդ դասարանում «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաներից փորձնական քննության անցկացման մասին հարցը։

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ 2025–2026 ուսումնական տարվա մարտ ամսվա ընթացքում նախատեսվում է անցկացնել «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաների փորձնական քննություն՝ էսսեագրության տարբերակով: Նշվեց, որ փորձնական քննությունների անցկացումը նպատակ ունի ստուգելու սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը, բացահայտելու առկա բացթողումները, ինչպես նաև ապահովելու առավել արդյունավետ նախապատրաստություն ավարտական քննություններին:

Զեկուցողը կարևորեց նաև քննությունների նախապատրաստական աշխատանքների իրականացումը՝ հաշվի առնելով, որ այս ուսումնական տարվանից 9-րդ դասարանի սովորողների համար նորություն է քննությունների կազմակերպման նոր կարգը՝ գիտելիքների ստուգումը ինտեգրված էսսեի ձևաչափով: Նշվեց, որ քննության այս ձևաչափը որոշ չափով նորություն է նաև ուսուցիչների համար, ուստի Սերգեյ Ավանեսյանի և հումանիտար առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների համատեղ քննարկումների արդյունքում առաջարկվել է կազմակերպել փորձնական քննություն՝ գործընթացին նախապես պատրաստվելու նպատակով:

Առաջարկվեց նաև, որ փորձնական քննություններից հետո իրականացվի արդյունքների համապարփակ վերլուծություն, առանձնացվեն հիմնական դժվարությունները և բացթողումները, ինչպես նաև կազմակերպվեն լրացուցիչ խորհրդատվություններ և կրկնության դասեր՝ սովորողների թույլ կողմերը հաղթահարելու և նրանց գիտելիքները ամրապնդելու նպատակով:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Շեշտվեց, որ փորձնական քննությունները հնարավորություն կտան սովորողներին ծանոթանալ քննության ձևաչափին, ժամանակի ճիշտ բաշխմանը, առաջադրանքի կառուցվածքին և գնահատման չափանիշներին, ինչն իր հերթին կնվազեցնի քննության հետ կապված լարվածությունը և կբարձրացնի սովորողների վստահությունը սեփական ուժերի նկատմամբ:

Նշվեց, որ անհրաժեշտ է քննարկումներ կազմակերպել, առաջարկել ինտեգրված թեմաներ, ընտրել համեմատաբար հեշտ տարբերակ, իրականացնել նախապատրաստական աշխատանքներ և կազմակերպել փորձնական քննություն «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաներից:

Որոշեցին՝

1. Ապահովել փորձնական քննությունների անցկացումը հնարավորինս մոտ իրական քննության պայմաններին՝ պահպանելով ժամանակային սահմանափակումները և ընթացակարգերը:
2. Քննությունների արդյունքների հիման վրա կատարել վերլուծություն, բացահայտել սովորողների հիմնական դժվարությունները և կազմակերպել նպատակային լրացուցիչ աշխատանքներ:
3. Աշխատանքների իրականացման վերահսկող նշանակել տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանին:
4. Հաջորդ նիստին ներկայացնել էսսեագրության արդյունքները:

Լսեցին 8. Մարզային և հանրապետական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի սովորողները ցուցաբերել են բարձր ակտիվություն և նպատակասլացություն՝ մասնակցելով առարկայական օլիմպիադաներին:

Դպրոցական փուլի արդյունքներով 26 սովորող հաջողությամբ հաղթահարել են մրցույթը և իրավունք ստացել մասնակցելու մարզային փուլին: Այդ սովորողներն են.

«Ֆրանսերեն» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Արզումանյան Արման, 9-րդ «Ա» դասարան
2. Ղասումյան Մանուշակ, 9-րդ «Ա» դասարան
3. Մալինցյան Ավետ, 9-րդ «Ա» դասարան
4. Միխայելյան Լիլիա, 9-րդ «Գ» դասարան

«Հայ գրականություն» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Ավագյան Մանե, 9-րդ «Ա» դասարան
2. Միխայելյան Լիլիա, 9-րդ «Ա» դասարան

«Մաթեմատիկա» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Տատինցյան Ալետա, 6-րդ «Ա» դասարան
2. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան
3. Բաբայան Եվա, 7-րդ «Ա» դասարան
4. Հովհաննիսյան Նարե, 7-րդ «Ա» դասարան
5. Ջհանգիրյան Մարի, 7-րդ «Ա» դասարան
6. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան
7. Ղասումյան Հրաչիկ, 8-րդ «Գ» դասարան
8. Մելքումյան Միլենա, 8-րդ «Գ» դասարան
9. Պողոսյան Գագիկ, 8-րդ «Գ» դասարան
10. Ջավադյան Ալբերտ, 8-րդ «Գ» դասարան
11. Ջհանգիրյան Հայկ, 8-րդ «Բ» դասարան

«Մայրենի» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան

«Հայոց լեզու» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Մինասյան Անի, 9-րդ «Գ» դասարան
2. Բաղդագյուլյան Ինեսա, 9-րդ «Ա» դասարան
3. Բակունց Լիա, 9-րդ «Ա» դասարան
4. Մալինցյան Լիլի, 9-րդ «Գ» դասարան
5. Ավագյան Մանե, 9-րդ «Ա» դասարան
6. Մարտիրոսյան Մարի, 9-րդ «Ա» դասարան

«Քիմիա» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Բաղդագյուլյան Ինեսա, 9-րդ «Ա» դասարան

«Ինֆորմատիկա» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան։

Սովորողներից 6-ը մարզային փուլի արդյունքներով, դրսևորելով բարձր գիտելիքներ և մրցունակ պատրաստվածություն, անցել են նաև օլիմպիադայի հանրապետական փուլ։ Այդ սովորողներն են.

«Մաթեմատիկա» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Բաբայան Եվա, 7-րդ «Ա» դասարան
2. Ջհանգիրյան Մարի, 7-րդ «Ա» դասարան
3. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան

«Հայոց լեզու» առարկայից մարզային փուլ են անցել.

1. Մալինցյան Լիլի, 9-րդ «Գ» դասարան
2. Ավագյան Մանե, 9-րդ «Ա» դասարան

«Ինֆորմատիկա» առարկայից մարզային փուլ է անցել.

1. Դաջունց Մայիս, 8-րդ «Գ» դասարան։

Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի այն սովորողները, որոնք մարզային փուլի ընթացքում դրսևորել են բարձր գիտելիքներ և մրցունակ պատրաստվածություն, Սյունիքի մարզպետի կողմից արժանացել են գովասանագրերի։ Այդ սովորողներն են.

«Մայրենի» առարկայից.

1. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան

«Մաթեմատիկա» առարկայից.

1. Տատինցյան Ալետա, 6-րդ «Ա» դասարան
2. Բաբայան Եվա, 7-րդ «Ա» դասարան
3. Ջհանգիրյան Մարի, 7-րդ «Ա» դասարան

4. Քոչարյան Հենրի, 6-րդ «Բ» դասարան

Այս ցուցանիշները վկայում են դպրոցի կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման, ուսուցիչների հետևողական աշխատանքի և սովորողների պատասխանատու մոտեցման մասին: Օլիմպիադաներին մասնակցությունը նպաստում է սովորողների գիտելիքների խորացմանը, ինքնուրույն մտածողության զարգացմանը և առողջ մրցակցային միջավայրի ձևավորմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները բարձր գնահատեցին սովորողների և ուսուցիչների ձեռքբերումները, ընդգծելով, որ դրանք վկայում են դպրոցում կրթական գործընթացի կազմակերպման բարձր մակարդակի և հետևողական մոտեցման մասին: Նրանք նաև առաջարկեցին շարունակել աջակցել ակտիվ սովորողներին և խրախուսել նրանց մասնակցությունը տարբեր մրցույթների, ինչն ուղեկցվում է գիտելիքների զարգացման և մրցունակության բարձրացման խթանմամբ:

Որոշեցին՝ Մարզային և հանրապետական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփման մասին տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Լսեցին 9. 5-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ 5–9-րդ դասարաններում նոր չափորոշիչների ներդրման գործընթացը ընթանում է գործող իրավական և մեթոդական փաստաթղթերի պահանջներին լիակատար համապատասխանությամբ: Ներկայացվեցին դասավանդման ընթացքում կիրառվող ժամանակակից ուսուցման մեթոդները, ուսուցման չափորոշչային պահանջներին համապատասխան ուսումնառության արդյունքների ապահովման գործիքները, ինչպես նաև ուսուցիչների կողմից օգտագործվող ձևավորող գնահատման մեխանիզմները:

Ընդգծվեց, որ ուսումնական գործընթացում առաջնահերթ է կիրառվում սովորողակենտրոն մոտեցումը, ինտեգրված դասերի կազմակերպումը, ինչպես նաև նախագծային և հետազոտական աշխատանքները, որոնք հանդիսանում են չափորոշչի առանցքային բաղադրիչներ: Զեկուցողը կարևորեց առարկայական ծրագրերի և ուսուցչի կողմնորոշիչ ծրագրերի (ՕԹՊ) համապատասխանությունը ազգային ՀՊՉ պահանջներին, ինչպես նաև ուսումնառության ակնկալվող արդյունքների հստակ ձևակերպումն ու դրանց իրականացման մակարդակի վերահսկումն ու գնահատումը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ուսուցիչների մասնագիտական կարողությունների մշտական զարգացումը՝ շեշտելով շարունակական վերապատրաստումների, մեթոդական խորհրդատվությունների և փորձի փոխանակման արդյունավետությունը: Նա ընդգծեց, որ ընթացիկ վերահսկողության շրջանակում իրականացվում են դասալսումներ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել ուսուցման գործընթացը և ապահովել նոր մոտեցումների որակյալ իրականացման վերահսկողություն:

Նոր ՀՊՉ ներդրման գործընթացում նկատելի են ինչպես դրական առաջընթացներ, այնպես էլ որոշակի մարտահրավերներ: Դրանք հիմնականում առնչվում են նոր ուսուցողական մոտեցումների լիարժեք յուրացման, ուսումնական ժամանակի արդյունավետ բաշխման և ուսումնառության բովանդակության ճիշտ պլանավորման հետ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 5-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին ինֆորմացիան:

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №8

«27» մարտի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Ռուզաննա Խաչատրյան
6. Արաքսյա Առստամյան

Նիստին ներկա էին տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. Փոխադարձ դասալսումների կազմակերպում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մարտ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հունվար-փետրվար ամիսների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
7. «Պատմություն», «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
8. «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
9. 9-րդ դասարաններում էսսեագրության փորձնական քննության անցկացում և արդյունքների վերլուծություն:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման

նախորդ նիստի օրակարգի կատարողականը՝ համառոտ անդրադառնալով իրականացված աշխատանքներին և դրանց ազդեցությանը ուսումնական գործընթացի վրա: Նա նշեց, որ նախատեսված բոլոր միջոցառումները՝ դասալսումները, մեթոդական աշխատանքները, մասնագիտական քննարկումները և փորձի փոխանակումը, իրականացվել են նպատակային և պատասխանատու մոտեցմամբ:

Կարևորվեց համագործակցային մթնոլորտը, որը նպաստել է ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ու դասավանդման որակի բարձրացմանը: Ամփոփելով՝ նշվեց, որ ընդունված որոշումները կատարվել են ժամանակին և պատշաճ կերպով՝ դրական ազդեցություն ունենալով ուսումնական գործընթացի արդյունավետության և սովորողների արդյունքների վրա:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները ընդհանուր առմամբ դրական գնահատեցին կատարված աշխատանքները՝ ընդգծելով դրանց կազմակերպվածությունն ու արդյունավետությունը: Նշվեց, որ իրականացված միջոցառումները նպաստել են ուսուցիչների մասնագիտական զարգացմանը և դասավանդման որակի բարձրացմանը:

Մասնակիցները կարևորեցին համագործակցային աշխատանքը և փորձի փոխանակումը՝ որպես արդյունավետ ուսուցման կարևոր բաղադրիչներ: Վերջում առաջարկվեց շարունակել աշխատանքները նույն հետևողականությամբ՝ պահպանելով ձեռքբերված դրական արդյունքները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ընդգծեց փոխադարձ դասալսումների կարևորությունը՝ որպես ուսուցիչների մասնագիտական զարգացման, փորձի փոխանակման և համագործակցային միջավայրի ձևավորման արդյունավետ միջոց: Նա կարևորեց փոխվստահության և աջակցող մթնոլորտի ձևավորումը:

Նշվեց, որ ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան անհրաժեշտ է կիրառել նորարարական մեթոդներ՝ խթանելով սովորողների ակտիվ մասնակցությունը, ինքնուրույն մտածողությունը և ստեղծագործական կարողությունները:

Առաջարկվեց յուրաքանչյուր դասալսումից հետո կազմակերպել քննարկումներ՝ դասի վերլուծության և բարելավման ուղղությունների հստակեցման նպատակով: Զեկուցողը նաև կարևորեց նոր ՀՊՉ-ների արդյունավետ կիրառումը և 5–9-րդ դասարաններում դասալսումների պարբերական իրականացումը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները կարևորեցին փոխադարձ դասալսումների դերը՝ ընդգծելով դրանց նպաստը մասնագիտական զարգացման և համագործակցության ամրապնդման գործում: Նշվեց նորարարական մեթոդների կիրառման անհրաժեշտությունը՝ սովորողների ակտիվությունը և մտածողությունը խթանելու համար:

Մասնակիցները աջակցեցին յուրաքանչյուր դասալսումից հետո քննարկումների կազմակերպմանը և ընդգծեցին նոր ՀՊՉ-ների արդյունավետ ներդրման կարևորությունը: Վերջում առաջարկվեց շարունակել աշխատանքները նույն հետևողականությամբ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին զեկուցումը, շարունակել փոխադարձ դասալսումներ իրականացնել, համագործակցել նաև մյուս մեթոդական միավորումների ուսուցիչների հետ:

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները՝ նշելով մի շարք թերություններ, որոնք հիմնականում կապված են եղել մատյանների ոչ լիարժեք և ուշ լրացման հետ: Արձանագրվել են նաև դասերի թեմաների չլրացման կամ ոչ պատշաճ ձևակերպման դեպքեր:

Նշվեց, որ էլեկտրոնային մատենավարությունը ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչ է, և դրա ճիշտ ու ժամանակին վարումը պարտադիր է: Առաջարկվեց կարճ ժամկետում վերացնել արձանագրված թերությունները:

Անդրադարձ կատարվեց նաև գնահատականների մուտքագրման ուշացման խնդիրներին, որոնք բացասաբար են ազդում գործընթացի կազմակերպվածության վրա: Զեկուցողը ընդգծեց սահմանված պահանջների պահպանման անհրաժեշտությունը՝ հիշեցնելով, որ գնահատականները պետք է մուտքագրվեն 5 աշխատանքային օրվա ընթացքում, և հորդորեց ցուցաբերել բարձր պատասխանատվություն:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները, Ս. Ավանեսյանը:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց էլեկտրոնային մատենավարության նկատմամբ ամենօրյա վերահսկողության անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ հետևողական հսկողությունը հնարավորություն է տալիս ժամանակին բացահայտել և շտկել թերությունները: Նա հորդորեց ուսուցիչներին ապահովել գրանցումների ճշգրտությունն ու ամբողջականությունը՝ պահպանելով սահմանված պահանջները:

Արտահայտվողները կարևորեցին բարձրացված հարցերի նշանակությունը՝ ընդգծելով, որ մատենավարության պատշաճ վարումը ուսումնական գործընթացի արդյունավետության հիմքն է: Նշվեց, որ արձանագրված թերությունները պահանջում են արագ լուծում:

Մասնակիցները համակարծիք էին, որ գնահատականների ուշ մուտքագրումը պետք է բացառվի և կարևորեցին սահմանված ժամկետների խիստ պահպանումը: Վերջում առաջարկվեց ուժեղացնել վերահսկողությունը և բարձրացնել ուսուցիչների պատասխանատվությունը:

Որոշեցին՝ Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: Տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանին հանձնարարել պարբերաբար իրականացնել էլեկտրոնային մատյանի դիտարկումներ, բացթողումներ ունեցող ուսուցիչներին տեղեկացնել դրանց մասին և առաջարկել ողջամիտ ժամանակահատված՝ դրանք վերացնելու համար:

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մարտ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց մարտ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների ամփոփումը՝ ընդգծելով դրանց համակարգված և նպատակային բնույթը:

Նշվեց, որ կազմակերպվել են տարբեր ուսումնադաստիարակչական միջոցառումներ՝ ուղղված սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը, ինչպես նաև դասղեկական և ճանաչողական ակտիվություններ ու առարկայական շաբաթներ:

Կարևորվեց արտադասարանական աշխատանքի դերը՝ որպես սովորողների հետաքրքրությունների և ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց: Անդրադարձ կատարվեց նաև կարգապահության, հաճախելիության և ծնողների հետ համագործակցության բարելավմանը:

Ամփոփելով՝ ընդգծվեց, որ աշխատանքները եղել են արդյունավետ և նպաստել են ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները բարձր գնահատեցին իրականացված աշխատանքները՝

նշելով դրանց կազմակերպվածությունն ու նպատակային ուղղվածությունը։ Նշվեց, որ դրանք դրական ազդեցություն են ունեցել սովորողների ներգրավվածության և դասերի արդյունավետության վրա։
Մասնակիցները կարևորեցին կիրառված մեթոդների դերը՝ որպես սովորողների հետաքրքրվածության և գիտելիքների յուրացման խթանման գործոն։
Առաջարկվեց շարունակել աշխատանքները նույն հետևողականությամբ՝ շեշտադրելով նորարարական մոտեցումների կիրառումը և փորձի փոխանակումը։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն մարտ ամսվա ընթացքում իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքները գնահատել լավ։ Շարունակել աշխատանքները ըստ հաստատված տարեկան պլանի՝ առավել ուշադրություն դարձնելով սովորողների ակտիվ մասնակցության ապահովմանը, կարգապահության ամրապնդմանը և դաստիարակչական միջոցառումների բազմազանությանը։

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հունվար-փետրվար ամիսների հաշվետվությունների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց հունվար–փետրվար ամիսների աշխատանքների ամփոփումը՝ ընդգծելով դրանց համակարգված և վերլուծական բնույթը։
Նշվեց, որ իրականացվել են դասալսումներ, տրամադրվել է մեթոդական աջակցություն և կազմակերպվել են մասնագիտական զարգացման նախաձեռնություններ, որոնք նպաստել են ուսուցման որակի բարելավմանը։
Անդրադարձ կատարվեց նոր ՀՊՉ-ների կիրառման ընթացքին՝ ընդգծելով դրանց արդյունավետ ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքներն ու առկա խնդիրների քննարկումը։
Կարևորվեցին էսսեագրության և ուսումնական նախագծերի դերը՝ որպես սովորողների կարողությունների զարգացման միջոց։ Նշվեց նաև արդյունավետ կառավարման կարևորությունը։
Ամփոփելով՝ ընդգծվեց, որ աշխատանքները եղել են նպատակային և նպաստել են կրթական գործընթացի զարգացմանը։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները դրական գնահատեցին ներկայացված հաշվետվությունը՝ նշելով դրա ամբողջական և վերլուծական բնույթը։ Նշվեց, որ իրականացված աշխատանքները եղել են նպատակային և արդյունավետ։
Կարևորվեց դասալսումների և մեթոդական աջակցության դերը՝ որպես մասնագիտական զարգացման կարևոր գործոններ, ինչպես նաև նոր ՀՊՉ-ների ներդրման շարունակական քննարկման անհրաժեշտությունը։
Ընդգծվեց էսսեագրության և նախագծային աշխատանքի նշանակությունը՝ սովորողների կարողությունների զարգացման գործում, և դպրոցի կառավարման արդյունավետությունը՝ որպես գործընթացի կազմակերպման հիմք։
Ամփոփելով՝ առաջարկվեց պահպանել նույն մոտեցումը՝ զարգացնելով նորարարական և համագործակցային ուղղությունները։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ԿԳՄՍ նախարարությանն ուղարկված ուսումնադաստիարակչական աշխատանքների հունվար-փետրվար ամիսների հաշվետվությունը (կցվում է էլեկտրոնային տարբերակով)։

Լսեցին 7. «Պատմություն», «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ «Պատմություն», «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանը նախատեսում է դիմել ուսուցչի տարակարգ ստանալու համար: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նրա կատարած աշխատանքի նկատմամբ իրականացնել անհատական վերահսկողություն և մասնագիտական գործունեության մշտադիտարկում:

Զեկուցողն առաջարկեց դպրոցի հաջորդ մանկավարժական խորհրդի նիստում քննարկել հարցը և տնօրենին առաջարկել հաջորդող ժամանակահատվածում Ռուզաննա Խաչատրյանի մոտ իրականացնել կատարած աշխատանքի արդյունավետության գնահատման մշտադիտարկումներ: Մասնավորապես նախատեսվում է ուշադրություն դարձնել էլեկտրոնային մատյանի պատշաճ լրացմանը, հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ աշխատանքների կազմմանը, ուսումնական նախագծերի համապատասխանությանը տվյալ թեմաներին, ինչպես նաև սովորողների բնութագրերի կազմման գործընթացին:

Զեկուցողը նաև առաջարկեց ձևավորել կատարած աշխատանքի արդյունավետության գնահատման մշտադիտարկման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

- տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
- ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,
- հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան,
- բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահ Անուշ Դաջունց,
- «Գրականություն» առարկայի ուսուցչուհի Լիլիթ Սարգսյան,
- «Գրականություն» առարկայի ուսուցչուհի Անուշ Սարգիսջանյան:

Զեկուցողը նաև առաջարկեց իրականացված մշտադիտարկումների արդյունքների մասին զեկուցել հումանիտար առարկաների մեթոդմիավորման հաջորդ նիստում, իսկ մշտադիտարկումների արձանագրությունների և փաստարկների ամբողջական փաթեթը ներկայացնել դպրոցի տնօրենին:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները:

Արտահայտվողները ողջունեցին Ռուզաննա Խաչատրյանի նախաձեռնությունը՝ ուսուցչի տարակարգ ստանալու նպատակով դիմելու վերաբերյալ՝ ընդգծելով, որ այն վկայում է մասնագիտական զարգացման ձգտման, ինքնակատարելագործման և պատասխանատու մոտեցման մասին: Նշվեց, որ նման նախաձեռնությունները կարևոր խթան են կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման և ուսուցչական համայնքում առաջադեմ փորձի ձևավորման համար:

Միևնույն ժամանակ, կարևորվեց իրականացվող աշխատանքների արդյունավետության գնահատման նպատակով մշտադիտարկումների կազմակերպումը: Ընդգծվեց, որ նման գործընթացը հնարավորություն է տալիս ապահովել ուսուցչի մասնագիտական գործունեության առավել համակարգված, բազմակողմանի և հիմնավորված գնահատում, ինչպես նաև նպաստում է հաջողված փորձի բացահայտմանն ու տարածմանը:

Անուշ Սարգիսջանյանը նշեց, որ մշտադիտարկումների իրականացումը թույլ կտա ավելի խորությամբ ուսումնասիրել ուսուցչի աշխատանքային գործունեությունը՝ առանձնացնելով արդյունավետ մեթոդներն ու մոտեցումները: Նրա խոսքով՝ այդ փորձը կարող է հետագայում կիրառվել նաև այլ ուսուցիչների կողմից՝ նպաստելով դասավանդման որակի շարունակական բարելավմանը:

Ընդհանուր առմամբ, արտահայտվողները դրական գնահատեցին ներկայացված առաջարկը՝ կարևորելով դրա իրականացումը սահմանված կարգով և հետևողականությամբ:

Որոշեցին՝ 1. Մանկավարժական խորհրդի նիստում քննարկել «Պատմություն», «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանի

կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողության և մասնագիտական գործունեության մշտադիտարկում՝ ուշադրություն դարձնելով էլեկտրոնային մատյանի պատշաճ լրացմանը, հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ աշխատանքների կազմմանը, ուսումնական նախագծերի համապատասխանությանը տվյալ թեմաներին, ինչպես նաև սովորողների բնութագրերի կազմման գործընթացին:

2. Մանկավարժական խորհրդին առաջարկել ձևավորել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
- ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,
- հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան,
- բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդմիավորման նախագահ Անուշ Դաջունց,
- «Գրականություն» առարկայի ուսուցչուհի Լիլիթ Սարգսյան,
- «Գրականություն» առարկայի ուսուցչուհի Անուշ Սարգիսջանյան:

3. Իրականացված մշտադիտարկումների արդյունքների մասին զեկուցել մանկավարժական խորհրդի, հումանիտար առարկաների մեթոդմիավորման հաջորդող նիստում, իսկ մշտադիտարկումների արձանագրությունների և փաստարկների ամբողջական փաթեթը ներկայացնել դպրոցի տնօրենին:

Լսեցին 8. «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանը նախատեսում է դիմել ուսուցչի տարակարգ ստանալու համար: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նրա կատարած աշխատանքի նկատմամբ իրականացնել անհատական վերահսկողություն և մասնագիտական գործունեության մշտադիտարկում:

Զեկուցողն առաջարկեց դպրոցի հաջորդ մանկավարժական խորհրդի նիստում քննարկել հարցը և տնօրենին առաջարկել հաջորդող ժամանակահատվածում Սոնա Հարությունյանի մոտ իրականացնել կատարած աշխատանքի արդյունավետության գնահատման մշտադիտարկումներ: Մասնավորապես նախատեսվում է ուշադրություն դարձնել էլեկտրոնային մատյանի պատշաճ լրացմանը, հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ աշխատանքների կազմմանը, ուսումնական նախագծերի համապատասխանությանը տվյալ թեմաներին, ինչպես նաև սովորողների բնութագրերի կազմման գործընթացին:

Զեկուցողը նաև առաջարկեց ձևավորել կատարած աշխատանքի արդյունավետության գնահատման մշտադիտարկման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

- տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
- ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,
- հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան,
- արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահ Աննա Աբգարյան,
- «Հայոց լեզու» առարկայի ուսուցչուհի Լիլիթ Սարգսյան,
- «Հայոց լեզու» առարկայի ուսուցչուհի Անուշ Սարգիսջանյան:

Զեկուցողը նաև առաջարկեց իրականացված մշտադիտարկումների արդյունքների մասին զեկուցել հումանիտար առարկաների մեթոդմիավորման հաջորդ նիստում, իսկ մշտադիտարկումների արձանագրությունների և փաստարկների ամբողջական փաթեթը ներկայացնել դպրոցի տնօրենին:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները։

Արտահայտվողները դրական արձագանքեցին Սոնա Հարությունյանի նախաձեռնությանը՝ ուսուցչի տարակարգ ստանալու նպատակով դիմելու վերաբերյալ՝ այն դիտարկելով որպես մասնագիտական աճին միտված կարևոր քայլ։ Ընդգծվեց, որ նման մոտեցումները նպաստում են ոչ միայն անձնական առաջընթացին, այլև կրթական գործընթացի ընդհանուր արդյունավետության բարձրացմանը։

Կարևորվեց նաև իրականացվող աշխատանքների գնահատման շրջանակում մշտադիտարկումների կազմակերպումը՝ որպես գործիք, որը թույլ է տալիս առավել հստակ պատկերացում կազմել ուսուցչի գործունեության արդյունքների մասին և ապահովել գնահատման հիմնավորվածությունը։

Լիլիթ Սարգսյանը նշեց, որ այս գործընթացը հնարավորություն կտա բացահայտել դասավանդման ընթացքում կիրառվող արդյունավետ մեթոդներն ու մոտեցումները՝ ստեղծելով դրանց տարածման և կիրառման պայմաններ նաև այլ ուսուցիչների համար։

Ամփոփելով՝ մասնակիցները կարևորեցին նախաձեռնության իրականացումը՝ ընդգծելով դրա նպատակային և հետևողական կազմակերպման անհրաժեշտությունը։

Որոշեցին՝ 1. Մանկավարժական խորհրդի նիստում քննարկել «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողության և մասնագիտական գործունեության մշտադիտարկում՝ ուշադրություն դարձնելով էլեկտրոնային մատյանի պատշաճ լրացմանը, հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ աշխատանքների կազմմանը, ուսումնական նախագծերի համապատասխանությանը տվյալ թեմաներին, ինչպես նաև սովորողների բնութագրերի կազմման գործընթացին։

2. Մանկավարժական խորհրդին առաջարկել ձևավորել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
- ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,
- հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան,
- արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահ Աննա Աբգարյան,
- «Հայոց լեզու» առարկայի ուսուցչուհի Լիլիթ Սարգսյան,
- «Հայոց լեզու» առարկայի ուսուցչուհի Անուշ Սարգիսջանյան։

3. Իրականացված մշտադիտարկումների արդյունքների մասին զեկուցել մանկավարժական խորհրդի, հումանիտար առարկաների մեթոդմիավորման հաջորդող նիստում, իսկ մշտադիտարկումների արձանագրությունների և փաստարկների ամբողջական փաթեթը ներկայացնել դպրոցի տնօրենին։

Լսեցին 9. 9-րդ դասարաններում էսսեագրության փորձնական քննության անցկացման և արդյունքների վերլուծության մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ սովորողների համար կազմակերպվել է փորձնական էսսե գրելու աշխատանք՝ նպատակ ունենալով գնահատել նրանց գրավոր խոսքի, վերլուծական մտածողության և նյութի համադրման կարողությունները՝ հաշվի առնելով, որ ընթացիկ ուսումնական տարում «Գրականություն» և «Պատմություն» առարկաների ավարտական քննությունները նախատեսվում են ինտեգրված էսսեագրության ձևաչափով։ Փորձնական աշխատանքի ընթացքում աշակերտներին առաջարկվել է գրել «Մամփրե արքա-հայ գրերի գյուտը» թեմայով ինտեգրված էսսե։ Զեկուցողի խոսքով՝ աշխատանքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ աշակերտների մի մասը յուրաքանչյուր առարկայի շրջանակում փորձել է

առանձին ներկայացնել նյութը՝ չկատարելով միջառարկայական կապերի անհրաժեշտ համադրում: Մինչդեռ ինտեգրված էսսեագրության ձևաչափը ենթադրում է թեմայի ամբողջական ընկալում և տարբեր առարկայական գիտելիքների համադրված կիրառություն:

Զեկուցողը նշեց, որ «Գրականություն» և «Պատմություն» առարկաների ուսուցիչներն իրենց դասարաններում յուրաքանչյուր աշակերտի հետ առանձին քննարկել են աշխատանքները, կատարել վերլուծություններ, ինչը թույլ է տվել աշակերտներին հասկանալու իրենց խնդիրները, բացթողումները:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Մ.Դանիելյանը, Ռ.Խաչատրյանը, Ս.Հարությունյանը, Լ.Սարգսյանը, Ա.Սարգիսջանյանը:

Արտահայտվողները ներկայացրին, որ արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ սովորողները դեռևս լիարժեք չեն տիրապետում էսսե գրելու պահանջներին և մեթոդաբանությանը և ընդհանուր ցուցանիշները բավարար մակարդակի չեն: Մասնավորապես արձանագրվեց, որ հիմնական դժվարությունները կապված են եղել՝

- էսսեի կառուցվածքի (սկիզբ, հիմնամաս, ամփոփում) ոչ հստակ պատկերացման
- թեմայի բացահայտման մակերեսայնության
- փաստերի և օրինակների սահմանափակ կիրառման
- պատմական և գրական նյութերի համադրման հմտության պակասի հետ:

Սերգեյ Ավանեսյանն առաջարկեց հաջորդիվ ժամանակահատվածում ևս մեկ անգամ իրականացնել էսսեագրության փորձնական գրավոր աշխատանք, որպեսզի հստակ պատկերացում լինի, արդյոք աշակերտները կարողացել են հասկանալ, վերլուծել իրենց բացթողումները, ինչպես է բարելավվել արդյունքները և ինչ առաջընթաց է գրանցվել:

Որոշեցին՝

1. Ընդունել ի գիտություն 9-րդ դասարաններում էսսեագրության փորձնական քննության անցկացման արդյունքները:
2. 9-րդ դասարաններում հաջորդիվ ժամանակահատվածում իրականացնել էսսեագրության ևս մեկ փորձնական քննություն և արդյունքները քննարկել մեթոդմիավորման նիստում:

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №9

«22» ապրիլ 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը,ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստում և հաստատում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. Քննական առարկաների հետ կապված հարցերի քննարկում և հանձնարարականներ:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
6. 5-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
7. «Պատմություն», «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
8. «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
9. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) ապրիլ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝Ա. Գևորգյան)
10. Այլ երկրից Հայաստան տեղափոխված սովորողների գիտելիքների գրավոր ստուգման գրավոր աշխատանքների տարբերակների քննարկում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
11. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատելու մասին:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների

մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների նախապատրաստման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց տնօրենության գրավոր աշխատանքների նախապատրաստման ընթացքը, դրանց բովանդակությունը և կազմակերպման առանձնահատկությունները: Նշվեց, որ դպրոցում առկա պայմանների պատճառով 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության գրավոր աշխատանքների տրման ժամկետները մի փոքր փոփոխվել են:

Նշվեց, որ գրավոր աշխատանքները պետք է համապատասխանեն ուսումնական ծրագրերին և չափորոշիչներին՝ ապահովելով սովորողների գիտելիքների ամբողջական և օբեկտիվ գնահատում:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Լ.Սարգսյանը,Ս.Հարությունյանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է համարում նախապատրաստական աշխատանքների արդյունքում կիրառել այնպիսի մեթոդներ ու հնարներ, որ ապահովվի անկողմնակալ վերաբերմունքը: Ավանեսյանը կարևոր համարեց գրավոր աշխատանքների նախապես պլանավորումը և համաձայնեցումը՝ նշելով, որ դա կնպաստի ավելի կազմակերպված և արդար գնահատման գործընթացին:

Արտահայտվողները նշեցին նաև այն մասին, որ էլեկտրոնային տարբերակով տնօրենության կողմից գրավոր աշխատանքներ գրելը հնարավորություն էր տալիս իրականացնել գիտելիքների բազմակողմանի ստուգում, ինչպես նաև աշակերտներին սովորեցնում էր աշխատել թեստերի հետ, բայց հաշվի առնելով դպրոցի վերանորոգման հետ կապված հարցերն ու ստեղծված անհարմարավետ պայմանները, առաջարկեցին գրավոր աշխատանքները տալ թղթային տարբերակով:

Որոշեցին՝

1. Նախապատրաստել տնօրենության գրավոր աշխատանքները՝ համապատասխան ծրագրային պահանջներին:
2. Ապահովել առաջադրանքների գաղտնիությունը մինչև դրանց կիրառումը:
3. Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների տարկերակները (2 տարբերակից)

Լսեցին 4. Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ վերջին շրջանում էապես բարելավվել է էլեկտրոնային մատյաններում իրականացվող աշխատանքների կազմակերպվածությունն ու համակարգվածությունը: Նշվեց, որ գործընթացները դարձել են առավել հստակ և վերահսկելի, ինչի շնորհիվ ապահովվում է տվյալների ժամանակին մուտքագրումն ու ճշգրտությունը:

Ընդգծվեց նաև, որ ուսուցիչները մատենավարության հետ կապված իրենց պարտականություններին մոտենում են առավել պատասխանատվությամբ և հետևողականությամբ՝ պահպանելով սահմանված պահանջներն ու ժամկետները: Արդյունքում բարձրացել է ոչ միայն աշխատանքի արդյունավետությունը, այլև կրթական գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Առստամյանը:

Արտահայտվողները կարևորեցին տրված ցուցումներին խստորեն հետևելու անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ գրանցումներն ու գնահատումը պետք է իրականացվեն սահմանված կարգով և նախատեսված ժամկետներում: Նշվեց, որ կարգապահ և հետևողական մոտեցումը նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը և գնահատման օբյեկտիվությանը:

Միաժամանակ շեշտադրվեց ՕԹՊ-ով սահմանված թեմատիկ հաջորդականության խստագույն պահպանումը՝ որպես ծրագրային պահանջների լիարժեք կատարման և ուսումնական նյութի տրամաբանական ու փուլային ներկայացման կարևոր պայման: Արդյունքում ապահովվում է կրթության որակի բարձրացումը և սովորողների գիտելիքների համակարգված զարգացումը:

Որոշեցին՝

- Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն:
- ՄՄ նախագահի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում,
- տնօրենի տեղակալի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում:

Լսեցին 5. Քննական առարկաների հետ կապված հարցերի քննարկման և հանձնարարականների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ քննարկվել է 9-րդ դասարանների ավարտական քննությունների նոր ձևաչափը՝ «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաներից ինտեգրված էսսե գրելու հետ կապված հարցերն ու խնդիրները, ինչպես նաև «Հայոց լեզու» առարկայից թեստային աշխատանքի հետ կապված հարցերը: Կարևորվեց, որ այս փոփոխությունը միտված է զարգացնելու սովորողների վերլուծական մտածողությունը, ինքնուրույն դատողություններ կատարելու և գրավոր խոսք կառուցելու կարողությունները: Ընդգծվեց, որ գրականության էսսեն պետք է ներառի ստեղծագործությունների գաղափարական վերլուծություն, կերպարների մեկնաբանում, անձնական կարծիքի հիմնավորում: Այն պետք է համադրել, ինտեգրել պատմական փաստերին, պատճառահետևանքային կապերի բացահայտման և փաստերի հիմնավոր ներկայացման հետ: Միաժամանակ նշվեց, որ «Հայոց լեզու» առարկայից քննությունը կանցկացվի թեստային ձևաչափով՝ նպատակ ունենալով ստուգել սովորողների լեզվական գիտելիքների մակարդակը:

Զեկուցողը նշեց նաև, որ կհաստատվի քննական առարկաների խորհրդատվությունների ժամանակացույցը:

Զեկուցողը ներկայացրեց 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը, նշեց, որ կազմի անդամներն ընտրվել են հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Արտահայտվողները նշեցին, որ անցկացված փորձնական քննությունը հնարավորություն տվեց ստանալ մի շարք հարցերի պատասխաններ՝

միաժամանակ սովորողների մոտ զարգացնելով էսսե գրելու հմտություններն ու կարողությունները:
Նրանք միակարծիք էին, որ անհրաժեշտ է կազմակերպել լրացուցիչ խորհրդատվություններ՝ սովորողների պատրաստվածությունը բարձրացնելու նպատակով: Նշվեց, որ անհրաժեշտ է բավարար ժամանակ հատկացնել տարեվերջյան կրկնություններին և թեմաների ամփոփումներին, ինչը կնպաստի ավարտական քննությունները սահմանված կարգով, պատշաճ մակարդակով անցկացնելուն:
Արտահայտվողները նշեցին, որ 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմում առաջադրվել են բոլոր ցանկացողները, ինչպես նաև հաշվի են առնվել հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի պահանջները, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22 ապրիլի 2026 թվականի 675-Ա/2 հրամանը:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն 9-րդ դասարանում «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաներից ինտեգրված էսսե գրելու քննության նոր ձևաչափը:
- Հավանության արժանացնել 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը, ժամանակացույցը, խորհրդատվությունների ժամանակացույցը (կցվում է):

Լսեցին 6. 5-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը:

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ իրականացվել է 5–9-րդ դասարաններում հումանիտար առարկաների դասավանդման գործընթացի համակողմանի ուսումնասիրություն՝ համաձայն ՀՊՉ պահանջների: Նշվեց, որ ուսուցիչների մեծ մասը հաջողությամբ կիրառում է նորարարական մեթոդներ՝ ուսուցման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն դարձնելով սովորողների կարողունակությունների զարգացմանը: Ընդգծվեց, որ ուսումնական գործընթացը կազմակերպվում է գործնական աշխատանքների, ինչպես նաև խաչվող հասկացությունների փոխկապակցված կիրառման միջոցով, ինչը նպաստում է գիտելիքների խորացմանն ու կիրառական հմտությունների ձևավորմանը:
Կարևորվեց նաև, որ ուսուցիչների կողմից հիմնականում պահպանվում են միավորային և ձևավորող գնահատման սկզբունքները՝ ապահովելով սովորողների առաջընթացի շարունակական վերահսկումն ու հետադարձ կապը:
Միաժամանակ արձանագրվեց, որ 7–9-րդ դասարաններում դեռևս առկա են որոշակի դժվարություններ, մասնավորապես՝ նախագծային աշխատանքների կազմակերպման և իրականացման, ինչպես նաև որոշ դեպքերում ավանդական մեթոդների գերակշռության պահպանման առումով: Նշվեց, որ անհրաժեշտ է շարունակական մեթոդական աջակցություն և նպատակային աշխատանք՝ նշված խնդիրների հաղթահարման ուղղությամբ:

Արտահայտվեցին՝ Սոնա Հարությունյանը, Ռուզաննա Խաչատրյանը, Արաքսյա Առստամյանը

Արտահայտվողները նշեցին, որ նոր չափորոշիչները թեև հետաքրքիր ու ինտերակտիվ միջավայր են ստեղծում, սակայն պահանջում են դասի ավելի խորը պլանավորում:
Սոնա Հարությունյանը կարևորեց փոխադարձ դասալսումներ շարունակականությունը:
Արաքսյա Առստամյանը նշեց, որ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն

դարձնել նոր չափորոշչով սահմանված ութ առանցքային կարողունակությունների արդյունավետ կիրառմանը դասապրոցեսին:
Ռուզաննա Խաչատրյանն անհրաժեշտ համարեց սովորողների ինքնուրույն և հետազոտական կարողությունների զարգացման կատարելագործումը:

Որոշեցին՝ 5-9-րդ դասարաններում հումանիտար առարկաների մասով ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության արդյունքներն ընդունել ի գիտություն:

Լսեցին 7. «Պատմություն», «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ «Պատմություն» և «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանը հայտ է ներկայացրել ուսուցչի տարակարգ ստանալու նպատակով: Ընդգծվեց, որ գործընթացին նախորդել է նրա մասնագիտական գործունեության խորքային ուսումնասիրություն, որի ընթացքում գնահատվել են դասավանդման կազմակերպման մակարդակը, կիրառվող մեթոդների արդյունավետությունը, ինչպես նաև սովորողների ուսումնառության արդյունքներն ու առաջընթացը:
Միաժամանակ նշվեց, որ տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովը համակողմանիորեն ուսումնասիրել և ամփոփել է ձեռք բերված տվյալները՝ ձևավորելով հիմնավորված փաստաթղթային փաթեթ՝ ընդգրկելով համապատասխան արձանագրություններ, գնահատումներ և վերլուծական եզրակացություններ: Փաթեթը նախատեսվում է ներկայացնել մանկավարժական խորհրդին՝ մասնագիտական քննարկման, այնուհետև՝ դպրոցի տնօրենին՝ հաստատման համար:

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը:

Մերի Դանիելյանը հայտնեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է հետևողական դիտարկումների շարք, որի արդյունքները ամփոփվել և ձևակերպվել են համապատասխան փաստաթղթերում՝ պահպանելով սահմանված կարգն ու ձևաչափը: Նրա խոսքով՝ կազմված նյութերն ամբողջական են և պատրաստ՝ ներկայացվելու մանկավարժական խորհրդին՝ քննարկման, իսկ այնուհետև՝ տնօրինությանը՝ հաստատման նպատակով:

Որոշեցին՝ «Պատմություն», «Հասարակագիտություն» առարկաների ուսուցչուհի Ռուզաննա Խաչատրյանի կողմից կատարված աշխատանքի արդյունավետության գնահատման նպատակով ձևավորված արձանագրությունների և փաստարկների փաթեթը ներկայացել մանկավարժական խորհրդի նիստում, ինչպես նաև տնօրենին՝ հաստատման (կցվում է անհատական վերահսկողության և մասնագիտական գործունեության մշտադիտարկման հանձնաժողովի անհատական վերահսկողության գործողությունների պլանի կատարողական հաշվետվությունը):

Լսեցին 8. «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը հաղորդեց, որ «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանը նախաձեռնություն է ցուցաբերել մասնակցելու ուսուցչի տարակարգի շնորհման գործընթացին: Այս համատեքստում ընդգծվեց, որ նախորդ փուլում իրականացվել է նրա մանկավարժական գործունեության բազմակողմանի վերլուծություն՝ ներառելով դասերի կազմակերպման որակի գնահատում, կիրառվող մեթոդների արդյունավետության ուսումնասիրություն և սովորողների առաջընթացի դիտարկում:

Նշվեց նաև, որ տնօրենի համապատասխան հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովը համակարգված կերպով հավաքագրել և ամփոփել է ուսումնասիրության արդյունքները՝ կազմելով փաստաթղթային հիմնավորված փաթեթ՝ ներառյալ արձանագրություններ, գնահատականներ և վերլուծական եզրակացություններ։ Վերջինս նախատեսվում է ներկայացնել մանկավարժական խորհրդի նիստում՝ մասնագիտական քննարկման, ապա փոխանցել դպրոցի տնօրենին՝ վերջնական հաստատման նպատակով։

Արտահայտվեցին՝ Մ. Դանիելյանը։

Մերի Դանիելյանը տեղեկացրեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են համակարգված դիտարկումներ, որոնց արդյունքները պատշաճ կերպով ամրագրվել են սահմանված ձևաչափի փաստաթղթերում։ Նա ընդգծեց, որ հավաքագրված նյութերը լիովին պատրաստ են ներկայացման մանկավարժական խորհրդին՝ մասնագիտական քննարկման նպատակով, ինչպես նաև տնօրինությանը՝ հետագա հաստատման համար։

Որոշեցին՝ «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների ուսուցչուհի Սոնա Հարությունյանի կողմից կատարված աշխատանքի արդյունավետության գնահատման նպատակով ձևավորված արձանագրությունների և փաստարկների փաթեթը ներկայացել մանկավարժական խորհրդի նիստում, ինչպես նաև տնօրենին՝ հաստատման (կցվում է անհատական վերահսկողության և մասնագիտական գործունեության մշտադիտարկման հանձնաժողովի անհատական վերահսկողության գործողությունների պլանի կատարողական հաշվետվությունը)։

Լսեցին 9. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈւԴԱՏՊ) ապրիլ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ապրիլ ամսվա ընթացքում հումանիտար առարկաների մեթոդմիավորման կողմից ամբողջությամբ իրականացվել են պլանավորված ուսումնադաստիարակչական և մեթոդական աշխատանքները։ Հաշվետու ժամանակահատվածում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հումանիտար առարկաների դասավանդման որակի ուսումնասիրմանը, էլեկտրոնային մատյանների վարման կարգի պահպանմանը, ինչպես նաև թեմատիկ պլանների և ուսումնական ծրագրերի կատարողականի ստուգմանը։

Նշվեց, որ մեթոդական աշխատանքի շրջանակում կազմակերպվել և իրականացվել են փոխադարձ դասալսումներ, որոնք նպաստել են ուսուցիչների մասնագիտական զարգացմանը, փորձի փոխանակմանը և նոր չափորոշչային պահանջների առավել արդյունավետ կիրառմանը ուսումնական գործընթացում։

Դաստիարակչական աշխատանքների համատեքստում կարևորվել են ազգային հիշատակի օրերը։ Մասնավորապես, կազմակերպվել են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված քննարկումներ, ինչպես նաև իրականացվել է այցելություն հուշարձան՝ զոհերի հիշատակը հարգելու և սովորողների մեջ ազգային արժեքների, պատմական հիշողության և հարգանքի ձևավորման նպատակով։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Արտահայտվողները ծավալված քննարկման ընթացքում բարձր գնահատեցին ապրիլ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները՝ ընդգծելով դրանց նպատակային կազմակերպվածությունն ու արդյունավետությունը։ Նշվեց, որ իրականացված միջոցառումները նպաստել են ինչպես ուսումնական գործընթացի բարելավմանը, այնպես էլ մեթոդական աշխատանքի ակտիվացմանը։

Քննարկման ընթացքում առանձնակի անդրադարձ կատարվեց փոխադարձ

դասալսումների արդյունավետությանը: Մասնակիցները շեշտեցին, որ նման ձևաչափը կարևոր հարթակ է մասնագիտական փորձի փոխանակման, ինքնավերլուծության և շարունակական զարգացման համար: Այն հնարավորություն է տալիս գործնականում կիրառել նոր չափորոշչային պահանջները, վերանայել դասավանդման մոտեցումները և բարձրացնել ուսուցման որակը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն՝ 2025-2026 ուսումնական տարվա ապրիլ ամսվա ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարողականը:

Լսեցին 10. Այլ երկրից Հայաստան տեղափոխված սովորողների գիտելիքների գրավոր ստուգման գրավոր աշխատանքների տարբերակների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը նշեց, որ Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան տեղափոխված Մանե Դանիելյանի և Արթուր Դանիելյանի ծնողը դիմում է ներկայացրել՝ խնդրելով երեխաների ուսումը շարունակել Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի համապատասխան դասարաններում:

Ըստ ներկայացված տեղեկատվության՝ հիմք ընդունելով «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգի» 21-րդ, 22-րդ, 29-րդ և 30-րդ կետերի պահանջները՝ նշված սովորողները ենթակա են ընդունման դպրոց՝ մեկ դասարան ցածր՝ համապատասխանաբար 7-րդ և 8-րդ դասարաններ:

Զեկուցողը ընդգծեց, որ գործընթացը սահմանված կարգով կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է նախապես գնահատել Մանե Դանիելյանի և Արթուր Դանիելյանի գիտելիքների մակարդակը: Այդ նպատակով տվյալ դասարանների ուսումնական պլանով նախատեսված առարկաներից նրանք պետք է գրեն գրավոր աշխատանքներ:

Նշվեց, որ այդ ստուգմանը հաջորդելու է նույն կարգի 30-րդ կետի պահանջի համաձայն գործընթացի շարունակությունը, որի շրջանակում, սովորողների փաստացի առարկայական գիտելիքների վերաբերյալ մասնագիտական խմբի գրավոր եզրակացության հիման վրա, տնօրենը կընդունի որոշում սովորողների համապատասխան դասարան ընդունելու վերաբերյալ:

Միաժամանակ տնօրենը կհաստատի ուսումնական պլանով նախատեսված առարկաների վերաբերյալ մեթոդմիավորումների կողմից ներկայացված անհատական առարկայական պլանները, ինչպես նաև լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը, որի համաձայն սովորողների համար կկազմակերպվի նպատակային ուսուցում՝ բաց թողնված ծրագրային նյութի յուրացման ապահովման համար:

Զեկուցողը հավելեց, որ մասնագիտական եզրակացությունը կտրվի բոլոր առարկաներից գրավոր ստուգումների արդյունքների համապարփակ վերլուծության հիման վրա՝ ապահովելով գործընթացի օբյեկտիվությունն ու կարգի պահանջների լիարժեք կատարումը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները քննարկման ընթացքում ծանոթացան Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան տեղափոխված Մանե և Արթուր Դանիելյանների՝ դպրոց ընդունվելու գործընթացին վերաբերող հարցին և ներկայացված կարգավորումների շրջանակին:

Նրանք ընդգծեցին, որ գործընթացը պետք է իրականացվի գործող կարգի պահանջներին համապատասխան՝ ապահովելով թափանցիկություն, օբյեկտիվություն և սովորողների իրական գիտելիքների մակարդակի ճիշտ գնահատում: Արտահայտվողները դրական գնահատեցին նախատեսված

գիտելիքների ստուգման և գրավոր աշխատանքների միջոցով գնահատման մոտեցումը՝ նշելով, որ այն թույլ է տալիս արդար և հիմնավորված որոշում կայացնել սովորողների համապատասխան դասարաններում ընդգրկման վերաբերյալ:

Միաժամանակ կարևորվեց մասնագիտական խմբի եզրակացության դերը՝ որպես ընդունման գործընթացի կարևոր հիմք, որը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել սովորողների պատրաստվածության մասին: Ընդգծվեց նաև լրացուցիչ անհատական ուսումնական պլանների և աջակցող դասընթացների կազմակերպման անհրաժեշտությունը՝ բաց թողնված նյութի արդյունավետ լրացման և սովորողների հարմարվողականության ապահովման նպատակով:

Արտահայտվողները ընդհանուր առմամբ գործընթացը գնահատեցին որպես հիմնավորված և ճիշտ կազմակերպման դեպքում՝ սովորողների կրթական շարունակականության ապահովմանը նպաստող քայլ:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել 7-րդ և 8-րդ դասարանների համար ուսումնական պլանով նախատեսված առարկաների գրավոր աշխատանքները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

Լսեցին 11. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ 9-րդ «Գ» դասարանի աշակերտներ Արթուր Ալումանյանի, Էդիկ Ստեփանյանին և 9-րդ «Բ» դասարանի աշակերտ Ալեքս Սահակյանի ծնողները դիմում են ներկայացրել, որով խնդրել են իրենց երեխային ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից:

Արտահայտվեցին՝ Ա. Առստամյանը

Արտահայտվողը նշեց, որ Արթուր Ալումանյանի, Էդիկ Ստեփանյանին, Ալեքս Սահակյանի ծնողների դիմումի համաձայան նրանց պետք է ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տվյալ աշակերտներն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ինչպես նաև հղում կատարեց հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի 9-րդ կետին, որտեղ սահմանվում է, որ ինտելեկտուալ (մտավոր) զարգացման խանգարմամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններին: Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

Որոշեցին՝ Համաձայն Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի՝ առաջարկել ԿԱՊԿՈՒ աշակերտներ Արթուր Ալումանյանին, Էդիկ Ստեփանյանին, Ալեքս Սահակյանին ազատել 9-րդ դասարանի ավարտական քննություններից:

Մ/Մ նախագահ՝ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №10

«05» մայիսի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական առարկայական պլանների և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցի քննարկում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման արտահերթ նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 10-րդ արտահերթ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական առարկայական պլանների և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցի քննարկման մասին հարցը:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը տեղեկացրեց, որ Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան տեղափոխված Մանե Դանիելյանի և Արթուր Դանիելյանի ծնողը դիմում է ներկայացրել՝ երեխաների ուսումը Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց համապատասխան դասարաններում շարունակելու նպատակով:
Նշվեց, որ ներկայացված փաստաթղթերի և գործող իրավակարգավորումների ուսումնասիրության արդյունքում, հիմք ընդունելով «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգի» 21-րդ, 22-րդ, 29-րդ և 30-րդ կետերի պահանջները, սովորողները ենթակա են ընդունման մեկ դասարան ցածր՝ համապատասխանաբար 7-րդ և 8-րդ դասարաններ:
Զեկուցողը ընդգծեց, որ գործընթացի պատշաճ և կարգին համապատասխան կազմակերպման նպատակով իրականացվել է սովորողների գիտելիքների մակարդակի գնահատում: Այդ նպատակով Մանե Դանիելյանը և Արթուր Դանիելյանը տվյալ դասարանների ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կատարել են գրավոր աշխատանքներ, որոնց արդյունքները ենթարկվել են մասնագիտական վերլուծության:

Նշվեց նաև, որ գործընթացի հաջորդ փուլը կազմակերպվել է վերոնշյալ կարգի 30-րդ կետի պահանջներին համապատասխան: Մասնագիտական խմբի կողմից սովորողների փաստացի առարկայական գիտելիքների վերաբերյալ ներկայացված գրավոր եզրակացության հիման վրա որոշում է կայացվել նրանց ընդունել համապատասխան դասարաններ:

Զեկուցողը հավելեց, որ անհրաժեշտ է հաստատել ուսումնական պլանով նախատեսված առարկաների անհատական ուսումնական պլանները, ինչպես նաև լրացուցիչ դասընթացների կազմակերպման ժամանակացույցը: Այդ շրջանակում սովորողների համար կիրականացվի նպատակային աջակցող ուսուցում՝ բաց թողնված ծրագրային նյութի լիարժեք յուրացումն ապահովելու նպատակով:

Ընդգծվեց, որ մասնագիտական եզրակացությունը կազմվել է բոլոր առարկաներից իրականացված գրավոր ստուգումների արդյունքների համակողմանի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա՝ ապահովելով գործընթացի օբյեկտիվությունը, թափանցիկությունը և գործող կարգի պահանջների լիարժեք պահպանումը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին սովորողների կրթության շարունակականության ապահովումը և դրական գնահատեցին նրանց ընդունելության գործընթացի կազմակերպումը՝ ընդգծելով, որ այն իրականացվել է գործող կարգի պահանջներին համապատասխան և ապահովել է գործընթացի օբյեկտիվությունն ու թափանցիկությունը: Նշվեց, որ սովորողների գիտելիքների մակարդակի նախնական գնահատումը, ինչպես նաև մասնագիտական խմբի կողմից կատարված վերլուծությունը հնարավորություն են տվել առավել արդյունավետ կազմակերպել նրանց հետագա ուսուցումը: Արտահայտվողները կարևոր համարեցին անհատական ուսումնական պլանների և լրացուցիչ դասընթացների իրականացումը՝ նշելով, որ դրանք կնպաստեն բաց թողնված ծրագրային նյութի յուրացմանը և սովորողների լիարժեք ինտեգրմանը ուսումնական գործընթացին: Ընդգծվեց նաև դպրոց-ընտանիք համագործակցության անհրաժեշտությունը՝ համոզմունք հայտնելով, որ համատեղ և հետևողական աշխատանքի արդյունքում սովորողները կկարողանան արագ հարմարվել նոր կրթական միջավայրին և ապահովել պատշաճ առաջադիմություն:

Որոշեցին՝

- Հավանության արժանացնել 7-րդ դասարանների համար ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կազմված թեմաներից 7-րդ «Գ» դասարանի սովորող Մանե Դանիելյանի համար նախատեսված անհատական առարկայական պլանը (կցվում է էլեկտրոնային տարբերակով) և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը (կցվում է) և ներկայացնել տնօրենին հաստատման:
- Հավանության արժանացնել 8-րդ դասարանների համար ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կազմված թեմաներից 8-րդ «Ա» դասարանի սովորող Արթուր Դանիելյանի համար նախատեսված անհատական առարկայական պլանը (կցվում է էլեկտրոնային տարբերակով) և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը (կցվում է) և ներկայացնել տնօրենին հաստատման:

Մ/Մ նախագահ՝ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №11

«29» մայիսի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Ռուզաննա Խաչատրյան

Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը

Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկում։
(զեկուցողներ՝ Մ. Դանիելյան, նախագծային աշխատանքների ղեկավարներ)
4. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում։
(զեկուցող՝ Ա.Առստամյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈւԴԱՏՊ) մայիս ամսվա իրականացված աշխատանքներ։
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգում։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբերի հաշվետվությունների քննարկման մասին։
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը։

Արտահայտվեցին՝
Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգը։

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
Զեկուցողը ներկայացրեց հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգային հարցերի կատարողականը՝ ամփոփելով նախորդ նիստում ընդունված որոշումների և նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքները։
Նշվեց, որ մեթոդմիավորման կողմից նախանշված միջոցառումները, հանձնարարականներն ու աշխատանքները կատարվել են սահմանված

ժամկետներում և պատշաճ մակարդակով: Զեկուցողն անդրադարձավ իրականացված մեթոդական, կազմակերպչական և ուսումնական աշխատանքներին՝ ընդգծելով, որ դրանք նպաստել են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, ուսուցիչների մասնագիտական գործունեության կատարելագործմանը և կրթության որակի բարձրացմանը:
Քննարկման ընթացքում արձանագրվեց, որ նախորդ նիստում ընդունված որոշումների մեծ մասը լիարժեք կատարվել է, իսկ իրականացված աշխատանքների արդյունքները համապատասխանում են ակնկալվող նպատակներին և խնդիրներին: Զեկուցողը նաև նշեց, որ առանձին ուղղություններով աշխատանքները շարունակական բնույթ են կրում և կգտնվեն մեթոդմիավորման մշտական ուշադրության կենտրոնում:
Ամփոփելով՝ զեկուցողը փաստեց, որ նախորդ նիստի օրակարգային հարցերով նախատեսված աշխատանքները և ընդունված որոշումները կատարվել են պատշաճ, արդյունավետ և սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:
(զեկուցողներ՝ Մ. Դանիելյան, նախագծային աշխատանքների ղեկավարներ)
Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյանը, նշեց, որ նախագծային ուսուցումը շարունակում է հանդիսանալ հումանիտար առարկաների դասավանդման արդյունավետության բարձրացման կարևորագույն միջոցներից մեկը, այն նպաստում է սովորողների հետազոտական, վերլուծական և ստեղծագործական կարողունակությունների զարգացմանը: Ներկայացվեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից իրականացված նախագծային աշխատանքները: 7-րդ «Ա», «Բ», «Գ» և 8-րդ «Ա»,«Բ»,«Գ» և 9-րդ «Ա», «Բ», «Գ» դասարանների աշակերտները «Հայոց լեզու», «Գրականություն», «Պատմություն» առարկաներից իրականացրել են նախագծային աշխատանքներ: Ընդգծվեց, որ աշակերտների մեծ մասը ցուցաբերել է պատասխանատու մոտեցում, կարողացել են ինքնուրույն աշխատել տեղեկատվական տարբեր աղբյուրների հետ, համադրել փաստերը և ներկայացնել սեփական տեսակետը: Ներկայացված աշխատանքները բավականին հետաքրքիր էին, բազմաբովանդակ և ուսուցանող: Ընտրված թեմաները համապատասխանում էին առարկա յական չափորոշիչներին: Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց հատկապես միջառարկայական նախագծերի վրա, որոնք ավելի արդյունավետ և բովանդակային առումով ավելի հետաքրքիր նախագծեր էին: Բավականին հետաքրքիր էին նաև նախագծային աշխատանքների պրոդուկտները:
2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների ղեկավարները ներկայացրին իրենց հաշվետվությունները: Նախագծային աշխատանքի ղեկավարները հանգամանալից ներկայացրին հաշվետվություններն ու կատարած աշխատանքը և քննարկումների արդյունքում անդրադարձան մի շարք այլ հարցերի, որոնք առաջացել էին աշխատանքների իրականացման ժամանակ:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները
Արտահայտվողները կարևորեցին նախագծային աշխատանքների կազմակերպչական փուլերը, քանի որ հենց այդ ժամանակ են սովորողները դառնում ավելի հետաքրքրված և ներգրավված ուսումնական գործընթացում

և ի հայտ են գալիս աշակերտների կարողություններն ու համագործակցային հնարավորությունները: Ուսուցիչները փոխանակվեցին իրենց փորձով, առաջարկեցին մեթոդական լուծումներ հետագա նախագծերի կազմակերպումն առավել սահուն և արդյունավետ դարձնելու համար: Նախագծային աշխատանքների ղեկավարներն իրենց ներկայացրած հաշվետվությունների մեջ կարևորեցին նախագծային ուսուցման իրականացման համար սովորողների տարիքային առանձնահատկությունների և ֆիզիկական կարողությունների ճիշտ հաշվարկումը և թեմաների ճիշտ ընտրությունը:

Լիլիթ Սարգսյանը կարևորեց այն, որ 2025-2026 ուսումնական տարին երեխաների համար ևս մի փոքր բարդ էր՝ կապված շենքային պայմանների հետ, քանի որ նախագծային աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևողական աշխատանք և ունենալ ավելի հարմար և լավ պայմաններ, որը թույլ կտա իրականացնել հետաքրքիր և յուրօրինակ նախագծային աշխատանքներ ու ստանալ տեսանելի պրոդուկտներ: Նա նշեց խմբերի կազմման հետևողական աշխատանքների մասին՝ անհրաժեշտ համարեց նշել, որ այս ուսումնական տարում խմբերում առավելագույնը ընդգրկվել էին 7 աշակերտ: Կատարված փոփոխության արդյունքում ավելի շատ ժամանակ տրամադրվեց աշխատանքների համակարգման և անհատական խորհրդատվություններ իրականացնելու համար:

Ռուզաննա Խաչատրյանը կարևորեց այն, որ 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջառարկայական նախագծային աշխատանքները նորություն էին և բավականին հետաքրքիր էր աշխատել նաև այդ կերպ: Այն հնարավորություն է տալիս գործնական հմտություններ զարգացնել. կատարում են հետազոտություններ, տվյալների վերլուծություն ներ, զարգացնում են նորարական մտածողություն և ինքնուրույն խնդիրների լուծման հմտություններ՝ տարբեր առարկաների շրջանակներում:

Արտահայտվողները նշեցին, որ նախագծի մեջ կարևոր դեր է խաղում քայլերի կատարման ճիշտ ընտրությունը՝ թեմայի ընտրություն, նպատակի և հարցերի սահմանում, տեղեկատվության որոնում ու վերլուծություն, աշխատանքի պլանավորում և իրականացում, արդյունքների ներկայացում, ինքնավերլուծություն և հետադարձ կապ: Իրականացված աշխատանքները փաստեցին, որ աշխատանքի ընթացքում միշտ չէ, որ ամեն ինչ ընթանում է պլանավորվածին համապատասխան: Այս դեպքում ուսուցիչները պետք է ուղղորդեն, օգնեն, քանի որ առաջացած հարցերի պատասխանները ի հայտ են գալիս նախագծի իրականացման ընթացքում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունները:

Լսեցին 4. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 2-րդ կիսամյակում տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների վերլուծությունը: Նա նշեց, որ աշխատանքները տրվել են սահմանված ժամանակացույցով՝ պարզելու աշակերտների ընթացիկ պատրաստվածությունը և չափորոշչային պահանջների կատարումը: Գրավոր աշխատանքները տնօրենության կողմից տրվել են «Հայոց լեզու» («Մայրենի») առարկայից: Արաքսյա Առստամյանը նշեց արդյունքների քննարկման անհրաժեշտության ու վերլուծության կարևորություն մասին, կարևորեց աշակերտների կողմից ինքնուրույն աշխատելու փորձը և ուսուցիչների կողմից գրավորների ստուգման մեթոդները, քանի որ անկողմնակալ մոտեցումը թույլ է տալիս պարզել եղած

դժվարություններն ու խնդիրները:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Սարգիսջանյանը, Ս. Հարությունյանը:

Արտահայտվողներն անհրաժեշտ համարեցին՝ լեզվի իմացության մակարդակի բարձրացման հարցում կիրառել այնպիսի հնարներ ու մեթոդներ, որոնք միտված կլինեն ոչ միայն դասի արդյունավետության բարձրացմանը, այլ նաև աշակերտների ինքնուրույն և առանց աջակցության աշխատելու կարողությունների զարգացմանը:

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ անհրաժեշտ է աշխատանքները կազմակերպել ամբողջ տարվա ընթացքում և կարևորեց տարբեր տեսակի գրավոր աշխատանքների միջոցով ուղղագրության, կետադրության և լեզվական հմտությունների սովորեցումն ու թեստերի հետ աշխատանքներ իրականացնելու հմտությունների զարգացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների արդյունքները (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈւԴԱՏՊ) մայիս ամսվա իրականացված աշխատանքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով (ՈւԴԱՏՊ) մայիս ամսվա համար նախատեսված և իրականացված աշխատանքների հաշվետվությունը: Նշվեց, որ մայիս ամսվա ընթացքում հաջողությամբ ավարտվել, ստուգվել և ամփոփվել են նախատեսված բոլոր աշխատանքները: Հաշվետու ժամանակահատվածում հումանիտար առարկաների մասնախմբի կողմից կազմակերպվել են հետևյալ աշխատանքները.

1.Վերահսկվել է ուսումնական ծրագրերի կատարողականը;

2.Կազմակերպվել և անցկացվել են տնօրենության գրավոր աշխատանքներ, ամփոփիչ աշխատանքներ:

3.Իրականացվել է դասալսումների և դասերի դիտարկումների գործընթացը:

4.Ուշադրություն է դարձվել սովորողների առաջադիմության և հաճախումների վերահսկմանը:

5.Ամփոփվել են ավարտական և փոխադրական քննությունների նախապատրաստական աշխատանքները:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Արտահայտվողները բարձր գնահատեցին կատարված աշխատանքները և ընդգծեցին, որ օրակարգում ներառված բոլոր միջոցառումների, հանձնարարականների և որոշումների իրականացումը միտված է ուսումնական և դաստիարակչական գործընթացների առավել արդյունավետ կազմակերպմանը, կրթության որակի շարունակական բարելավմանը և դպրոցի զարգացման ռազմավարական նպատակների իրականացմանը:

Նրանք նշեցին, որ կատարված աշխատանքները նպաստում են սովորողների կրթական կարիքների առավել արդյունավետ բավարարմանը, ուսուցիչների մասնագիտական գործունեության կատարելագործմանը, ինչպես նաև կրթական միջավայրի բարելավմանն ու զարգացմանը: Արտահայտվողները կարևորեցին նման հետևողական և նպատակային աշխատանքների շարունակական իրականացումը՝ համոզմունք հայտնելով, որ դրանք դրական ազդեցություն կունենան ուսումնական գործընթացի արդյունավետության, սովորողների առաջադիմության և դպրոցի ընդհանուր գործունեության արդյունքների վրա:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն՝ 2025-2026 ուսումնական տարվա մայիս ամսվա ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարողականը:

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության իրականացման ընթացքում արձանագրված բացթողումներն ու թերությունները: Նա նշեց, որ այս ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների կողմից հիմնական աշխատանքները կատարվել են ժամանակին և պատշաճ: Նախագծային աշխատանքների գնահատումները և թեմաները ևս լրացվել են ըստ կարգի: Ամփոփելով մատենավարության ստուգման արդյունքները՝ մ/մ նախագահ Մերի Դանիելյանը նշեց, որ ընթացիկ ուսումնական տարում ուսուցիչների կողմից արձանագրված թերություններն էապես նվազել են՝ համեմատած նույնիսկ առաջին կիսամյակի հետ:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Առստամյանը

Ընդգծվեց, որ մատենավարության գործընթացում առանցքային է յուրաքանչյուր ուսուցչի անհատական ու պատասխանատու մոտեցումը: Նշվեց, որ ընթացիկ ստուգումների արդյունքում որոշ թերություններ դեռ արձանագրվում են, սակայն ու կարևոր է հետևողական վերահսկողություն իրականացնել ուսուցիչների առօրյա աշխատանքի նկատմամբ: Առկա խնդիրները պետք է ժամանակին բացահայտվեն, քննարկվեն և վերանայվեն՝ թույլ չտալու համար դրանց խորացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը:

Լսեցին 7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբերի հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում՝ հոկտեմբերից դեկտեմբեր ամիսներին, կազմակերպվել է երկարօրյա ուսուցման խմբակ 2-4-րդ և 5-րդ, 7-րդ դասարանների աշակերտների համար: Աշակերտների ընդգրկումը երկարօրյա խմբերում իրականացվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի 16-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի հիման վրա: Ըստ սահմանված կարգի՝ 2-4-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններից ընդգրկվել են այն աշակերտները, որոնք առաջադիմության բնութագրող գնահատման, ձևավորող և ամփոփիչ գնահատման հիման վրա, ինչպես նաև ուսուցիչների դիտարկման արդյունքում ցուցաբերել են ցածր արդյունքներ:

Զեկուցողը հավելեց, որ իր կողմից պարբերաբար իրականացվել են ընթացիկ դիտարկումներ, և արձանագրված աշխատանքների արդյունքները գնահատվում են գոհացուցիչ:

Բացի այդ, զեկուցողը ներկայացրեց նաև 2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում՝ փետրվարից մայիս ամիսներին, իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ընդգծելով դասապրոցեսի պատշաճ կազմակերպման, արդյունավետ անցկացման և արդյունքների կարևորությունը: Կարևորվեց նաև երկարօրյա ուսուցման խմբերի ուսուցիչների կողմից ներկայացված հաշվետվությունների դերը, որոնց շնորհիվ ամփոփվեցին իրականացված աշխատանքներն ու արձանագրված արդյունքները ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Ներկայացվեց, որ ուսումնական տարվա ավարտին ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվել է երկարօրյա խմբակի կազմակերպման և իրականացման գործընթացի վերահսկողություն, ուսումնասիրվել են կիրառվող փաստաթղթերը, հրամանները: Արդյունքները գոհացուցիչ էին,

իրականացված աշխատանքները՝ ըստ չափորոշչային պահանջների (կցվում է 2025-2026 ուսումնական տարվա երկարօրյա ուսուցման կազմակերպման աշակերտների անվանացանկը (հոկտեմբեր-մայիս)):

Արտահայտվեցին՝ Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները

Երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչները հանգամանալից ներկայացրին իրենց հաշվետվությունները, անդրադարձան իրականացման ընթացքում առաջացած խնդիրներին, ձեռքբերումներին ու արդյունքներին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված երկարօրյա ուսուցման խմբակների ուսուցիչների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №12

«26» հունիս 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Մերի Դանիելյան (մ/մ նախագահ)
2. Անուշ Սարգիսջանյան
3. Սոնա Հարությունյան
4. Լիլիթ Սարգսյան
5. Ռուզաննա Խաչատրյան
6. Շահանե Հովսեփյան

Նիստին ներկա էր տնօրեն՝ Սերգեյ Ավանեսյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական՝ Արփինե Ծատրյանը, հումանիտար ուղղվածությամբ խմբակների ղեկավարներ, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը:

Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
3. 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)
6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ ՄՄ անդամներ)
7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
8. 2026-2027 ուսումնական տարվա ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն դպրոցի տնօրենին:
(զեկուցողներ՝ Մ. Դանիելյան)
9. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝Ա. Գևորգյան)
10. «Ծրագրերի կատարողականի ստուգում ըստ թեմատիկ պլանի» ՆԴՎ արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)
11. Հումանիտար առարկաների մեթոդական միավորումների անվան փոփոխություն:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)
12. «Հայոց լեզու» առարկայի դասաժամերի ընթացքում դասարանների խմբերի բաժանում:
(զեկուցող՝ Մ. Դանիելյան)
13. 2026-2027 ուսումնական տարում գնահատման կարգի փոփոխության քննարկում:
(զեկուցող՝ Մ.Դանիելյան)
14. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքը:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Լսեցին 1. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Հումանիտար առարկաների մեթոդմիավորման 12-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների վերլուծությունը՝ անդրադառնալով յուրաքանչյուր առարկայի ցուցանիշներին, սովորողների առաջադիմության մակարդակին, բարձր և բավարար արդյունքներ արձանագրած սովորողների թվին, ինչպես նաև դժվարություններին: Նշվեց, որ քննություններն անցկացվել են ՀՀ ԿԳՄՄՆ կողմից սահմանված կարգի և ժամանակացույցի համաձայն՝ ապահովելով թափանցիկ, կազմակերպված և արդար ընթացք: Զեկուցողը նշեց, որ ընդհանուր առմամբ քննությունների արդյունքները գոհացուցիչ են. աշակերտների մեծ մասը ցուցաբերել է բավարար գիտելիքներ և կարողություններ, հաղթահարել է պահանջվող շեմը, որոշ դեպքերում արձանագրվել են նաև բարձր արդյունքներ: Այնուամենայնիվ, առկա են մի շարք խնդիրներ՝ հատկապես էսսեագրության հետ կապված: Զեկուցողը կարևորեց նպատակային և հետևողական աշխատանքը՝ ոչ միայն առարկայական առաջադիմության, այլ նաև մտածողության զարգացման, ստեղծագործական մտքի զարգացման ուղղությամբ: Արդյունքների բարելավման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել քննությունների ձևաչափին և աշակերտների գիտակցական մակարդակի բարձրացմանը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Արտահայտվողները կարևորեցին ուսուցիչների կողմից կիրառված արդի մեթոդների, համագործակցային ուսուցման, նախագծային աշխատանքների, քննարկումների, բանավեճերի և տարբեր ձևաչափերի գնահատման արդյունավետությունը, որոնք նպաստել են սովորողների քննադատական մտածողության, ստեղծագործական և հաղորդակցական կարողությունների և առարկայական գիտելիքների զարգացմանը:Կարևորվեց բացթողումների արձանագրումը, առաջացած խնդիրների շուրջ քննարկումները: Նշվեց, որ որոշ դեպքերում նկատվել են նյութի վերլուծական ընկալման, գրավոր խոսքի ձևակերպման, ժամանակի արդյունավետ բաշխման և փաստարկված պատասխաններ կառուցելու հետ կապված խնդիրներ: Կարևորվեց 2026-2027

ուսումնական տարում ավարտական քննությունները բարձր մակարդակով անցկացնելու համար առավել նպատակային և համակարգված աշխատանքների իրականացումը: Անհրաժեշտ է քննություններին պատրաստման միասնական մոտեցումներ մշակել և ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցներն ու հնարները, աշակերտների մոտ պատասխանատվության բարձր արդյունքների հասնելու համար: 2026-2027 ուսումնական տարում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել ինտեգրված էսսե գրելու կարողությունների և ստեղծագործական մտքի զարգացմանն ուղղված աշխատանքներին:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 9-րդ դասարանների ավարտական քննությունների արդյունքների մասին տեղեկատվությունը (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 4. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում հումանիտար առարկաների մասնախմբի ուսուցիչների կողմից կազմակերպված բաց դասերի, բաց դաս-միջոցառումների ամփոփ կատարողականը: Նշեց, որ այս ուսումնական տարվա ընթացքում բաց դասերի, միջոցառումների, բաց դաս-միջոցառումների կատարողականը թերի է եղել: Գլխավոր խնդիրը շենքային պայմաններն էր և երկհերթ դասապրոցեսի իրականացումը: Նշվեց, որ կազմակերպված բաց դասերը նպատակաուղղված են եղել սովորողների գիտելիքների խորացմանը, ստեղծագործական և հաղորդակցական կարողությունների զարգացմանը, ազգային և համամարդկային արժեքների ձևավորմանը, ինչպես նաև ուսուցման արդյունավետ մեթոդների կիրառմանը:

Արտահայտվեցին՝ Ռ. Խաչատրյանը, Լ. Սարգսյանը:

Ռուզաննա Խաչատրյանը ընդգծեց, որ բաց դասերը կազմակերպվել են ժամանակակից մանկավարժական մոտեցումների, ակտիվ և համագործակցային ուսուցման մեթոդների կիրառմամբ՝ նպաստելով փորձի փոխանակմանը, մասնագիտական աճին և ուսուցման որակի բարձրացմանը:

Լիլիթ Սարգսյանը նշեց, որ նման նախաձեռնությունները նպաստում են մանկավարժական փորձի տարածմանը, մասնագիտական համագործակցության ամրապնդմանը և կրթական գործընթացի շարունակական կատարելագործմանը: Կարևորեցին աշակերտների ինքնագնահատման և փոխադարձ գնահատման գործընթացները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների մասին զեկուցումը:

Լսեցին 5. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)

Արմիդա Գևորգյանը կարևորեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների աշխատանքը նշելով, որ եղել են դեպքեր, երբ որոշ խմբավարներ խմբակները սահմանված օրերում չեն իրականացրել: Գևորգյանն անդրադարձավ նաև խմբակների մատենավարությանը, նշեց, որ և՛ ընթացքում, և՛ ամփոփման ժամանակ արձանագրվել են թերություններ:

Խմբավարները ներկայացրին 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից իրականացված աշխատանքները:

Գևորգյանը անդրադարձավ ուսումնական տարվա ընթացքում

իրականացված դիտարկումներին, որոնք իրականացվել են խմբակների դասերի ընթացքում: Շեշտեց, որ հիմնականում արդյունքները գոհացուցիչ են, սակայն առկա են խմբակներ, որոնք պատշաճ չեն իրականացվել և արդյունքները պետք է հաշվի առնել 2026-2027 ուսումնական տարում խմբակների ժամերը բաշխելու ժամանակ, ինչպես նաև հավելեց, որ որոշ խմբակներում աշակերտների մասնակցությունն ու հետաքրքրվածությունն էլ ավելի բարձր է, քան մյուսներում:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց խմբակների գործունեության արդյունքները, ինչպես նաև շեշտեց, որ անհրաժեշտ է վերլուծել խմբակների գործունեությունը, դուրս բերել խնդիրները և հաջորդ ուսումնական տարիներին աշխատել այնպես, որ այդ խնդիրներն այլևս չկրկնվեն:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների մասին զեկուցումը:

Լսեցին 6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան, ՄՄ անդամներ)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման անդամները գործունեություն են ծավալել տարեկան պլանին համապատասխան՝ ապահովելով ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը, դասավանդման որակի բարձրացումը և կրթական չափորոշիչների պահանջների իրականացումը: Մեթոդմիավորման նախագահը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները, արձանագրված հաջողություններն ու բացթողումները, ինչպես նաև ուսումնական տարվա սկզբում հաստատված ժամանակացույցին համապատասխան իրականացված և չիրականացված աշխատանքները:

Մեթոդմիավորման անդամ ուսուցիչները ներկայացրին անհատական հաշվետվությունները, որոնցում արտացոլված էին ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքներն ու խնդիրները, ամփոփեցին արդյունքները: ՄՄ անդամները կարևորեցին համագործակցային աշխատանքների դերը, փորձի փոխանակման արդյունավետությունը և ուսումնական գործընթացի շարունակական կատարելագործման անհրաժեշտությունը: Ուսուցիչները մանրամասն ներկայացրին նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կատարված աշխատանքները:

Արտահայտվեցին՝ Ա. Սարգիսջանյանը, Ռ. Խաչատրյանը:

Արտահայտվողները կարևորեցին ծավալված քննարկումները և մեթոդմիավորման նիստում հաշվետվությունների վերլուծությունը: Կարևորվեց նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կատարված աշխատանքների վերլուծությունը, ուսուցիչ, ուսուցչի օգնական կապը: Նշվեցին տարվա ընթացքում առաջացած խնդիրները կապված ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման անդամների կողմից իրականացված աշխատանքների հաշվետվությունների մասին զեկուցումը:

Լսեցին՝7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփ հաշվետվությունը՝ անդրադառնալով դասալսումների նպատակներին, ընթացքին և արձանագրված արդյունքներին: Նշվեց, որ ուսումնական տարվա ընթացքում

իրականացվել են պլանավորված և փոխադարձ դասալսումներ, որոնց նպատակն էր ուսումնասիրել դասավանդման արդյունավետությունը, ժամանակակից մանկավարժական մեթոդների կիրառումը, գնահատման գործընթացի կազմակերպումը, ինչպես նաև սովորողների ակտիվ մասնակցության ապահովումը դասերին: Կարևորվեց նաև քննարկված արձանագրությունների արդյունքները: Կատարված դասալսումները փաստում են, որ յուրաքանչյուր լավ պլանավորված դասի ընթացքում ևս առաջանում են խնդիրներ, որոնք պահանջում են լուծումներ: Կարևորվեց նաև այն, որ դասալսումները ծառայել են ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Զեկուցողը նշեց նաև հաջողված դասերի մասին: Կարևորվեց նաև դասալսումներին տնօրեն Սերգեյ Ավանեսյանի, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանի, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանի, մեթոդմիավորման մյուս ուսուցիչների, ինչպես նաև մյուս մեթոդմիավորումների անդամների մասնակցությունը և դրանց արդյունքում ծավալված քննարկումները:

Արտահայտվեցին՝ Ս. Ավանեսյանը, Ա. Առստամյանը:

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ուսուցիչների միջև փորձի փոխանակումը, մասնագիտական համագործակցության զարգացումը և դասավանդման որակի շարունակական բարելավումը: Նա նշեց, որ դասալսման ընթացքում ուսուցիչը դիտարկում է տարբեր մեթոդներ, նոր մոտեցումներ, որոնք կարող է կիրառել իր դասավանդման մեջ, որն էլ կխթանի տվյալ ուսուցչի ինքնազարգացումը՝ ըստ անհրաժեշտության: Դասալսումները կարող են լինել համագործակցային գործընթացներ, որտեղ ուսուցիչները սովորում են միմյանցից և զարգացնում միասնական որակական չափանիշներ:

Արաքսյա Առուստամյանը նշեց, որ ուսուցիչների մեծ մասը արդյունավետորեն կիրառում է աշակերտակենտրոն ուսուցման մեթոդներ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, համագործակցային աշխատանքի ձևեր և տարբերակված ուսուցման մոտեցումներ: Կարևորվեց, որ դասերի ընթացքում ապահովվել է սովորողների ակտիվ ներգրավվածությունը, ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը և կրթական չափորոշիչների պահանջների իրականացումը: Արտահայտվողները կարևորեցին կազմակերպված քննարկումները, որոնք ևս օգնում են դասի արդյունավետության բարձրացմանը, թերությունների շտկմանը և փորձի փոխանակմանը: Դիտողություններն էլ արվում են միայն թերությունները շտկելու և ավելի բարձր արդյունքներ արձանագրելու համար: Միաժամանակ մատնանշվեցին որոշ դժվարություններ և կատարելագործման ենթակա ուղղություններ, որոնց հաղթահարման նպատակով առաջարկվեցին համապատասխան քայլեր:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին՝8. 2026-2027 ուսումնական տարվա ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխման և տնօրենին առաջարկություն ներկայացնելու մասին հարցը:

(զեկուցողներ՝ Մ. Դանիելյան)

Զեկուցող Մերի Դանիելյանը ներկայացրեց 2026-2027 ուսումնական տարվա դասաժամերի նախնական բաշխման նախագիծը՝ հիմնված հաստատության ուսումնական պլանի, դասարանների թվի, առարկայական ծանրաբեռնվածության, մանկավարժների մասնագիտական պատրաստվածության և գործող նորմատիվ պահանջների վրա, ինչպես նաև հիմք ընդունելով դպրոցի կանոնադրության 87-րդ կետի 10-րդ ենթակետը, նաև կանոնադրության օրինակելի ձևի փոփոխության 93-րդ կետի 5-րդ ենթակետը:

Զեկուցողը նշեց, որ դասաժամերի նախնական բաշխումը կատարվել է արդարության, արդյունավետության և ուսումնական գործընթացի անխափան կազմակերպման սկզբունքների պահպանմամբ՝ հաշվի առնելով իրավական պահանջներն ու փաստաթղթերը, առաջնորդվելով հաստատության շահերով և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման պահանջով: Զեկուցողներն առաջարկեցին վերջնական հաստակեցումներից հետո օգոստոսյան առաջին նիստի ընթացքում քննարկել 5-9-րդ դասարանների դասաժամերի բաշխումը, շեշտեցին, որ կլինեն ոչ միայն ժամաքանակի հետ կապված փոփոխություններ, այլ նաև կփոխվի առարկայացանկը:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Արտահայտվողներն անդրադարձան ներկայացված նախնական ժամաբաժանմանը՝ կարևորելով ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպումը և դասաժամերի հավասարակշռված բաշխումը: Անդամները նաև ընդգծեցին, որ ժամաբաժանման վերջնական տարբերակը կարող է ճշգրտվել՝ հաշվի առնելով նոր ուսումնական տարվա ընթացքում առաջացող անհրաժեշտություններն ու փոփոխությունները:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2026-2027 ուսումնական տարվա դասաժամերի նախնական բաշխումը և տնօրենին ներկայացնել առաջարկություն (կցվում է):

Լսեցին՝9. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով (ՈՒԴԱՏՊ) իրականացված աշխատանքների հաշվետվությունները: Նշվեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նախատեսված միջոցառումները, առարկայական և դաստիարակչական բնույթի նախաձեռնությունները, բաց դասերը, նախագծային աշխատանքները, հայրենասիրական, մշակութային և ճանաչողական միջոցառումները, ինչպես նաև աշխատանքներ են տարվել սովորողների արժեհամակարգի ձևավորման, ուսումնական առաջադիմության բարձրացման և ակտիվ մասնակցության խթանման ուղղությամբ:

Արտահայտվեցին՝ Ս.Ավանեսյանը, Ա.Սարգիսջանյանը:

Արտահայտվողները կարևորեցին ուսուցիչների նախաձեռնողականությունը և նախատեսված միջոցառումների նպատակային իրականացումը: Նշվեց, որ կատարված աշխատանքները նպաստել են սովորողների կրթական, մշակութային և հայրենասիրական դաստիարակությանը, ինչպես նաև ստեղծագործական և հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ աշխատանքների հաշվետվությունները, կատարված աշխատանքների արդյունքները (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

Լսեցին՝10. «Ծրագրերի կատարողականի ստուգում ըստ թեմատիկ պլանի» ՆԴՎ արդյունքների մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցող Մերի Դանիելյանը ներկայացրեց իրականացված ներդպրոցական վերահսկողության արդյունքները:Նշվեց, որ ուսումնասիրության շրջանակում ստուգվել են 5-9-րդ դասարանների թեմատիկ պլանները, էլեկտրոնային մատյանների գրանցումները, ծրագրային նյութի կատարողականը, ինչպես նաև գործնական և գրավոր աշխատանքների իրականացումը:

Արտահայտվեցին՝ ՄԽ անդամները

Քննարկման ընթացքում արձանագրվեց, որ ուսուցիչների մեծ մասը ուսումնական գործընթացը կազմակերպել է հաստատված թեմատիկ

պլաններին համապատասխան: Դասամատյաններում հիմնականում պահպանվել են թեմաների հերթականությունը, նախատեսված ժամաքանակները և գնահատման ձևերը:
Արաքսյա Առստամյանը նշեց, որ առանձին դեպքերում արձանագրվել են թեմաների անցկացման ժամկետների շեղումներ, որոնք պայմանավորված են եղել դասաժամերի կորստով, սովորողների կողմից որոշ թեմաների դժվար յուրացմամբ: Նա ընդգծեց, որ այդ փոփոխությունները ոչ բոլոր դեպքերում են ժամանակին արտացոլվել թեմատիկ պլաններում և էլեկտրոնային մատյաններում:
Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև գնահատման գործընթացին: Նշվեց, որ մի շարք ուսուցիչներ գրավոր և գործնական աշխատանքների արդյունքները ժամանակին մուտքագրել են էլեկտրոնային մատյան, սակայն առանձին դեպքերում բացակայել են թեմատիկ պլաններում կատարված փոփոխությունների մասին նշումները:
Մեթոդմիավորման անդմները կարևորեցին թեմատիկ պլանների, դասամատյանների և փաստացի դասավանդման միջև ամբողջական համապատասխանության ապահովումը՝ որպես ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման կարևոր պայման:

Որոշեցին՝ 1.Արձանագրել, որ «Ծրագրերի կատարողականի ստուգում ըստ թեմատիկ պլանի» ներդպրոցական վերահսկողության արդյունքներով ուսուցիչների մեծ մասը ուսումնական գործընթացը կազմակերպել է հաստատված թեմատիկ պլաններին համապատասխան:
2.Հանձնարարել ուսուցիչներին թեմատիկ պլաններում կատարված ցանկացած փոփոխություն և շեղում ժամանակին արձանագրել էլեկտրոնային մատյաններում և համապատասխան փաստաթղթերում:
3.Հանձնարարել մասնախմբի ղեկավարներին յուրաքանչյուր ամսվա ավարտին իրականացնել թեմատիկ պլանների և դասամատյանների համապատասխանության ընթացիկ վերահսկողություն:
4.Ուսումնասիրության արդյունքները համարել բավարար և ներկայացնել դպրոցի տնօրենի հաստատմանը:

Լսեցին՝11. Հումանիտար առարկաների մեթոդմիավորման անվան փոփոխության մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Մեթոդմիավորման նախագահը տեղեկացրեց, որ 2026 թվականին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից կատարված փոփոխությունների համաձայն՝ վերանայվել է հումանիտար մեթոդմիավորման անվանումը: Նշվեց, որ անվանափոխությունը պայմանավորված է ոլորտի կազմակերպման նոր մոտեցումներով և նպատակ ունի առավել հստակ արտացոլել մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների շրջանակն ու գործունեության ուղղությունները: Նոր ուսումնական տարվանից հումանիտար առարկաների մեթոդմիավորումը վերանվանվելու է «Հայոց լեզվի և գրականության, հայրենագիտության, հասարակության և հասարակական գիտությունների» մեթոդմիավորում (այսուհետ՝ ՀԼԳՀՀՀԳ):

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Մեթոդմիավորման անդամները քննարկեցին իրականացված փոփոխությունները և ընդգծեցին, որ նոր անվան կիրառումը կնպաստի փաստաթղթերի վարման միասնականությանը և կրթական պահանջներին համապատասխան գործունեության իրականացմանը: Անդամները պատրաստակամություն հայտնեցին իրենց հետագա աշխատանքները կազմակերպել նոր անվանման և սահմանված պահանջների շրջանակներում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն ՀՀ ԿԳՄՄՆ կողմից իրականացված հումանիտար առարկաների մեթոդմիավորման անվան փոփոխությունը և հետագա

գործունեության ընթացքում առաջնորդվել նոր անվամբ՝ «Հայոց լեզվի և գրականության, հայրենագիտության, հասարակության և հասարակական գիտությունների» մեթոդմիավորում (այսուհետ՝ ՀԼԳՀՀՀԳ):

Լսեցին՝12. «Հայոց լեզու» առարկայի դասաժամերի ընթացքում դասարանների խմբերի բաժանման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ. Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց 2026-2027 ուսումնական տարում «Հայոց լեզու» առարկայի դասաժամերի ընթացքում դասարանները խմբերի բաժանելու անհրաժեշտության և նպատակահարմարության մասին: Նշվեց, որ խմբային ուսուցման կազմակերպումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնել ուսումնական գործընթացը, ապահովելով յուրաքանչյուր սովորողի ակտիվ մասնակցությունը, անհատական մոտեցումը և կրթության որոկի բարձրացումը: Կարևորվեց հատկապես գրավոր և բանավոր խոսքի զարգացման, լեզվական կարողությունների ձևավորման և գործնական աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը փոքր խմբերում աշխատելու պայմաններում:
Զեկուցողն առաջարկեց 7-9-րդ դասարաններում «Հայոց լեզու» առարկայի դասաժամերը, այն դեպքում, երբ տվյալ դասարանում սովորողների թիվը 20 և ավելի է, դասարանը բաժանել երկու հավասար խմբի, այդպիսով հնարավորություն տալով առարկայի ուսուցումն իրականացնել ավելի փոքր խմբերով, որը միանշանակ արդյունավետ կլինի և հնարավորություն կտա սովորողներին պատշաճ կերպով նախապատրաստել ոչ միայն 9-րդ դասարանի ավարտական քննություններին, այլ նաև կօգնի, որպեսզի սովորողները բարձր ակտիվություն ցուցաբերեն և արդյունքներ գրանցեն առարկայական օլիմպիադաներում և այլ կրթական նախաձեռնություններում:
Զեկուցողը նշեց նաև, որ 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում հանրակրթական հիմնական (ընդհանուր (այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների սովորողների համար ուսուցում կազմակերպող), մասնագիտացված եվ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 1-11-րդ դասարաններում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույցի 5-րդ կետի համաձայն հաստատության 2-9-րդ դասարաններում «Օտար լեզու»-1, «Օտար լեզու»-2, 2-11-րդ դասարաններում «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» (այսուհետ՝ ԹԳՀԳ) (համակարգչային դասարանի առկայության դեպքում), ինչպես նաև 7-11-րդ դասարաններում «Հայոց լեզու» առարկաների դասաժամերին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 և ավելի է:
6-րդ կետի համաձայն «Տեխնոլոգիա» առարկայի (5-6-րդ դասարաններ) պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե սովորողների թիվը 20 և ավելի է:

Արտահայտվեցին՝ Շ. Հովսեփյանը, Ա. Սարգիսջանյանը, Լ. Սարգսյանը:

Արտահայտվողներն ընդգծեցին, որ դասարանների խմբերի բաժանումը կնպաստի սովորողների գիտելիքների առավել խորքային յուրացմանը, ուսուցչի կողմից յուրաքանչյուր սովորող առաջադիմության և կարիքների նկատմամբ առավել նպատակային ուշադրության դրսևորմանը, ինչպես նաև կբարձրացնի դասերի արդյունավետությունն ու սովորողների ներգրավվածությունը:
Լիլիթ Սարգսյանը նշեց, որ խմբային ուսուցումը հատկապես կարևոր է լեզվական հաղորդակցական կարողությունների, ընթերցանության, գրավոր աշխատանքների և ստեղծագործական առաջադրանքների իրականացման ժամանակ:
ՄՄ անդամները նշեցին, որ առաջարկությունն իսկապես տեղին է և տարիների փորձը ցույց է տվել, որ նման սկզբունքով աշխատանքն

արդյունավետ է:

Որոշեցին՝ 1. Հիմք ընդունելով գործող կարգավորումներն ու ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը՝ 2026-2027 ուսումնական տարում «Հայոց լեզու» առարկայի դասաժամերի ընթացքում խմբերի բաժանել այն դասարանները, որոնցում սովորողների թիվը կազմում է 20 և ավելի:

2. Ներկայացնել համապատասխան առաջարկությունը մանկավարժական խորհրդի նիստի ընթացքում:

Լսեցին՝13. 2026-2027 ուսումնական տարում գնահատման կարգի փոփոխության քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Մ.Դանիելյան)

Զեկուցողը ներկայացրեց 2026-2027 ուսումնական տարում հանրակրթության պետական չափորոշչի համաձայն գնահատման կարգում կատարված փոփոխությունները: Նշվեց, որ 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում բոլոր առարկաների, ինչպես նաև «Ֆիզկուլտուրա», «Անվտանգ կենսագործունեություն», «Արվեստ», «Երաժշտություն», «Կերպարվեստ», «Արհեստ» առարկաներից 5-12-րդ դասարաններում միավորային գնահատում չի իրականացվելու: Սովորողի ձեռքբերումների գնահատումն իրականացվելու է բնութագրման միջոցով, իսկ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին գնահատման արդյունքները արտացոլվելու են սովորողի առաջադիմության բնութագրում:

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամներ

Մեթոդմիավորման անդամները կարևորեցին գնահատման նոր մոտեցումների լիարժեք և միասնական կիրառումը՝ նշելով, որ դրանք միտված են սովորողի անհատական առաջընթացի, կարողությունների և հնտությունների առավել ամբողջական գնահատմանը: Ընդգծվեց, որ բնութագրային գնահատման համակարգը կնպաստի սովորողների մոտիվացիայի բարձրացմանը, ինքնագնահատման կարողությունների զարգացմանը և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Առաջարկվեց կազմակերպել իրազեկման աշխատանքներ ուսուցիչների, սովորողների և ծնողների շրջանում՝ ապահովելով նոր կարգի պատշաճ իրականացումը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2026-2027 ուսումնական տարում գնահատման կարգում կատարված փոփոխությունները:

Լսեցին՝14. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Ներառական կրթության համակարգող, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը զեկուցեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում ԿԱՊԿՈՒ սովորողների հետ իրականացվող աշխատանքներն ընթանում են հաստատված անհատական ուսուցման պլաններին (ԱՈՒՊ) և սահմանված ժամանակացույցին համապատասխան և ներկայում աշխատանքներն ամփոփվել են:

Զեկուցողը նշեց, որ յուրաքանչյուր սովորողի անհատական առաջընթացը պարբերաբար գնահատվել և մշտադիտարկվել է: ԱՈՒՊ-երով սահմանված նպատակների գերակշիռ մասը հաջողությամբ իրականացվել և հաղթահարվել է: Այն նպատակները, որոնք ամբողջությամբ չեն հաղթահարվել, քննարկվել են մշտադիտարկման հանդիպումների ընթացքում, վերանայվել՝ հաշվի առնելով սովորողների կրթական կարիքներն ու առաջընթացը, համապատասխան փոփոխություններ են կատարվել ԱՈՒՊ-երում և արձանագրվել են սահմանված փաստաթղթերում:

Արփինե Ծատրյանը նաև տեղեկացրեց, որ 4-րդ և 9-րդ դասարաններում

սովորող բոլոր ԿԱՊԿՈՒ աշակերտները, ծնողների կողմից ներկայացված դիմումների հիման վրա և գործող կարգի պահանջներին համապատասխան, ազատվել են ավարտական քննություններից։

Զեկուցողը կարևորեց ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական գործընթացի շարունակական մշտադիտարկումը, բազմամասնագիտական համագործակցությունը և յուրաքանչյուր սովորողի անհատական կրթական կարիքներին համապատասխան աշխատանքի կազմակերպումը՝ որպես ներառական կրթության արդյունավետ իրականացման կարևոր նախապայման։

Արտահայտվեցին՝ ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին ուսուցիչների և ուսուցչի օգնականների միջև արդյունավետ և շարունակական համագործակցության ապահովումը՝ որպես ներառական կրթության հաջող իրականացման կարևոր նախապայման։ Նշվեց, որ անհատական ուսուցման պլանների (ԱՈւՊ) պահանջներին համապատասխան սովորողների հետ աշխատանքը պետք է կազմակերպվի նպատակային, համակարգված և հետևողական կերպով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի անհատական կրթական կարիքները։ Ընդգծվեց, որ ԱՈւՊ-ների իրականացումը չպետք է կրի ձևական բնույթ, այլ պետք է միտված լինի սովորողների իրական առաջընթացի ապահովմանը, նրանց կրթական ներառման արդյունավետությանը և անհրաժեշտ աջակցություն տրամադրելուն։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների մասին տեղեկատվությունը։

Մ/Մ նախագահ՝ Մ. Դանիելյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների ամփոփման

2025-2026 ուսումնական տարվա ընթացքում *Հումանիտար առարկաների մեթոդմիավորումը* գումարել է *12 նիստ*, որոնց համար կազմվել է *12 արձանագրություն:*

Հումանիտար առարկաների մեթոդմիավորման նիստերի տվյալները՝ ստորև.

№	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	1	25.08.2025	13
2	2	30.09.2025	8
3	3	24.10.2025	8
4	4	28.11.2025	6
5	5	25.12.2025	16
6	6	03.02.2026	9
7	7	27.02.2026	9
8	8	27.03.2026	9
9	9	22.04.2026	11
10	10	05.05.2026	2
11	11	29.05.2026	7
12	12	26.06.2026	14

Հումանիտար առարկաների մեթոդմիավորման սույն արձանագրությունների մատյանը կազմված է *96* էջից։

Մ/Մ նախագահ՝ _____ Մ. Դանիելյան

_____

«26» հունիսի 2026թ.